

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

GAVAR STATE UNIVERSITY



2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT
OF THE 2017-2018 ACADEMIC YEAR,

SELF-ASSESSMENT REPORT



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

**2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,**

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT
OF THE 2017-2018 ACADEMIC YEAR,
SELF-ASSESSMENT REPORT

ԳԱՎԱՌ - 2018
GAVAR - 2018

Գավառի պետական համալսարան.
2017-2018 ուսումնական տարվա գործունեության
հաշվետվություն,

Ռազմավարական ծրագրի իրականացման
ինքնավերլուծության զեկույց:

Հաշվետվությունը բովանդակում է տեղեկություններ Գավառի պետական համալսարանի 2017-2018 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ՝ կրթական, գիտահետազոտական, դաստիարակչական ուղղություններով, միաժամանակ, իրենից ներկայացնում է բուհի ռազմավարական ծրագրի իրականացման ինքնավերլուծության զեկույց՝ անդրադառնլով նաև համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացին, նախանշելով բուհի 2018-2019 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

The report comprises information on the activities of Gavar State University during 2017-2018 academic year including the educational, scientific – research and educative directions, at the same time representing the self-assessment report on the implementation of **University’s Strategic Program touching upon the implementation process of University’s Anti-Corruption Strategic Program** and outlining the major development dimensions of 2018-2019 academic year.

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ.
2017-2018 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Գավառի պետական համալսարանը 2017-2018 ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունը ՀՀ օրենսդրության և բուհի կանոնադրության հիման վրա, ԳՊՀ 2017-2022 թվականների ռազմավարական ծրագրին և տարեկան գործունեության ծրագրին, համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումներին, ներքուհական ակտերին համապատասխան:

Համալսարանը սահմանված կարգով անցել է ինստիտուցիոնալ (ենթակառուցվածքային) հավատարմագրման գործընթաց և 2017 թվականին ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հանձնաժողովի կողմից ստացել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ չորս տարի ժամկետով:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանը որդեգրել է «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսը, որին համապատասխան մշակել և ներդրել է նոր գործիքներ՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման, հաշվետվողականության, որակի ապահովման՝ «Ծրագրում, իրագործում, գնահատում, բարելավում» կառուցակարգերի կենսագործման նպատակով:

Բուհը գործել է իր առաքելությանը համապատասխան՝ շարունակական միջոցներ ձեռնարկելով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացման, աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստման, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ գիտահետազոտական գործունեության խրախուսման, ուսումնամեթոդական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային գործառույթների, արտաքին համագործակցության ծրագրերի պատշաճ իրականացման, ինչպես նաև գործատու սուբյեկտի պարտականությունների բարեխիղճ կատարման, դասախոսների ու վարչատնտեսական աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղություններով: Առաքելությանը հավատարիմ՝ համալսարանը գործունեություն է ծավալել ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված հետևյալ հիմնական ոլորտներում.

- 1) ուսումնական գործընթացի հստակ կազմակերպում, կրթության որակի բարձրացում,
- 2) գիտահետազոտական գործունեության խրախուսում, կրթության մեջ գիտության նորագույն արդյունքների ներառում,
- 3) կրթական միջավայրի արդիականացում, ուսումնական ռեսուրսների համալրում,
- 4) ուսանողների հետ աշխատանքների արդյունավետության բարձրացում,
- 5) վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարեփոխում,

- 6) Ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպման ճկուն կառուցակարգերի կիրառում,
- 7) արտաքին կապերի և համագործակցության շրջանակի ընդլայնում,
- 8) համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացում, ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացմանը նպաստում,
- 9) ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացում, համալսարանում ձևավորված ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանում, ԳՊՀ էթիկայի կանոնների կենսագործում:

Նշված առաջնահերթություններից ելնելով՝ սահմանվել են համապատասխան ռազմավարական նպատակներ և նախանշվել դրանց իրականացման համար լուծման ենթակա խնդիրները, նախատեսվել են գործունեության արդյունավետության գնահատման ցուցիչներ, որոնց համապատասխան էլ իրականացվել են մշտադիտարկման, արդյունքների վերլուծության և բարելավման գործընթացները:

Ըստ ԳՊՀ գործունեության ինը գերակա ուղղությունների՝ ստորև ներկայացնում ենք բուհի 2017-2018 ուսումնական տարվա հաշվետվությունը և ինքնավերլուծության զեկույցը:

1. Համալսարանի համար առաջին գերակա ուղղությունը բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է:

Նշված ուղղությամբ որպես ռազմավարական նպատակ է սահմանված վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, որին համապատասխան հաշվետու ուստարում լուծվել են հետևյալ խնդիրները՝

- վերանայվել և արդիականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերը /այսուհետ՝ նաև ՄԿԾ/,
- հստակեցվել են դրանցում ամրագրված իրազեկությունները՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները,
- կրթական վերջնարդյունքներ սահմանվել են թե՛ ընդհանուր առմամբ ՄԿԾ-ի, թե՛ դրանում ներառված բոլոր դասընթացների համար,
- միաժամանակ, որպես նորույթ՝ դասընթացի յուրաքանչյուր թեմայի համար նախատեսվել են ակնկալվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնք ուսանողները պետք է ձեռք բերեն կոնկրետ թեմայի ուսումնասիրության արդյունքում: Այսպիսով, յուրաքանչյուր թեմայի ուսումնառությունը դարձել է չափելի և հասկանալի՝ որոշակիացված թեմատիկ վերջնարդյունքների նախանշումով,
- ԳՊՀ-ում իրականացվող ՄԿԾ-ների համար մշակվել են համապատասխան մասնագրեր՝ նոր ձևաչափով և մեթոդաբանությամբ,
- նախատեսվել են վերջնարդյունքներով պայմանավորված ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդներ, կատարվել է դրանց համապատասխանեցում /քարտեզագրում/:

Շարունակական աշխատանքներ են կատարվել բուհում ուսանողակենտրոն կրթական գործընթաց կազմակերպելու, սովորողների կրթական կարիքներն ու ակնկալիքները բացահայտելու և դրանք բավարարելու, ուսանողներին ինքնուրույն աշխատանքի մղելու, նորմատիվ (ֆորմալ) կրթությունը լրացական (ոչ ֆորմալ) կրթությամբ և ինքնակրթությամբ զուգորդելու ուղղությամբ: Կիրառվել են ուսուցման ավանդական և նորարարական մեթոդներ ու տեխնոլոգիաներ, սովորողների գիտելիքների բանավոր և գրավոր

ստուգումներ, ինչպես նաև շարունակել է գործել քննությունների կազմակերպման համակարգչային («Examination.GSU») ծրագիրը: Սակայն, որպես թերություն, պետք է արձանագրել, որ ծրագրի թեստային բազան գրեթե չի համալրվել նոր դասընթացների համար մշակված թեստերով: 2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը աշխատանքներ է կատարում ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային ծրագրի արդիականացման ուղղությամբ, իսկ ամբիոնները պետք է ապահովեն նոր առարկաների համար թեստերի մշակումը և ծրագրում դրանց ներառումը:

Որպես խնդիր՝ նախատեսված էր ՄԿԾ-ներում ամրագրված իրազեկությունների համապատասխանեցումը որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների նույն մակարդակների իրազեկություններին, ինչպես նաև գործատուների պահանջներին: Նշված խնդիրը ընդհանուր առմամբ լուծված է որակավորումների ազգային շրջանակի համար, սակայն նույնը չի կարելի ասել ոլորտային շրջանակների վերաբերյալ: Ընդ որում, խնդիրը չի լուծվել ՀՀ-ում բոլոր մասնագիտությունների գծով որակավորումների ոլորտային շրջանակներ մշակված և ընդունված չլինելու պատճառով:

Ինչ վերաբերում է գործատուների պահանջների բացահայտմանը և դրանց համապատասխան մասնագիտական իրազեկությունների ձևավորմանը, ապա բուհը հաճախ բախվում է մարզում աշխատաշուկայի լիարժեք կայացած չլինելու, գործատուների կողմից հստակ ձևակերպված պահանջներ չներկայացնելու, համալսարանի հետ ոչ բոլոր գործատուների համագործակցության պատրաստականության փաստերի հետ: Վիճակը շտկելու համար համալսարանը համագործակցում է Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ: Հաշվետու ուստարում հինգ տարի ժամկետով վերակնքել ենք համագործակցության համաձայնագիրը Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ, միության անդամ գործատուներին ընդգրկել տնտեսագիտական ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում, ինչպես նաև ներգրավել որպես ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարներ:

Ռազմավարական հաջորդ խնդիրը կապված է նոր մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման և իրականացման հետ: Այս նպատակով կատարվել է հետազոտություն ՀՀ Գեղարքունիքի մարզի ավագ դպրոցների աշակերտների շրջանում և բացահայտվել է, որ առավել պահանջված է ծրագրավորողի մասնագիտությունը, ուստի բուհում աշխատանքներ են իրականացվում «Ծրագրավորում» մասնագիտության կրթական ծրագրի պատրաստման, պահանջվող փաստաթղթերի փաթեթը ՀՀ կրթության և գիտության նախարարության լիցենզավորման գործակալություն ներկայացման և համապատասխան լիցենզիայի ստացման ուղղությամբ: Նախապատրաստական աշխատանքները շարունակվում են 2018-2019 ուսումնական տարում:

Խնդիր էր դրված իրականացնել մասնագիտական կրթական ծրագրեր արդեն իսկ բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար՝ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու կարգին համաձայն: Դիմումներին համապատասխան իրականացվել են հիմնականում իրավագիտության, տնտեսագիտության և մանկավարժության կրթական ծրագրեր հեռակա ուսուցման ֆակուլտետում: Միաժամանակ, ողջ ուսումնական տարվա ընթացքում կյանքի են կոչվել տարբեր լրացուցիչ կրթական ծրագրեր՝ նվիրված

ներառական կրթության հիմնախնդիրներին, ուսուցման արդի մեթոդներին, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներին, կրթության իրավական հիմքերին, օտար լեզուների դասավանդման տեսությանն ու պրակտիկային և այլ թեմաների: Բոլոր դասընթացներից հետո մասնակիցները տարբեր չափանիշներով գնահատել են դասընթացների որակն ու դասընթացավարների հմտությունները, արդյունքները վերլուծվել են, կատարվել են հետևություններ՝ լրացուցիչ կրթական ծրագրերի որակը բարձրացնելու նպատակով: Դասընթացների մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր: Ընդ որում, բոլոր այդ ծրագրերն իրականացվել են անվճար՝ որպես համալսարանի հանրային պատասխանատվության դրսևորում: Ակտիվորեն գործել է ԳՊՀ որակի ապահովման բաժինը՝ համալսարանում իրականացվող գործընթացների որակը գնահատելու և բարելավելու ուղղությամբ: Բաժինն իրականացրել է անանուն թղթային և էլեկտրոնային հարցումներ ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների՝ ուսանողների, դասախոսների, ինչպես նաև դիմորդների, շրջանավարտների, պրակտիկաների ղեկավարների շրջանում, մշակել և շրջանառության մեջ դրել կարիքների և խնդիրների բացահայտմանը միտված նոր հարցաշարեր, ապա վերլուծել հարցումների արդյունքները և դրանք ներկայացրել ԳՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի, ֆակուլտետների ղեկանների ուշադրությանը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու և վիճակը բարելավելու նպատակով:

2. ԳՊՀ ռազմավարական ծրագրում նշված երկրորդ գերակայությունը գիտահետազոտական գործունեությունն է, որի ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ՝ կազմակերպվել են ամենամյա գիտաժողովներ, խրախուսվել են դասախոսների և ուսանողների համատեղ հետազոտական աշխատանքը և համահեղինակությամբ զեկուցումների պատրաստումն ու ներկայացումը, դասախոսների գիտական աշխատանքների արդյունքների հրապարակումը, մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներին:

ԳՊՀ գիտխորհուրդը գիտական կոչումներ է շնորհել այն դասախոսներին, որոնք ունեն գիտական աստիճան և բավարարել են ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի /այժմ՝ կոմիտեի/ սահմանած պահանջները: Գիտական խորհուրդը տպագրության է երաշխավորել ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանի հեղինակած «19-րդ դարի հայ գրականության պատմություն» դասագիրքը, Արսեն Հակոբյանի՝ «Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական պատմություն», Վ. Առաքելյանի, Հ. Բաբայանի և Լ. Ղուկասյանի համահեղինակությամբ կազմված «Ֆինանսական հաշվառում», «Հաշվառման կազմակերպումը փոքր և միջին բիզնեսում» մեթոդական ձեռնարկները:

Համալսարանն անխախտ պարբերականությամբ կազմակերպել է ամենամյա գիտաժողովներ: 2016 թվականին գումարվեց ԳՊՀ 19-րդ գիտաժողովը՝ նվիրված համալսարանի պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-րդ ամյակին, 2017 թվականին անցկացվեց ԳՊՀ 20-րդ՝ հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված համալսարանի հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 90-ամյակին: Գիտաժողովին մասնակցեցին ինչպես ԳՊՀ, այնպես էլ այլ բուհերի 92 դասախոսներ, հետազոտողներ, ասպիրանտներ, մանկավարժներ: Ներկայացված զեկուցումներից 76-ը երաշխավորվեց տպագրության: Իսկ 2018 թվականին կայացած 21-րդ գիտաժողովը նվիրվեց Հայաստանի

առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-ամյակին: Համալսարանն ապահովում է գիտաժողովներին ներկայացված և հրապարակման երաշխավորված զեկուցումների տպագրությունը: Միաժամանակ, գիտական զեկուցումները տեղադրվում են բուհի պաշտոնական կայքում (www.gsu.am): «Գիտություն» հատվածամասում: Ամբիոնների առջև խնդիր է դրված դասախոսների ներուժն ու գիտական հետաքրքրությունները հաշվի առնելով՝ հետազոտական ծրագրերն ուղղորդել ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ ոլորտների ուսումնասիրմանը և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների ներկայացմանը: Արդեն երրորդ տարին է, համալսարանում կատարվում է ընդունելություն ասպիրանտուրա, և իրականացվում է ասպիրանտական ծրագիր՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով: Դեռևս անբավարար ենք համարում գիտահետազոտական գործունեության ոլորտում համագործակցային կապերը հանրապետական և արտերկրի առաջատար գիտահետազոտական ինստիտուտների, համալսարանների, տարբեր ընկերությունների հետ, ինչպես նաև միջազգային հետազոտական նոր նախագծերին մասնակցությունը:

3. ԳՊՀ ռազմավարական ծրագրում նախատեսված հաջորդ գերակա ուղղությունը կրթական միջավայրի արդիականացումն է:

Համալսարանն առաջնորդվում է այն սկզբունքով, որ որակյալ ուսուցման գործընթաց հնարավոր է միայն գրավիչ կրթական միջավայրում: Բուհական միջավայրն ինքնին պետք է կրթող ու դաստիարակող, արժեքային կողմնորոշումներ ձևավորող ու զարգացնող լինի: Նշված սկզբունքից ելնելով՝ շարունակաբար արդիականացվում է կրթական միջավայրը, համալրվում են կրթության տեխնոլոգիական հիմքերը, և այդ գործում բուհին զգալի աջակցություն են ցուցաբերում երկու տասնյակից ավել միջազգային ծրագրերը, որոնց անդամակցում է համալսարանը: Եվրոպական միության տարբեր ծրագրեր բովանդակում են տեխնիկական վերագինման և կարողությունների զարգացման բաղադրիչ, ինչի շնորհիվ սահմանված կարգով ձեռք են բերվում նորագույն համակարգչային տեխնիկա, անհրաժեշտ միջոցներ ու սարքավորումներ, և համալրվում ու թարմացվում է ուսումնական, հետազոտական գործունեության տեխնիկական բազան:

Համալսարանը խնդիր է դրել իրագործել «Էլեկտրոնային ԳՊՀ» ծրագիրը, որը ենթադրում է էլեկտրոնային գործավարություն և փաստաթղթաշրջանառություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների արդյունավետ օգտագործում ուսումնական գործընթացում, «ուսանող-դասախոս», «ուսանող-գիտական ղեկավար», «ուսանող-ամբիոն», «ուսանող-ղեկանատ», «ուսանող-ռեկտորատ» առցանց կապերի ապահովում, հեռավար ուսուցման մեթոդի կիրառում:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից պարբերաբար հարցումներ են անցկացվում ուսանողների և դասախոսների շրջանում՝ կրթական միջավայրից նրանց բավարարվածության աստիճանը պարզելու, կարիքները բացահայտելու և թերությունները շտկելու, գրավիչ ակադեմիական միջավայր ստեղծելու նպատակով:

Հարցման արդյունքների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում համակարգչային լսարան է կահավորվել ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքում, բարելավվել է ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը

(«E.Learning.gsu.am»), ավելացել են վերջինիս գործառնության հնարավորությունները, համալրվել է բուհի էլեկտրոնային գրադարանը («E.Library.gsu.am»), միացել այլ գիտակրթական հաստատությունների էլեկտրոնային գրադարաններին, արտասահմանյան գրքապաշարներին՝ ուսանողների և դասախոսների համար համացանցային գիտական, տեղեկատվական աղբյուրների հետ աշխատելու պայմաններ ապահովելով:

Դեռևս խնդիր է մնում գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու գնահատման արդյունքների հաշվառման, ակադեմիական տեղեկատվության կառավարման էլեկտրոնային համակարգի մշակումն ու ներդրումը:

4. Համալսարանի գործունեության առաջնային ուղղություններից է ուսանողների հետ նպատակային աշխատանքների կազմակերպումը:

Բուհը չի կարող սահմանափակվել միայն սովորողների համար կրթական գործընթացի կազմակերպմամբ: Համալսարանի խնդիրն է դասախոսների բազմամասնագիտական կազմի ջանքերով նպաստել ուսանողների շրջանում գիտելիքների արժևորմանը, ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, սովորելու և ինքնուրույն աշխատանք կատարելու մշակույթի ձևավորմանը, այն գիտակցության արմատավորմանը, որ որակյալ կրթությունը բարձր կենսամակարդակի ապահովման, սոցիալական կարգավիճակի ձեռքբերման և կյանքի որակի երաշխավորման անհրաժեշտ գործոն է:

ԳՊՀ վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմերի մշտական հոգածության առարկան են քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող անձանց դաստիարակումը, ուսանողների բարոյականային հատկանիշների զարգացումը, նրանց շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորումը: Շարունակական միջոցներ են ձեռնարկվել ուսանողների լեզվական գրագիտության ապահովման, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման կարողությունների զարգացման ուղղությամբ: Ուշադրություն է դարձվել սովորողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովմանը, էլեկտրոնային ուսուցման համակարգից և էլեկտրոնային գրադարանից, այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացմանը, շարունակական կրթության միջոցով անընդհատ ինքնակատարելագործման և ինքնաիրացման մշակույթի արմատավորմանը: Մշտապես խրախուսվել է ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, տնտեսագետների, ստեղծագործողների ակումբների, «Զինիշյան հիշատակի հիմնադրամի» ուսանողական ծրագրային թիմի, սովորողների այլ կառույցների գործունեությունը, համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ակտիվ դերակատարությունը: Բացատրական աշխատանքներ են կատարվել առաջին կուրսեցիների հետ՝ նրանց համար պարզաբանելով կրեդիտային համակարգում ուսումնառության առանձնահատկությունները, գնահատման գործոններն ու չափանիշները, առկա և հեռակա ուսուցման համակարգերից փոխատեղման սկզբունքները, ներկայացնելով ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:

2018 թվականը հագեցած էր հորեյանական միջոցառումներով՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյա տարեդարձին,

քաղաքամայր Երևանի 2800-ամյակին, Գավառ քաղաքի 2750-ամյակին և Գավառի պետական համալսարանի հիմնադրման 25-րդ տարեդարձին: Ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, բանավեճեր, «կլոր սեղան»-քննարկումներ, ինտելեկտուալ մրցույթներ, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, էքսկուրսիաներ, այլ միջոցառումներ՝ միտված ուսանողների բազմակողմանի կրթությանն ու հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև նրանց հետազոտական հմտությունների, հաղորդակցման և կազմակերպական ունակությունների զարգացմանը:

Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողներն ակտիվորեն մասնակցել են «Սարդարապատից Արցախ» խորագրով էսսեների, չափածո և արձակ ստեղծագործությունների, պաստառների և ձեռարվեստի աշխատանքների մրցույթին: Լավագույն աշխատանքների հեղինակները խրախուսվել են: Հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են մրցույթներ՝ «Լավագույն ուսանող», «Լավագույն կուրս» անվանակարգերում, հաղթող ուսանողները ներկայացվել են մրցույթի հանրապետական փուլին, և արդյունքում՝ ԳՊՀ լավագույն հինգ ուսանող արժանացել են «Հայաստանի Հանրապետության լավագույն ուսանող» կոչմանը, ինչպես նաև ստացել ֆինանսական պարգևատրում: Շարունակական աշխատանքներ են կատարվել առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների սոցիալապես անապահով ուսանողների հետ: Նրանք ֆինանսական աջակցություն են ստացել բուհից, միաժամանակ, խրախուսվել են՝ դիմելու և օգտվելու տարբեր հիմնադրամների և հովանավորների նյութական աջակցության ծրագրերից: Համալսարանը ուսման վարձի զգալի զեղչեր է կիրառել Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից, մարտական հերթապահություն իրականացրած, ծնողազուրկ, հաշմանդամություն ունեցող, բազմազավակ ընտանիքների երեխա, ինչպես նաև անչափահաս երեխաներ ունեցող, սահմանապահ համայնքների բնակիչ, համալսարանի աշխատակիցների ընտանիքների անդամ ուսանողների նկատմամբ:

Աշխատանքներ են կատարվել ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերում հնարավորինս մեծ թվով ուսանողներ ներգրավելու համար: Բուհի արտաքին կապերի բաժինն իրազեկել է ուսանողներին միջազգային ծրագրերի և դրանց մասնակցելու պայմանների մասին, աջակցել փաստաթղթերի փաթեթի պատրաստման և այլ հարցերում: Ուսանողների հետ ամենօրյա հասցեական աշխատանքներ են կատարել ուսումնական խորհրդատուները, որոնք ցուցաբերել են բազմակողմանի աջակցություն ուսման, պրակտիկայի հետ կապված և այլ հարցերում:

5. ԳՊՀ գործունեության գերակա ուղղություն է նաև վարչարարության պատշաճ իրականացումը և մարդկային ռեսուրսների կառավարումը:

Նշված գերակա ուղղությանը համապատասխանող ռազմավարական նպատակը համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է, վարչարարության միջոցների ու մեթոդների բարելավումը, ճկուն կառուցակարգերի և գործիքների կիրառումը, մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորումը և կառավարումը: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել ու արդիականացվել են համալսարանի գործունեության փաստաթղթային հիմքերը, ընդունվել են նոր կանոնակարգեր, ներբուհական այլ ակտեր: Միջոցներ են ձեռնարկվել երիտասարդ և բանիմաց մասնագետներով ԳՊՀ աշխատակազմը համալրելու, աշխատակիցների

մասնագիտական կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Համալսարանի կառավարման գործում ապահովվել է հստակություն, ճկունություն և, միաժամանակ, կանխատեսելիություն, անշեղորեն պահպանվել են օրինականության, ակադեմիական ազնվության և սոցիալական արդարության սկզբունքները: Շաբաթը մեկ անգամ գումարվել է ռեկտորատի նիստ, ամենամսյա պարբերականությամբ կայացել են գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների նիստերը: Ըստ անհրաժեշտության՝ տեղի են ունեցել նաև արտահերթ նիստեր ու խորհրդակցություններ: Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետ և կառուցվածքային ստորաբաժանում իրականացրել է նախորդ տարվա գործունեության ինքնավերլուծություն, արդյունքները քննարկվել են, և արվել համապատասխան եզրահանգումներ: Ինքնավերլուծության գործընթացներին մասնակցել են նաև ուսանողները: Համալսարանում գործել է և գործում է որոշումների մասնակցային կայացման և կոլեկտիվ իրականացման կառուցակարգը: Ապահովվում է կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառույթների, լիազորություններին և պատասխանատվության հստակ բաշխում՝ ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով: Վերանայվել են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության կառուցակարգերը, ներդրվել են աշխատակիցների և ստորաբաժանումների գործունեության արդյունքների գնահատման նոր մեթոդներ ու գործիքներ: ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ բուհի կադրերի և հատուկ բաժինը վերակազմակերպվել է Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի, որին վերապահվել են նաև հատուկ բաժնի գործառույթներ: Ընդունվել է բաժնի կանոնակարգը: Պահպանվել է ԳՊՀ դասախոսական կազմի և վարչական աշխատակազմի կայունությունը: Սահմանված կարգով հայտարարվել է բաց մրցույթ, և մրցութային ընթացակարգով ԳՊՀ գիտական խորհուրդն ընտրել է հոմանիտար մասնագիտությունների, բնագիտական, տնտեսագիտական, բանասիրական ֆակուլտետների դեկաններին, պատմության, հայոց լեզվի և գրականության, հաշվապահական հաշվառման, ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնների վարիչներին: Դասախոսների համար պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական և մեթոդական աջակցություն է ցուցաբերվել երիտասարդ աշխատակիցներին, կազմակերպվել են գործուղումներ, առաջավոր փորձի փոխանակումներ: Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվել են հաշվետվություններ, ստուգվել և գնահատվել են կատարողական արդյունքները, լավագույն ցուցանիշներ ունեցող աշխատակիցները ստացել են բարոյական և նյութական պարգևատրում: Ընթացքի մեջ են համալսարանի բոլոր տարակարգերի աշխատակիցների պաշտոնների անձնագրերի և աշխատանքի նկարագրերի, դասախոսների աշխատանքի, գիտահետազոտական գործունեության և դասավանդման որակի գնահատման նոր կառուցակարգերի մշակման և ներդրման աշխատանքները: Դեռևս չլուծված խնդիր է մնում դասախոսների վարկանիշային գնահատման արդյունքներով պայմանավորված տարբերակված վարձատրության համակարգի կիրառումը:

6. Հաջորդ գերակա ուղղությունը բուհի ֆինանսական գործունեության ապահովումն է և ներբուհական տնտեսության կազմակերպումը:

Նշված ոլորտում ռազմավարական նպատակը ԳՊՀ ֆինանսական հոսքերի ապահովումն է, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը և խնայողաբար

օգտագործումը, համալսարանի ֆինանսական կայունության ապահովումը: Համալսարանին հաջողվել է Գեղարքունիքի մարզում արձանագրված ժողովրդագրական բացասական շարժի, արտագաղթի պայմաններում, սակավադիմորդ տարում ապահովել ֆինանսական կարգապահություն և ներքուհական տնտեսության անխափան գործունեություն: Բուհում կառուցվածքային փոփոխություններ և կրճատումներ չեն եղել: Ժամանակին վճարվել են աշխատավարձերն ու հարկերը, կատարվել բոլոր պայմանագրային պարտավորությունները: Բուհում հստակ գործում է էլեկտրոնային հաշվապահության ծրագիրը: ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան պահանջագրերի հիման վրա կազմվել են համալսարանի բյուջեն և գնումների պլանը, սահմանված կարգով կազմակերպվել է գնումների գործընթացը: Ուշադրության կենտրոնում են եղել ԳՊՀ զարգացման ծրագրերի ֆինանսական պլանավորումը և համալսարանի տարեկան բյուջեում դրանց ներառումը: Բազմախողովակ ֆինանսավորման հարցում բուհին աջակցել են Եվրոպական միության ծրագրերը, դրամաշնորհային գումարները, բարերարների ներդրումները: Այդուհանդերձ, ԳՊՀ-ն հանրային ֆինանսավորմամբ բուհ է, և բյուջեի եկամուտների հիմնական մասը ձևավորվում է ուսման վարձավճարներից: Սակայն, հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ են եղել ուսման վարձերի հավաքագրման հարցում՝ կապված դիմորդների, ուստի և առաջին կուրս ընդունված ուսանողների թվի նվազման, ուսանողների զգալի մասի ընտանիքների սոցիալապես անապահով վիճակի հետ: Կիրառվել է ամենամսյա պարբերականությամբ վարձերի վճարման պրակտիկան: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փոխհատուցվել են «Փարոս» համակարգի շահառու, սոցիալական անապահովության համակարգում 30 միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների երեխա, ծնողազուրկ և սահմանապահ համայնքների բնակիչ ուսանողների ուսման վարձավճարները: Բուհի ուսանողներին նյութապես աջակցել են «Ժիրայր Նիշանյան», «Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամները, Հայ կրթական հիմնարկությունը, «Վիվա-Սելլ. ՄՏՍ» ընկերությունը, «ԱՄՔՈՐ» բարեգործական միությունը, այլ հաստատություններ: Համալսարանի ուսանողները, ինչպես նաև աշխատակիցները բարոյական և նյութական խրախուսում են ստացել ԳՊՀ բյուջեի, համալսարանի արհեստակցական միության միջոցների հաշվին: Հետևողական աշխատանք է կատարվել համալսարանում առկա նյութատեխնիկական բազայի պահպանման, գույքի նպատակային և խելամիտ տնօրինման, խնայողաբար օգտագործման ուղղությամբ: Ընդլայնվել է համալսարանի ուսումնաարտադրական պրակտիկայի բազան, համալրվել են գրադարանային-տեղեկատվական ռեսուրսները, շարունակական ծրագրեր են իրականացվել արդի տեխնոլոգիական միջավայրի ձևավորման ուղղությամբ: Սակայն շարունակում են որպես չլուծված հիմնախնդիրներ մնալ համալսարանի հանրակացարանի ֆիզիկապես ու բարոյապես մաշված, անօգտագործելի շենքի հիմնանորոգումը, ԳՊՀ գրադարանների և ընթերցասրահի արդիականացումը, մարզադահլիճների նորոգումն ու կահավորումը, բացօթյա մարզահրապարակի կառուցումը, փոքր տպարանի հիմնումը, «խելացի» սրճարանի և ուսանողական ժամանցի այլ վայրերի, համալսարանական ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծումը, որոնց համար բուհի ֆինանսական միջոցները չեն բավարարում, և արտաքին ներդրումների կարիք կա:

7. ԳՊՀ գործունեության գերակա ուղղություն է նաև արտաքին կապերի և համագործակցության ապահովումը:

Ռազմավարական նպատակը՝ համալսարանի արտաքին կապերի և համագործակցության ընդլայնումն է, արդյունավետ և նպատակաուղղված աշխատանքների կազմակերպումը գործատուների և գործընկեր կազմակերպությունների՝ ՀՀ պետական ու ոչ պետական կառույցների, տարբեր կազմակերպա-իրավական ձև ունեցող սուբյեկտների, միջազգային կառույցների հետ: Ինչպես նախկինում, հաշվետու ուսումնական տարում ևս համալսարանը համագործակցել է ՀՀ կրթական և գիտահետազոտական մարմինների ու կազմակերպությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, Կրթության ազգային ինստիտուտի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի, Որակավորումների փոխճանաչման և այլ կառույցների հետ: Ինչպես նշվեց, բուհն անդամակցում է երկու տասնյակից ավելի միջազգային ծրագրերի, որոնց շրջանակներում համագործակցում է եվրոպական պետությունների յոթանասունից ավելի բուհերի, այլ կրթական, գիտական հաստատությունների հետ: Միայն վերջին երկու տարում ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի երեսունհինգ ուսանողներ սովորել են եվրոպական բուհերում, իսկ քսան դասախոսներ՝ կատարել մանկավարժական և հետազոտական աշխատանքներ, անցել վերապատրաստման դասընթացներ, ապա ներկայացրել հաշվետվություններ միջազգային ծրագրերի արդյունքների մասին, հանդես եկել առաջարկություններով: Եվրոպական բուհերի ու դասախոսներ եղել են ԳՊՀ-ում և հանդես եկել դասախոսություններով: Համալսարանում կազմակերպվել են միջազգային աշխատաժողովներ՝ բուհի անդամակցած եվրոպական ծրագրերի շրջանակներում: Կատարվել են համանման կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հենանիշային ուսումնասիրություն (բենչմարքինգ), արդյունքների վերլուծություն, համադրում և առաջավոր փորձի կիրառում, միջոցներ են ձեռնարկվել բուհի միջազգայնացման ուղղությամբ: Համալսարանը հաստատել է գործընկերային հարաբերություններ ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հետ, և համատեղ նախաձեռնությամբ հիմնադրել Գեղարքունիքի մարզի զբոսաշրջային կենտրոնը: Բուհը համագործակցում է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Երևանում գործող Ռուսաստանի գիտության և մշակութի կենտրոնի, միջազգային այլ կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, ՀՀ կրթական, երիտասարդական, մարզական, մշակութային տարբեր կազմակերպությունների հետ:

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ բուհի հանրության հետ կապերի և լրատվության բաժինը վերակազմակերպվել է արտաքին կապերի և լրատվության բաժնի: Մշակվել և ԳՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել է բաժնի կանոնակարգը: Բաժինն ապահովել է համալսարանի կրթական ծառայությունների պատշաճ ներկայացում և գովազդում զանգվածային լրատվության միջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվության մատուցում: Դիմորդների թվի էական կրճատման պայմաններում էլ ավելի է կարևորվել Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ համալսարանի կապերի ակտիվացումը: Ըստ այդմ, կազմակերպվել են փոխայցելություններ, որոնց նպատակը ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելն է, համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը ներկայացնելը: Անցկացվել են աշակերտական օլիմպիադաներ բոլոր հիմնական առարկաների գծով: Մարզի դպրոցների հետ կնքած համագործակցության հուշագրերի

հիման վրա բուհի բնագիտության լաբորատորիայում պարբերաբար կազմակերպվել են աշակերտների գործնական դասեր՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա և այլ առարկաներից: Պատմության դասաժամեր են անցկացվել ԳՊՀ՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական, հնագիտական թանգարանում: Համալսարանը համագործակցել է դպրոցների մանկավարժական խորհուրդների, մասնագիտական մեթոդմիավորումների հետ: Բուհում կազմակերպվել են «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի, «Մինչև 2030 թվականը ՀՀ կրթության զարգացման ծրագրի» նախագծի քննարկումներ՝ մարզի դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Համալսարանի իրականացրած վերապատրաստման դասընթացներին անվճար հիմունքներով մասնակցել են մարզի տարբեր դպրոցների ուսուցիչներ: Ըստ անհրաժեշտության՝ համալսարանի աշխատակիցները մարզի միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններին ցուցաբերել են մասնագիտական ու մեթոդական աջակցություն: Համալսարանն ակտիվորեն համագործակցել է «Գեղամա» հեռուստաընկերության, «Գեղամա աշխարհ» թերթի, զանգվածային լրատվության այլ միջոցների հետ: Համալսարանի մասին օպերատիվ տեղեկատվություն է հաղորդում բուհի համացանցային կայքը, որն ունի ենթակայքեր և ներառում է միջազգային ծրագրերի մասին հատվածամաս: Կայքում ներկայացվում են բուհի իրականացրած ծրագրերը, ուսանողների և դասախոսների արձանագրած հաջողությունները: Հաշվետու ուսումնական տարում բուհի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կողմից մշակվել և գործարկվել է ԳՊՀ պաշտոնական կայքի նոր տարբերակը:

8. Գերակա ուղղություն է նաև համալսարանի կողմից կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումը:

Նշված ոլորտում բուհի որդեգրած ռազմավարական նպատակն է համալսարանի հանրային պատասխանատվության բարձրացումը, մարզի ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական կարիքների բավարարմանն ուղղված միջոցների ձեռնարկումը, հանրությանը որակյալ ծառայությունների մատուցումը, բուհի նկատմամբ հանրային վստահության ապահովումը, համալսարանի բարի համբավի ամրապնդումը:

Հանրային պատասխանատվության ծրագրերի շրջանակում համալսարանը համագործակցում է Գեղարքունիքի մարզպետարանի, ՀՀ պաշտպանության նախարարության երկրորդ բանակային կորպուսի, մարզի քաղաքային և գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, Գավառի երկրագիտական թանգարանի, մարզային և քաղաքային գրադարանների, Հրաչյա Բունիաթյանի անվան պատկերասրահի, Գավառի մանկան տան, հատուկ դպրոցի, բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, իրավապահ մարմինների, տարբեր կազմակերպա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների հետ: Տարեց տարի ավելանում է համալսարանի գործընկեր կազմակերպությունների թիվը: Գավառի պետական համալսարանի, Գեղարքունիքի մարզպետարանի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ ԳՊՀ-ում նախատեսվում է իրականացնել տեխնոլոգիական ոլորտի հատուկ մասնագիտացված կրթական ծրագիր: Մարզում ուսուցողական, տեղեկատվական, ճանաչողական, ուղղորդող գործառույթներ էին իրականացնում «Համալսարանական ժամ»

և «Դասը վարում է համալսարանի պրոֆեսորը» խորագրով հաղորդաշարերը, որոնք պատրաստվում էին համալսարանում և հեռարձակվում մարզային հեռուստաընկերությամբ: Սակայն աստիճանաբար դրանց փոխարինում է ԳՊՀ համացանցային կայքի «youtube» տեսահարթակը և «Facebook» (Դիմագիրք) սոցիալական կայքը, որտեղ ուսուցողական նյութերն անվճար ներբեռնվում են և ներկայացվում հանրությանը: Համալսարանն էջեր ունի նաև «Լինկդին», «Թվիթեր», «Ինստագրամ» համացանցային սոցիալական կայքերում: ԳՊՀ հանրային պատասխանատվության դրսևորումներն են մարզի ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված ծրագրերի իրականացումը, ուսուցիչներին, տարբեր մասնագիտությունների տեր անձանց լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի առաջարկումը, համալսարանի ներքին և արտաքին շահառուների կարիքների հետազոտությունը և հնարավորության սահմաններում օժանդակության ցուցաբերումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ներառական կրթական միջավայրի ստեղծումը, բուհի գործընկերների հետ արդյունավետ համագործակցության ապահովումը:

9. ԳՊՀ գործունեության գերակա ուղղություններից է համալսարանի 2017-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացումը: Նշված ծրագրից բացի, համալսարանում գործում է ակադեմիական ազնվության հայեցակարգ: Հաշվետու ժամանակահատվածում բուհի գիտական խորհրդի կողմից ընդունվել են նաև ԳՊՀ էթիկայի կանոնները, համալսարանում կազմակերպվել է էթիկական կրթության և բուհում բարեվարքության կանոնների պահպանման թեմայով վերապատրաստման դասընթաց: Համալսարանում կարևորվում են.

- ակադեմիական ազնիվ միջավայրի պահպանումը՝ որպես որակյալ կրթության և արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ և պարտադիր պայման,
- ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիման վրա բուհի գործունեության բոլոր ոլորտներում կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառումը,
- ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանումը, ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի օբյեկտիվ գործունեության ապահովումը,
- ԳՊՀ էթիկայի կանոնների պահպանումը,
- բուհի ներքին և արտաքին շահառուների հետ հարաբերություններում բարեվարքության սկզբունքների պահպանումը:

Համալսարանում գործող ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի խնդիրն է ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների և էթիկայի կանոնների խախտումների քննումը և օբյեկտիվ որոշումների կայացումը, անազնվության դեպքերի և էթիկայի խախտումների նախազգուշացումը: Համալսարանի որակի ապահովման բաժինը պարբերաբար հարցումներ է իրականացնում ուսանողների շրջանում՝ ուղղված բուհում կոռուպցիոն վտանգների բացահայտմանը և կանխմանը: ԳՊՀ հակակոռուպցիոն քաղաքականությունը ներառում է ուսանողների պատշաճ իրավական և բարոյական դաստիարակությունը, աշխատակիցների շրջանում բարձր արժեհամակարգի արմատավորումը: Բուհի ֆինանսատնտեսական գործունեությունը օրենքով սահմանված կարգով ենթարկվում է աուդիտի: Խիստ հսկողություն են իրականացվում ուսանողների տեղափոխման և վերականգնման գործընթացների, ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ

քննությունների, անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորողների փոխատեղումների, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերի և այլ գործընթացների նկատմամբ: Բուհի գործունեության բոլոր ոլորտներում ապահովվում է օրինականության, սոցիալական արդարության, ժողովրդավարության, իրավահավասարության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը:

2018 թվականի հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության օրը, դիպլոմներ շնորհվեցին ԳՊՀ շրջանավարտների քսանմեկերորդ սերնդին, պատգամելով համալսարանում ստացած գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնել հայրենիքի բարօրությանը:

Գավառի պետական համալսարանը 2018-2019 ուսումնական տարի մուտք գործեց «Նոր մտածողություն, նոր տեսլական» կարգախոսով՝ իր առաքելությունն առաջադիմական գաղափարներով և նորարարական մոտեցումներով շարունակելու համար:

Ռ. Խ. Հակոբյան՝
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. 2017-2018 Ուսումնական Տարվա Առկա Եվ Հեռուստա Ուսուցման ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.00.7 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.7	Կենսաբանություն	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	Աշխարհագրություն	Մանկավարժության մագիստրոս
011401.18.7	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր

041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
041201.00.6 Ֆինանսներ		
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041201.00.7 Ֆինանսներ		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.00.6 Տնտեսագիտություն		
031101.01.6	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
031101.00.7 Տնտեսագիտություն		
031101.01.7	Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.00.7 Իրավագիտություն		
042101.01.7	Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	Քիմիայի բակալավր
054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրության բակալավր
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի բակալավր
061103.00.7 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր

1.2. 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՈՒՆՎԱԾՆԵՐԻ
ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ընդունելության քննություններ				միտոյժ ընդունվածների քանակ
	մրցութային քննություններ			ոչ մրցու- թային քնն.	
1	2	3	4	5	6
1. Բանասիրական ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (բ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ)* կամ Օտլ (գ)*	5
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (բ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	-
Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ (բ)	Անգլ (գ)		Հլգ (գ)*	7
2. Բնագիտական ֆակուլտետ					
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ)** կամ Ֆ (գ)**		Հլգ (գ)*	4
Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	-
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	2
Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)**		1
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	4
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ)** կամ Ֆ (գ)**		Հլգ (գ)*	2
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ					
Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)		Հլգ (գ)*	4
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ)**			11
Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ)		-
4. Տնտեսագիտական ֆակուլտետ					
Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		4
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		3

Տնտեսագիտություն	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		3
5. Հեռակա ուսուցման ֆակուլտետ					
Հայոց լեզու և գրականություն	Հլգ (թ)	Հլգ (գ)		ՀԺՊ (գ)* կամ Օտլ (գ)*	6
Ռուսաց լեզու և գրականություն	Ռլգ (թ)	Ռլ (գ)		Հլգ (գ)*	-
Աշխարհագրություն	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	-
Պատմություն	ՀԺՊ (գ)	ԸՊ (գ) կամ Օտլ (գ)		Հլգ (գ)*	9
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ (գ)	Մ (գ)**			24
Իրավագիտություն	Հլգ (գ)	ՀԺՊ (գ)	Օտլ (գ)		52
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)		24
Կենսաբանություն	Կ (գ)	Ք (գ)** կամ Ֆ (գ)**		Հլգ (գ)*	-
Համակարգչային ճարտարագիտություն	Մ (գ)	Ֆ (գ)**		Հլգ (գ)*	18
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա (գ)	Մ (գ)**		Հլգ (գ)*	9
Սերվիս	Ա (գ) կամ ՀԺՊ (գ)	Հլգ (գ)	Օտլ (գ)**		-
Դեղագործական քիմիա	Ք (գ)	Կ (գ)** կամ Ֆ (գ)**		Հլգ (գ)*	7

1.3. 2017/2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ, ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Անվճար տեղեր			Վճարովի տեղեր ԱՏ	Այլ բուհից ընդունված	Ընդունված- ների թվակազմը
	տարկետման իրավունքով	բանակից գորացրված	ԱՏ			
1. Բանասիրական ֆակուլտետ						
Հայոց լեզու և գրականություն	-	-	1	14	1	4
Ռուսաց լեզու և գրականություն	-	-	-	25	1	3
Անգլերեն լեզու և գրականություն	-	-	2	23	1	5
2. Բնագիտական ֆակուլտետ						
Կենսաբանություն	-	-	-	12	1	5
Աշխարհագրություն	-	-	-	5	-	-
Համակարգչային ճարտարագիտություն	1	-	-	13	2	7
3. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ						
Իրավագիտություն	-	1	-	20	14	23
Պատմություն	-	-	2	13	2	6
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	-	-	1	14	-	7
4. Տնտեսագիտական ֆակուլտետ						
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	1	2	1	12	2	13
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	1	1	-	14	2	3
Տնտեսագիտություն	1	-	1	13	3	9
Ընդամենը	4	4	8	178	29	85

2. «ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

- | | | |
|----|----------------------------------|--|
| 1 | Հակոբյան Հրանուշ Հրանտի | ԳՊՀ խորհրդի նախագահ,
ՀՀ սիյուռքի նախարար, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր |
| 2 | Մարգարյան Անահիտ Սամվելի | Խորհրդի քարտուղար, կենսաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ |
| 3 | Մինասյան Արծվիկ Գարեգինի | ՀՀ բնապահպանության նախարար |
| 4 | Գրիգորյան Ռաֆիկ Խորենի | ՀՀ Գեղարքունիքի մարզպետ |
| 5 | Խաչատրյան Աշոտ Հայկի | ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր |
| 6 | Շուրուրյան Յուրի Հայկի | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
փոխնախագահ, ակադեմիկոս |
| 7 | Ղազարյան Էդուարդ Մուշեղի | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
ակադեմիկոս,
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի մաթեմատիկայի և բարձր
տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն |
| 8 | Գևորգյան Էմիլ Սոսի | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
ակադեմիկոս,
Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի դեկան |
| 9 | Հակոբյան Արսեն Սամվելի | ՀՀ կրթության և գիտության
նախարարության բարձրագույն և
հետբուհական մասնագիտական կրթության
վարչության մասնագիտական կրթության
կազմակերպման և համակարգման բաժնի
գլխավոր մասնագետ |
| 10 | Խաչատրյան Վաղարշակ Վահանի | ՀՀ կրթության և գիտության
նախարարության կրթության ազգային
ինստիտուտի բարձրագույն և
հետբուհական բաժնի վարիչ |
| 11 | Ավետիսյան Աստղիկ Շամսի | «Հայկական Փի Ար Ասոցիացիա» ՀԿ-ի
նախագահ |
| 12 | Գալստյան Արմեն Սպարտակի | «Գեղամա Մեդիա հոլդինգ» ընկերություն
«Քյավառ» հեռուստաընկերության տնօրեն |
| 13 | Ղուդեյան Մարտին Սիմոնի | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Գավառի
տեղամասի պետ |
| 14 | Ալեքսանյան Գնել Սերյոժայի | ՎՏԲ Հայաստան բանկի «Կամո» |

15	Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	մասնաճյուղի ղեկավար Հր. Աճարյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտ. դոկտոր
16	Հարությունյան Հարություն Սարգսի	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
17	Հայրայան Սարգսի Հայրապետի	ԳՊՀ դասախոս
18	Ղարիբյան Ալինա Ամբիկի	Ակադեմիական քաղաքականության վարչության պետ, ասիստենտ
19	Ավետիսյան Մարիամ Աշոտի	Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Անգլերեն լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
20	Մուրադյան Դավիթ Կարենի	Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող
21	Ներսիսյան Գարիկ Վարդանի	Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող
22	Պետրոսյան Անգելինա Հովհաննեսի	Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
23	Սարգսյան Երեմ Նորայրի	Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանող
24	Սինանյան Արեգ Սամվելի	ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի Տնտեսագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող

3. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

	ԳՊՀ գիտական խորհրդի նախագահ՝	
1	Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիյ. դոկտոր, դոցենտ
	ԳՊՀ գիտական խորհրդի քարտուղար՝	
2	Ասոյան Թաթուլ Արտիկի	Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիյ. թեկնածու, դոցենտ
	ԳՊՀ գիտական խորհրդի անդամներ՝	
3	Կուտուզյան Նելլի Ալբերտի	ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզմաթ. գիյ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
4	Ապրոյան Արսեն Հրաչիկի	ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր, իրավաբանական գիյ. թեկնածու
5	Ավագյան Մարտին Պատվականի	Բնագիտական ֆակուլտետի դեկան, գյուղ. գիյ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
6	Ղաջոյան Համլետ Գրիշայի	Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, փիլ. գիյ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
7	Ամիրխանյան Սամվել Գրիգորի	Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
8	Սիմոնյան Արմեն Արշալույսի	Կենսաբանության, բնապահպանության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ, Ռուսաստանի Բնական և Էկոլոգիական գիյ. ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական գիյ. դոկտոր, պրոֆեսոր
9	Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի	Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիյ. դոկտոր, պրոֆ.
10	Առաքելյան Արա Հրաչիկի	Բանասիրական գիյ. դոկտոր, պրոֆեսոր
11	Շեկյան Լավրենտի Արամի	Ֆիզմաթ. գիյ. դոկտոր, դոցենտ
12	Հարությունյան Համլետ Մալխասի	Պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիյ. դոկտոր, պրոֆեսոր
13	Թունյան Վալերի Գեորգիի	Պատմական գիյ. դոկտոր, պրոֆեսոր
14	Ավագյան Արամայիս Ռոստոմի	Աշխարհագրական գիյ. դոկտոր, պրոֆեսոր
15	Հակոբյան Արմեն Աշմատի	Տնտեսագիտության դոկտոր
16	Հերգնյան Մարիամ Նորիկի	Տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

17	Ղուլոյան Հակոբ Մելիկի	<i>Հաշվապահական հաշվառում ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ</i>
18	Զաքոյան Հրաչյա Սամվելի	<i>Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր</i>
19	Միրիբյան Գայանե Աշոտի	<i>Օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտ. թեկնածու</i>
20	Քուրբջյան Լուսիկ Ներսեսի	<i>Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր</i>
21	Մելիքյան Հենրիկ Աշոտի	<i>Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկայի ամբիոնի վարիչ, տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր</i>
22	Պողոսյան Աշխունջ Ամիրխանի	<i>Պատմական գիտ. թեկնածու</i>
23	Մուխսիխաչոյան Արուսյակ Մուշեղի	<i>Մանկավարժական գիտ. թեկնածու</i>
24	Խաչատրյան Գայանե Արտիկի	<i>Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ</i>
25	Մայիլյան Անուշ Տոլիկի	<i>Որակի ապահովման բաժնի վարիչ, մանկավարժական գիտ. թեկնածու</i>
26	Ավետիսյան Վարազդատ Կորյունի	<i>Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ, տեխնիկական գիտ. թեկնածու</i>
27	Ղռեջյան Լուսինե Խաչատուրի	<i>Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ</i>
28	Գափոյան Խաչիկ Գրիգորի	<i>Տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանող</i>
29	Ղարաբաղյան Արփինե Հարությունի	<i>Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի</i>
30	Բալագոզյան Արմինե Հովիկի	<i>Բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի</i>
31	Հերգնյան Գևորգ Հակոբի	<i>Տնտեսագիտական ֆակուլտետի Հաշվապահական հաշվառում բաժնի 3-րդ կուրսի ուսանող</i>

**4. ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՊՀ ՄԵԴԱԼԱԿԻՐՆԵՐ ԵՎ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ**

Անուն, հայրանուն, ազգանուն	Մեդալի/մրցանակի անվանումը	հանձման տարեթիվը
Հրանտ Խաչատուրի Հակոբյան	«Աշխատանքի վետերան» մեդալ	1987
	Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե մեդալ	2006
	Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում	2006
	Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալ	2007
	«XXI դարի նշանավոր մտավորական» կոչում շնորհված Քեմբրիջի միջազգային կենսագրությունների կենտրոնի կողմից	2008
	ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալ	2008
Հրանուշ Հրանտի Հակոբյան	Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի կոչում	2010
	Ժողովուրդների բարեկամության ոսկե մեդալ Ֆ.	2006
	Նանսենի անվան ոսկե մեդալ	
	ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալ	2008
	Վազգեն առաջինի ոսկե մեդալ	
	Ակսել Բակունցի անվան ոսկե մեդալ ՄԱՆՑ-ի ոսկե մեդալ	2008
	Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի աստիճան	
	Ֆրանսիայի Հանրապետության Արժանիքի համար շքանշան	2009
	Խաչատուր Աբովյանի անվան ոսկե մեդալ	2009
	Մխիթար Գոշի մեդալ	2011
	Վալերի Բոյուսովի անվան մեդալ	2011
	«Երկարամյա քաղաքական գործիչ»	2011
	անվանակարգում մրցանակ՝ շնորհված ԱՄՆ-ում	
	«Ոճը և քաղաքականությունը» անվանակարգում մրցանակ՝ շնորհված ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան կողմից	2012
	Սիրիայի հայկական բարեգործական ընդհանուր միության ոսկե մեդալ	2012
	Հայկական բարեգործական ընդհանուր միության ոսկե մեդալ	2013
«Գարեգին Նժդեհ» մեդալ	2014	
ՀՀ Վարչապետի հուշանվեր՝ անվանական ժամացույց	2014	
Ռուսաստանի հայերի միության մեդալ	2014	
Հայոց ցեղասպանության 100-ամյակի հիշատակի հոբելյանական մեդալ	2015	
Բուլղարիայի հայերի միության կողմից շնորհված պատվոգիր	2015	

	Երկրապահ կամավորականների միության պատվոգիր Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների համառուսաստանյան հանձնախմբի մեդալ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2- րդ աստիճանի մեդալ՝ շնորհված ՀՀ նախագահի հրամանագրով	2015 2015 2015
Ռուզաննա Խաչիկի Հակոբյան	Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան 250-ամյակին նվիրված հուշամեդալ	2005
	Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգիր	2006 2008
	Հայաստանի պետական ագրարային համալսարանի 80-ամյակին նվիրված հոբելյանական ոսկե հուշամեդալ	2010
	Խաչատուր Աբովյանի անվան ոսկե մեդալ ՀՀ պաշտպանության նախարարության II բանակային զորամիավորման պատվոգիր	2011 2011
	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված մեդալ	2012
	Ֆ. Նանսենի անվան ոսկե մեդալ	2013
	Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքի հուշամեդալ	2013
	Բուլղարիայի Հանրապետության Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարանի մեդալ	2014
	Հունաստանի Հանրապետության Աթենքի Կապադոկիա համալսարանի մեդալ	2014
	«Հայաստանի երկրապահ» հուշամեդալ	2015
	ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» հուշամեդալ	2015
	Բուդապեշտ քաղաքի հոբելյանական մեդալ ՀՀ պաշտպանության նախարարության n զորամասի պատվոգիր	2015 2015
	ՀՀ փաստավավերագիրների ակադեմիայի ոսկե մեդալ	2017
- 2018թ. մայիսի 13-18-Շվեդիա, Վեկշո, աշխատաժողով Շվեդիայի Կառլ Լինեուսի անվան համալսարանում «LINEUS-PALMA» ծրագրի շրջանակում:

Կուտուզյան Նելլի

- 2017թ. փետրվարի 23 - Որակի ապահովման շահակիցների 4-րդ համաժողով՝ «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով վերապատրաստում Հայաստանի ամերիկյան համալսարանում:
- 2018թ. ապրիլի 14-22 – Իսպանիա, Վալյադոլիդ, ԵՄ «Erasmus+» տեղեկատվական շաբաթին մասնակցություն:

Կուսուցյան Նելլի, Հովհաննիսյան Մարինե

- 2017թ. հոկտեմբերի 13 – Հայաստան, Երևան, ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ. GOVERN» ծրագրի ամփոփիչ համաժողով:

Ապրոյան Արսեն

- 11-18 հուլիսի, 2018թ. - ԵՄ «Էրասմուս Պյուս SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes- (585620 -EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP)» եվրոպական ծրագրի շրջանակներում Բուլղարիայի Հանրապետության Վառնայի կառավարման համալսարանում կազմակերպված ծրագրի աշխատանքային հանդիպում,
- 13-20 մայիսի 2018թ. - ԵՄ «Էրասմուս Պյուս SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes- (585620 -EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP) » եվրոպական ծրագրի շրջանակներում Գերմանիայի Պադերբորնի համալսարանում կազմակերպված ծրագրի աշխատանքային հանդիպում,
- 16-21 ապրիլի, 2018թ. - Եվրոպական Միության «Էրասմուս Պյուս Գործողություն 1» ծրագրի շրջանակներում «Եվրոպայում բուհերի դերը փախստականների աջակցության գործում» թեմայով վերապատրաստում Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզա համալսարանում,
- 2-8 ապրիլի 2018թ. - ԵՄ «Էրասմուս Պյուս» գրասենյակի նախաձեռնությամբ Լեհաստանի Դոբրովա Գորնիչա համալսարանի կողմից կազմակերպված բուհերի Եվրոպական Միության դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ սեմինարին և աշխատաժողովին մասնակցություն,
- 12-18 փետրվարի, 2018թ. - ԵՄ «Էրասմուս Պյուս SMART Fostering university-enterprise cooperation and entrepreneurship of students via SMART Caffes- (585620 -EPP-1-2017-1-EL-EPPKA2-CBHE-JP)» եվրոպական ծրագրի շրջանակներում Հունաստանի Հանրապետության Սալոնիկի Ալեքսանդրի տեխնոլոգիական կրթական ինստիտուտում կազմակերպված ծրագրի աշխատանքային հանդիպում,
- 27 նոյեմբերի – 2 դեկտեմբերի 2017թ. - ԵՄ «Տեմպուս-ՌեթՀԻՆՔ (Reform of Education Thru International Knowledge exchange – RETHINK, Tempus Project No. 544178-TEMPUS-1-2013-1-PT-TEMPUS-JPCR)» ծրագրի ամփոփիչ հաշվետվության և կառավարման խորհրդի վերջին աշխատաժողովին մասնակցություն Գերմանիայի Համբուրգ քաղաքում, «Կառֆման» բիզնես, կրթական խորհրդատվական կազմակերպությունում,
- 13-15 հոկտեմբերի 2017թ. - ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի կողմից Դիլիջան քաղաքում կազմակերպված «Փախստականների իրավունքները» թեմայով 7-րդ աշնանային դպրոցին մասնակցություն,
- 28 սեպտեմբերի 2017թ. - ԵՄ «Տեմպուս-ՌեթՀԻՆՔ (Reform of Education Thru International Knowledge exchange – RETHINK, Tempus Project No. 544178-TEMPUS-1-2013-1-PT-TEMPUS-JPCR)» ծրագրի տեղեկատվական աշխատաժողովի մասնակցություն, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում, ք. Երևան,
- 18-23 սեպտեմբերի, 2017թ. - Ավստրիայի Վիեննա քաղաքում «Դիա Բերատեր» կրթական բարեփոխումների կազմակերպության կողմից կազմակերպված ԵՄ «Տեմպուս-ՌեթՀԻՆՔ (Reform of Education Thru International Knowledge exchange – RETHINK,

Tempus Project No. 544178-TEMPUS-1-2013-1-PT-TEMPUS-JPCR)» ծրագրի աուդիտին, ինչպես նաև կառավարման խորհրդի աշխատաժողովին մասնակցություն,

- 13 սեպտեմբերի, 2017թ. - ԵՄ «Տեմպուս-LeAGUe("A Network for Developing Lifelong Learning in Armenia, Georgia and Ukraine" Tempus Project No: 543839-TEMPUS-1-2013-1-SE-TEMPUS-SMHES - Tempus IV 6th call)» ծրագրի շրջանակներում կազմակերպված ծրագրի ամփոփիչ արդյունքների լուսաբանման աշխատաժողովին մասնակցություն, ք. Երևան:

Հակոբյան Արսեն

- 2018թ. հունվարի 20-փետրվարի 20 - Գիտահետազոտական աշխատանք, Մարթուրգի համալսարան, Գերմանիա, DAAD:
- 2018թ. օգոստոսի 16-սեպտեմբերի 1 - Ամառային դպրոց, «Կովկաս, մշակույթ, կրթություն», Վրաստան, Մեստիա:

Հայրապետյան Քանաքարա

- 2018թ. մայիսի 13-19, Աշխատաժողով Եվրոպական միության «Էրազմուս+ SMART Caffees» ծրագրի շրջանակներում, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Պատերբորն:

Ավագյան Սաթիկ

- 2017թ. սեպտեմբերի 22 - հոկտեմբերի 3 – Ավստրիա, Վիեննայի համալսարան «Erasmus+» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:
- 2017թ. նոյեմբերի 9-10 - Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, «Erasmus+» ծրագրի շրջանակում «Տեղեկատվական օրերը» թեմայով վերապատրաստում:
- 2018թ. ապրիլի 16-20 – Իսպանիա, Ալմերիայի համալսարան, «Erasmus+» ծրագրի շրջանակում վերապատրաստում:
- 2018թ. հունիսի 4-8 – Իտալիա, Սալերնոյի համալսարան, «Erasmus+» ծրագրի շրջանակներում վերապատրաստում:

Թոռյան Լիլիթ

- 2017թ. սեպտեմբերի 13 - Երևան, EU TEMPUS LEAGUE ծրագրի աշխատաժողով:
- 2017թ. հոկտեմբերի 23-26 - Պորտուգալիայի Կոմիբրիա համալսարան, EU TEMPUS LEAGUE «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի շրջանակներում աշխատաժողով:
- 2018թ. ապրիլի 11 – Հայ-ռուսական համալսարան, Երիտասարդ դասախոսների, ուսանողների և կարիերայի կենտրոնների պատասխանատուների աշխատաժողով:
- 2018թ. մայիսի 14-17 – Շվեդիայի թագավորություն, Կառլ Լինեուսի անվան համալսարան, «Linneus Palme» ծրագրի աշխատաժողով:

Խաչատրյան Սիրանուշ

- 2018թ. փետրվարի 13-16-ը- Հունաստանի Հանրապետության Սալոնիկ քաղաքում ԵՄ «Erasmus+ KA2. SMART» ծրագրի աշխատաժողով:

Սարգսյան Ռուզաննա

- 2017թ. հոկտեմբերի 5-6- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան «Ռուսաստանի պատմությունը, ռուսաց լեզուն և գրականությունը միջմշակութային տարածությունում» միջազգային գիտաժողով:
- 2017թ. հոկտեմբերի 10-16- Իտալիայի Պավիա համալսարանում դասախոսական աշխատանք:
- 2017թ. նոյեմբերի 20 Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոն, «Ռուսաց լեզուն որպես մշակույթների երկխոսության, գիտական համագործակցության, միջազգային և միջանձնային շփման երաշխիք 21-րդ դարում» միջազգային գիտաժողով:

Հայթյան Սաթենիկ

- 2018թ. մարտի 10-18- Պորտուգալիայի Մինյո համալսարանում դասախոսական աշխատանք:

Շեկյան Լավրենտի

- 2017թ. հոկտեմբերի 2-7 – Հայաստան, Ծաղկաձոր, «Հոծ միջավայրերի մեխանիկայի ժամանակակից հիմնախնդիրները» միջազգային 5-րդ գիտաժողով:

Ավագյան Արամայիս

- 2018թ. սեպտեմբերի 27-29 – Հայաստան, Երևան, Միջազգային կոնֆերանս՝ նվիրված Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին:

Հակոբյան Մամիկոն

- 2018թ. փետրվարի 20-ից մայիսի 20 - Հայաստան, Երևան, Դասախոսների կատարելագործման կենտրոնում «Հոգեբանություն» առարկայից վերապատրաստում:

Միրիբյան Արթուր

- 2018թ. օգոստոսի 10-11 – Հայաստան, Գավառ, «Luseen Technologies» տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրամում «Ապագայի մասնագիտություններ, ծրագրավորման լեզուների զարգացման միտումները» դասընթացին մասնակցություն:

Մարգարյան Անահիտ

- 2017թ. հոկտեմբերի 10-12 – Հայաստան, Երևան, «Կանանց նվաճումները կենսաբանական գիտությունների ոլորտում» II միջազգային գիտաժողով:
- 2018թ. մայիսի 25-26 - Հայաստան, Երևան, «Առողջապահության Զարգացման և Հետազոտման Կենտրոն» հասարակական կազմակերպության «Առողջ Հասարակության Ապագան...» խորագրով առաջին տարեկան գիտաժողով:
- 2018թ. հունիսի 8-9 - Հայաստան, Երևան, «Առողջությանն ընդառաջ» երկրորդ ամենամյա գիտա-կրթական կոնֆերանս:
- 2018թ. հունիսի 16 - Հայաստան, Երևան, «Որակի ապահովման բաղադրիչները դեղի կենսացիկլի ընթացքում» խորագրով ՀՀ դեղագործական կոնֆերանս-2018:

Մարգարյան Անահիտ, Հովհաննիսյան Մարինե, Ավետիսյան Վարազդատ, Հովհաննիսյան Մարգար, Ավետիսյան Կարինե, Մկրտչյան Լալա

- 2017թ. սեպտեմբերի 13 – Հայաստան, Երևան, ԵՄ «TEMPUS.LEAGUE — Հայաստանում, Կրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի ամփոփիչ աշխատաժողով:

Մարգարյան Անահիտ, Հովհաննիսյան Մարինե, Ավետիսյան Կարինե, Մկրտչյան Լալա, Բաղդոյան Շուշան

- 2017թ. սեպտեմբերի 28 – Հայաստան, Երևան, ԵՄ «TEMPUS. RETHINKe» ծրագրի տեղեկատվական-աջակից հանդիպում:

Մարգարյան Անահիտ, Հովհաննիսյան Մարինե

- 2018թ. փետրվարի 5-9 – Հունաստան, Սալոնիկ, ԵՄ «ERASMUS+ AbioNet- Կենսաբյուրեղային գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի մեկնարկային հանդիպում:

Սիրականյան Կարեն, Հովհաննիսյան Մարգար

- 2017թ. սեպտեմբերի 25-29 – Լեհաստան, Կրակով, ԵՄ «ERASMUS+ DOCMEN» ծրագրի շրջանակում «Միկրոէլեկտրոնային ճարտարագիտության ոլորտում երկաստիճան նորարարական ուսումնական ծրագրերի մշակում» թեմայով վերապատրաստում:

Ավետիսյան Վարազդատ, Միրիբյան Արթուր, Սիրականյան Կարեն, Զարգարյան Հայրիկ, Հակոբյան Մամիկոն, Բաղդոյան Շուշան

- 2017թ. դեկտեմբերի 6-8 – Հայաստան, Երևան, ԵՄ «ERASMUS+ DOCMEN» ծրագրի շրջանակում վարպետության դասեր:

Մխիթարյան Ազնիվ

- 2018թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 13 – Ռուսաստան, Մոսկվա, «Եվրասիական հայտերի ուսումնասիրություն և եվրասիական արտոնագրերի հանձնում քիմիայի, կենսատեխնոլոգիայի և բժշկության ոլորտներում» թեմայով վերապատրաստում:

Մուրադյան Վահագն

- 2017թ. հոկտեմբերի 26-27 – Ուզբեկստան, Նավոի, «Integrated innovative development of Zarafshan region: achievements, challenges and prospects» միջազգային գիտաժողովին մասնակցություն:
- 2018թ. հունիսի 18-23 – Բուլղարիա, Սոֆոպոլ, Քարտեզագրության և ԱՏՀ 7-րդ միջազգային գիտաժողովին մասնակցություն:
- 2018թ. - Հայաստան, Երևան, «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող (մինչև 35 տարեկան)- 2017» մրցույթի հաղթող:

Ղուլոյան Հակոբ, Հովեյան Աստղիկ

- 2018թ մարտի 13-14 - Սլովակիա, Կոշիցեի տեղնիկական համալսարան, «REFINE» ծրագրի աշխատաժողով:

Սահակյան Արմեն, Հարությունյան Հարություն

- 2018թ. մայիսի 1-7 - Հունգարիայի Հանրապետության Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, դասախոսական աշխատանք՝ «էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում:

Մուրադյան Գուրգեն

- 2018թ. մայիսի 7-13 - Հունգարիայի Հանրապետության Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարան, համաժողով, «էրազմուս+» ծրագրի շրջանակում վերապատրաստում:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2017-2018 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում իրականացվել են բուհի առաքելությունից բխող և համալսարանի զարգացման ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերով նախատեսված բազմաբնույթ աշխատանքներ՝ ուղենիշ ունենալով հաշվետու ուստարվա համար հայտարարված «2017-2018 ուստարին՝ նոր մոտեցումների և ակտիվ նախաձեռնությունների տարի» կարգախոսը, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների շտկման գործողությունների ծրագիրը, բարելավման պլանը:

2017-2018 ուստարում ուսանողների թիվը առկա բակալավրիատում կազմում էր 346 ուսանող, մագիստրատուրայում՝ 157, հեռակա ուսուցման համակարգում՝ 697, ընդամենը՝ 1200 ուսանող:

**Հաշվետու ուսումնական տարում ուսանողական համակազմի համալրման
ցուցանիշներն են.**

➤ Բակալավրիատի ընդունելություն՝

1. 2017թ.-ին համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի գծով ընդունվեց 50 դիմորդ:
2. Հեռակա ուսուցման համակարգում ընդունվեց 149-ը:

➤ Մագիստրատուրայի ընդունելություն՝

2017թ.-ին մագիստրատուրա ընդունվեց բակալավրիատի 85 շրջանավարտ:

➤ Ասպիրանտուրայի ընդունելություն՝ 1 դիմորդ.

➤ Շարունակական կրթության կարգով ընդունելություն՝

Համալսարանում 2017-2018 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո շարունակական կրթություն ստացողների քանակը կազմում է 15 ուսանող (նախորդ ուստարում՝ 29-ը):

➤ Երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություն՝ 6 ուսանող (նախորդ ուստարում՝ 16):


• Տեղափոխություններ՝

ԳՊՀ-ից՝ այլ բուհ ուսանող չի տեղափոխվել, իսկ Հայաստանի Հանրապետության և արտերկրի պետական բուհերից հաշվետու տարում սահմանված կարգով Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 21 ուսանող:

• Վերականգնումներ՝


Ուսանողական իրավունքները վերականգնել են 99 ուսանող:

ԳՊՀ ուսանողական համակազմի համալրման ցուցանիշների համեմատումը՝ հաշվետու և նախորդ ուստարիներին




2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն՝ առկա ուսուցման համակարգում

Հաշվետու ուստարում առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 75,1% (նախորդ ուստարում՝ 77,8%), նկատվել է 2,7% նվազում:




Ուսանողների առաջադիմության համեմատումը՝ նախորդ և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում




Հաշվետու ուստարում երկրորդ կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 78,3%:

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն՝ առկա համակարգում




2017-2018 ուստարում բուհն ավարտեց առկա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների 100%-ը, ամփոփիչ ատեստավորման արդյունքներով համալսարանի առկա բակալավրիատի 141, հեռակա բակալավրիատի 130 և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 67 ուսանողի շնորհիվեց համաեվրոպական նմուշի դիպլոմի երկլեզու հավելված՝ հայերեն և անգլերեն: Նախորդ տարիների առկա ուսուցման բակալավրիատի 4 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը: Նրանք հաջողությամբ հանձնելով ամփոփիչ ատեստավորման քննությունները՝ ավարտեցին բուհը: 2018թ. բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի 133 շրջանավարտ: Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտեցին նաև նախորդ տարիներին բուհը չավարտած 10 նախկին ուսանող: Հաշվետու ուստարում բուհն ավարտեց ուսանողների ընդհանուր թվի 100%-ը (2016-2017 ուստարում՝ 95%-ը):

2017-2018 ուսումնական տարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ տվյալներ



Գավառի պետական համալսարանի 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ տվյալներ




Ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման ընթացակարգի համաձայն, հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության ցուցանիշներով, առկա բակալավրիատի 17 ուսանող և մագիստրատուրայի 5 ուսանող փոխատեղման մրցույթի արդյունքում արձանագրեցին կարգավիճակի փոփոխություն:

Հաշվետու ուստարում շարունակվել են իրականացվել ուսանողներին ֆինանսական աջակցման բազմաթիվ ծրագրեր: Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողները ֆինանսական աջակցություն են ստացել պետական բյուջեից, համալսարանի միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից:

2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցողների վերաբերյալ տվյալներ

Հաշվետու ժամանակահատվածում բուհում դասավանդել են թվով 132 դասախոս, որոնց 7,1%-ը գործատուներ են, դասախոսների ընդհանուր թվի 51,5%-ը ունեն գիտական համապատասխան աստիճան և կոչում: Ընդհանուր առմամբ բավարարված են բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմին առաջադրվող պահանջները:



Հաշվետու ուստարում մշակվել են ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի /ՌԾ/ գործունեության առաջնահերթությունները՝ նախատեսված յուրաքանչյուր ոլորտի համար: Մշակվել են ՌԾ իրականացմանն ուղղված գործողությունների հնգամյա և տարեկան ծրագրերը՝ ըստ պատասխանատուների, առկա և պահանջվող ռեսուրսների, հնարավոր խոչընդոտների, մարտահրավերների և վերջնարդյունքների գնահատման ցուցիչների: Դրանից բխեցված մշակվել են ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական հնգամյա և տարեկան ծրագրերը, համալսարանի 2017-2022թթ. ՌԾ իրականացմանն ուղղված հնգամյա և տարեկան գործողությունների մշտադիտարկման պլանները՝ ըստ պատասխանատուների, արդյունավետության նախանշված և իրականացված գնահատման ցուցիչների:

Իրականացվել են աշխատանքներ՝ ներդնելու Որակի ապահովման բաժնի կողմից կառուցվածքային ստորաբաժանումների պլանավորված և փաստացի արդյունավետության ցուցիչների մշտադիտարկման կառուցակարգ, սակայն այդ ուղղությամբ ծավալվող աշխատանքները կատարելագործման, մշտական բարելավման կարիք ունեն:

Վերանայվել և լրամշակվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները, սովորողների՝ ակնկալվող ընդհանրական, մասնագիտական և գործնական իրազեկությունները՝ համաձայնեցված ՈԱՇ-ի, ՈՈՇ-ի համապատասխան մակարդակներին, առկա ուսուցման բակալավրիատի 15 և մագիստրատուրայի 13, հեռակա ուսուցման բակալավրիատի 13 ՄԿԾ-ների գծով:

Արդիականացվել, վերանայվել և լրամշակվել են դասընթացների, պրակտիկաների ծրագրերը՝ կրեդիտների հատկացման, ուսուցման և ուսումնառության, գնահատման փոխկապակցված մեթոդների, առկա և հեռակա ուսուցման ձևերում դասընթացների լսարանային և ինքնուրույն ժամաքանակների և վերջնարդյունքների հասանելիության տեսանկյունից, ինչպես նաև առարկայական ծրագրերում ամրագրվել են գնահատման նկարագրիչներ /ռուբրիկներ/: Աշխատանքների իրականացման արդյունավետության ապահովման նպատակով հաշվետու ուստարվա ընթացքում կազմակերպվել են դասախոսական անձնակազմի, կրթական ծրագրերի ղեկավարների վերապատրաստման ծրագրեր մասնագիտական, մանկավարժական, մեթոդաբանական ուղղություններով, մասնավորապես, ուսուցման և ուսումնառության, սովորողների գիտելիքների ստուգման և

գնահատման մեթոդների և վերջնարդյունքների փոխկապակցման, ինչպես նաև դասընթացներին կրեդիտների հատկացման մեթոդաբանության վերաբերյալ:

Աշխատանքները շարունակվում են առարկայական ծրագրերում նաև յուրաքանչյուր թեմայի կրթական վերջնարդյունքների ամրագրման, ինչպես նաև դրանց հասնելու համար տեսական և գործնական նյութերի արդիականացման և բազմազանեցման, յուրաքանչյուր դասընթացում իրավիճակային խնդիրների ներառման ուղղությամբ: Իրականացվել են նաև աշխատանքներ ՄԿԾ-ների և նորացված առարկայական ծրագրերի վերջնարդյունքների քարտեզագրման ուղղությամբ:

Նոր մեթոդաբանությամբ մշակվել են ՄԿԾ-ների մասնագրերը, դրանցում ամրագրվել են ՄԿԾ-ի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ շնորհվող որակավորման, ընդունելության չափանիշների, ավարտական պահանջների, մասնագիտական և ընդհանրական իրազեկությունների, կրթական վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների, գնահատման համակարգի, ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների, շրջանավարտի հետագա մասնագիտական գործունեության ոլորտների, ծրագրի ռիսկայնության և կայունության, պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների, շրջանավարտի հետագա ուսման հնարավորությունների վերաբերյալ: Մասնագրի առաջին մասում նկարագրված են կրեդիտային համակարգի հիմնական հասկացությունները, իսկ երկրորդ մասը նվիրված է դասընթացների նկարագրերին:

Համակարգված աշխատանքներ են ծավալվել ՄԿԾ-ների մասնագրերում կամընտրական կրթամասի դասընթացների նպատակների, վերջնարդյունքների նկարագրության և վերջիններս ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ քարտեզագրման ուղղությամբ:

Մշակվել և գործարկվել են կամընտրական դասընթացների ընտրության ձևաթղթեր:

Իրականացնելով համեմատական վերլուծություններ, ուսումնասիրելով աշխատաշուկայի պահանջները, ինչպես նաև ուսանողների հորիզոնական տեղաշարժի դյուրացման, կրեդիտների կուտակողական գործառույթի կիրառման տեսանկյունից վերանայվել են ՄԿԾ-ների ուսումնական պլանները:

Հաշվետու ուստարում համալսարանում իրականացվող «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ասպիրանտական գիտակրթական ծրագրի ուսումնական պլանը ևս կրել է փոփոխություններ, ներառվել են դասընթացներ, որոնք միտված են սովորողներին զինելու խոր մասնագիտական գիտելիքներով ու կարողություններով, տիրապետելու սոցիոլոգիական հետազոտությունների, հետագա կարիերայի կառավարման և աշխատանքի որոնման ձևերին ու կառուցակարգերին, ինչպես նաև հետազոտության թեմային առնչվող իրավական ակտերի ուսումնասիրության մեթոդներին:

Ասպիրանտական ծրագրում հետազոտության ուղղվածություն սահմանվեց՝ հաշվի առնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման համար կարևոր և հեռանկարային ոլորտը՝ գյուղատնտեսությունը, մասնավորապես, գյուղատնտեսության ապահովագրությունը, ակնկալելով գործնական արդյունքների ապահովում: Ասպիրանտի գիտական ղեկավարի և հետազոտության թեմայի հաստատման համար համալսարանը դիմեց Հայաստանի

պետական տնտեսագիտական համալսարանի գիտխորհրդին, որը և հաստատեց ասպիրանտի գիտական ղեկավարին և հետազոտության թեման: Տարեվերջին սահմանված ձևով իրականացվեց առաջին և երկրորդ կուրսերում սովորող ասպիրանտների ատեստավորման գործընթաց:

«Հ բուհերի վարկանիշավորման համակարգում, բուհերի դասակարգման համապատասխան խմբում համալսարանը պահպանեց երկրորդ տեղը՝ զիջելով Հայաստանում ամերիկյան համալսարանին:

Կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառման, դրանց արդյունքների, վերլուծությունների հրապարակման, շահակիցների ներգրավմամբ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցման և ամբողջականացման, իրականացվող բոլոր գործընթացների որակը գնահատելու և դրա շարունակական բարելավման ընթացքն ապահովելու նպատակներով ակտիվորեն ներգրավվել են ուսանողական ինքնակառավարման մարմինները: Պարբերաբար ուսումնասիրվել են շահառուների բավարարվածության աստիճանը ԳՊՀ-ում առկա ուսումնական, տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներից:

Մշակվել է «ԳՊՀ որակի ապահովման քաղաքականություն»-ը, որում նախատեսված են ԳՊՀ որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը և սուբյեկտները: Հստակ սահմանվել են նշված ուղղությամբ Որակի ապահովման բաժնի մասնագետների, ֆակուլտետային պատասխանատուների պարտականություններն ու գործառույթները: Լրամշակվել են բոլոր հարցաթերթիկները, իրականացված հարցման արդյունքները վերլուծվել են:

Համալսարանի գործունեությունը կարգավորող ներբուհական փաստաթղթերի և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերատեսչական և այլ ակտերի համապատասխանության ապահովման նպատակով հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները համալսարանի տարբեր կանոնակարգերի դրույթների իրականացման արդյունավետության գնահատման, շեղումների հայտնաբերման ուղղությամբ:

Լրամշակվել են ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը, հստակեցվել գործառույթները՝ դրանք համապատասխանեցնելով բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Շահակիցների կարծիքների հաշվառմամբ մշակվել կամ լրամշակվել են արդիականությունը կորցրած կամ օրենսդրական, գերատեսչական գործող ակտերի հետ ոչ համահունչ դրույթներ պարունակող կանոնակարգերի նոր նախագծեր, բարելավված կամ նոր մշակված կանոնակարգերը հաստատվել են գիտական խորհրդում: Վերանայվել են՝ «ԳՊՀ հանրային նշանակությամբ միջոցառումների կազմակերպման և դրանց մասին իրազեկման և հասարակության հետ տարվող աշխատանքների կանոնակարգ»-ը, «ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը, «ԳՊՀ ֆակուլտետների ղեկանների ընտրության ընթացակարգ»-ը: Մշակվել և հաստատվել է «ԳՊՀ ռազմավարական ծրագիր /2017-2022թթ . /»-ը, «ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր /2017-2022թթ./»-ը, «Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգ»-ը, «Արտաքին կապերի և լրատվության բաժնի կանոնակարգ»-ը,

«ԳՊՀ ռազմավարական ծրագրի և ներքուհական իրավական ակտերի մշակման, ընդունման և փոփոխման ընթացակարգ»-ը, «ԳՊՀ էթիկայի կանոններ»-ը:

Սահմանված կարգով տեղի են ունեցել ԳՊՀ ֆակուլտետների դեկանների, ինչպես նաև Պատմության և Հաշվապահական հաշվառման ամբիոնների վարիչների ընտրություններ, համապատասխան պաշտոնների թափուր տեղերի մրցույթի վերաբերյալ՝ հայտարարությունները նախապես հրապարակելով համալսարանի պաշտոնական կայքէջում, հանրապետական մամուլում: Թեկնածուները պահանջվող փաստաթղթերի հետ մեկտեղ ներկայացրին համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման հնգամյա զարգացման ծրագրերը, որոնք բխեցված էին «ԳՊՀ ռազմավարական ծրագիր/2017-2022թթ./», «ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիր /2017-2022թթ. /» փաստաթղթերից:

Հստակ սահմանվել են համալսարանի բոլոր հաստիքների աշխատանքային նկարագրերը, բարելավվել է մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը՝ իրականացնելով գործընթացների գնահատում, խորքային վերլուծություններ՝ հիմնված յուրաքանչյուր աշխատակցի՝ իր կողմից կատարված գործողությունների կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, դրանց՝ պաշտոնի նկարագրերի համապատասխանության ապահովման վրա, որի արդյունքների հաշվառմամբ կիրառվել են պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի գնահատման և խրախուսման կառուցակարգեր:

Հստակեցվել են ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունները՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական և ուսումնամեթոդական նյութերի տպագրման աշխատանքները: Համալսարանի գիտխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ԳՊՀ դասախոս Վաչագան Գրիգորյանի հեղինակած «19-րդ դարի հայ գրականության պատմություն» դասագիրքը, Արսեն Հակոբյանի հեղինակած «Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական պատմություն», Վ. Առաքելյանի, Հ. Բաբայանի և Լ. Ղուկասյանի համահեղինակությամբ կազմված «Ֆինանսական հաշվառում», «Հաշվառման կազմակերպումը փոքր և միջին բիզնեսում» մեթոդական ձեռնարկները:

Հաշվետու ժամանակահատվածում գիտխորհուրդը ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Արսեն Հակոբյանին շնորհել է դոցենտի կոչում և համապատասխան ընթացակարգով ներկայացրել որոշումը ՀՀ ԲՈՀ՝ հաստատման նպատակով:

Գրավիչ ակադեմիական միջավայրի ստեղծման նպատակով ԳՊՀ կրթական միջավայրի վերաբերյալ շահառուների շրջանում պարբերաբար անցկացվել են հարցումներ, բացահայտվել շահակիցների կարիքները, ապա նաև իրականացվել թերությունների շտկում:

Վերանայվել և լրամշակվել են շահառուների շրջանում անցկացվող հարցաթերթերի բովանդակությունը, ինչպես նաև կանոնակարգվել հարցումների անցկացման պարբերականությունն ու ժամկետները:

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների սովորողների նախասիրություններին ու կարողություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ նրանց մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով հաշվետու ուստարում կնքվել են պայմանագրեր Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան, Լանջաղբյուրի Վ. Ադամյանի անվան, Նորատուսի թիվ 1, Նորատուսի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2, Նորատուսի թիվ 3, Կարմիրգյուղի թիվ 1 և թիվ 2, Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2, Լճափի, Հայրավանքի, Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2, Գավառի Ավ. Իսահակյանի անվան թիվ 4, Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8, Սևանի Վ. Կարապետյանի անվան թիվ 3, Ջովաբերի Ե. Չարենցի անվան, Ակունքի, Դոմաշենի միջնակարգ, Գավառի թիվ 5 հիմնական, Գավառի ավագ դպրոցների, Վարդենիկի կրթահամալիրի հետ:

Համալսարանի ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների անցկացման, երիտասարդ մասնագետների համար նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման հնարավորությունների ստեղծման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների և աշխատանքային ծրագրերի իրականացման նպատակներով կնքվել է պայմանագիր համալսարանի և «Ինստիգեյթ» ուսումնական կենտրոնի միջև:

Կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատման, իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրման, առարկայական ծրագրերի, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացման, կրթական ծրագրերի և առանձին դասընթացների համատեղ մշակման, սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր-սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպման նպատակներով պայմանագիր է կնքվել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի հետ:

Ուսումնական հաստատություն-աշխատաշուկա կապի ամրապնդման, ուսումնական հաստատություն-գործատու համագործակցության զարգացման, ինչպես նաև երիտասարդների՝ աշխատաշուկայում արագ ինտեգրման աջակցման, աշխատաշուկայի պահանջների, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետության գնահատման, ոլորտի վերաբերյալ հետազոտությունների իրականացման, ուսումնական ծրագրերի և կրթական չափորոշիչների բարելավման, բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և ղեկավարման նպատակներով կնքվել է պայմանագիր Հայաստանի Գործատուների հանրապետական միության և համալսարանի միջև:

Գավառի պետական համալսարանը, կարևորելով համագործակցությունը Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ, ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ հանդիպումներ է կազմակերպվել մարզի դպրոցների աշակերտական խորհրդի անդամների հետ: Բնագիտության լաբորատորիայում շարունակաբար իրականացվել են ուսումնական փորձարարական դասեր մարզի դպրոցների աշակերտների և մանկավարժների մասնակցությամբ, տեղի են ունեցել քննարկումներ, աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը միտված այլ միջոցառումներ:

Ուսանողների գործնական հմտությունների զարգացման նպատակով շարունակվել են համագործակցային աշխատանքները հանրապետության կրթական, գիտական, ուսանողական, հասարակական կառույցների հետ՝ ապահովելով ակտիվ մասնակցություն, գրավելով մրցանակային տեղեր: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) համատեղ կազմակերպած քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված դատախաղ-մրցույթին մասնակից Գավառի պետական համալսարանի՝ «Գեղամա» թիմը, մրցույթի արդյունքներով արժանացավ «Ինքնատիպ թիմ» կոչումին, ինչպես նաև դատավորների խորհրդի սահմանած մրցանակին:

Մասնագիտական ոլորտի նորագույն նվաճումների մասին տեղեկատվության ապահովման նպատակով ուսանողները մասնակցեցին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում կազմակերպված «Դիջիթալ էքսպո-2017» 13-րդ ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդեսին, իսկ տնտեսագետ ուսանողները՝ ուսումնական այց ունեցան «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերություն և Ռուսական գիտության և մշակույթի կենտրոն: Բնագիտական ֆակուլտետի ուսանողները այցելեցին Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ: Ողջ ուսումնական տարվա ընթացքում շարունակաբար կազմակերպվել են նմանատիպ այլ այցեր:

Հաշվետու ուստարում ևս համալսարանում իրականացվեցին ուսանողների հետազոտական նախաձեռնությունների աջակցման նախագծեր, ապահովվեց ուսանողների մասնակցությունը հանրապետության տարբեր բուհերում կազմակերպված ուսանողական գիտաժողովներին, մասնավորապես, ուսանողները զեկուցումներով հանդես եկան Երևանի պետական համալսարանում կայացած բուհի Ուսանողական գիտական ընկերության 4-րդ միջազգային գիտաժողովին՝ նվիրված ՈԻԳԸ հիմնադրման 70-ամյակին, Գորիսի պետական համալսարանում կազմակերպված երկօրյա հանրապետական ուսանողական գիտաժողովին՝ նվիրված բուհի հիմնադրման 50-ամյակին, Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցած Ուսանողական գիտական ընկերության տարեկան գիտական նստաշրջանին, Արցախի պետական համալսարանում կազմակերպված գիտաժողովին՝ նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում համալսարանում տեղի են ունեցել ուսանողական բազմաթիվ գտաժողովներ, մասնավորապես, Բանասիրական ֆակուլտետում՝ «Հայոց լեզվի արդի հիմնախնդիրները», Բնագիտական ֆակուլտետում՝ «Սիրտ-անոթային հիվանդությունները և դրանց կանխարգելումը», «Մոլեկուլային գենետիկայի ձեռքբերումները և ներդրումը բժշկության մեջ», Տնտեսագիտական ֆակուլտետում՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկա վիճակը և զարգացման միտումները», Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում՝ «Ներառական կրթության հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները», «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական շինարարության համեմատա-իրավական վերլուծություն» և այլ թեմաներով:

Համալսարանում տեղի են ունեցել ուսումնական, գիտական, հետազոտական նորարարական թեմաներով բաց դասախոսություններ՝ ոլորտի հայտնի ներկայացուցիչների կողմից, որոնց հաջորդել են մասնագիտական քննարկումներ բուհի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Մասնավորապես, սեմինար-քննարկում է տեղի ունեցել՝ նվիրված գիտական հոդված գրելու կարևորությանը, բովանդակային և կառուցվածքային չափանիշներին, սեմինար-քննարկում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի արդի հիմնախնդիրներին, կրթության նորմատիվ իրավական հիմքերին, որակյալ կրթության ապահովման գործում երիտասարդների դերակատարությանը և այլ բնույթի քննարկումներ բուհի ուսանողների, դասախոսների, մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժների մասնակցությամբ:

Համալսարանում շարունակվել են աշխատանքները կրթության ոլորտում ՀՀ օրենսդրական ակտերի մշակման կամ լրամշակման ուղղությամբ: Հաշվետու ուստարում ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կայացած «Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները» թեմայով խորհրդարանական լուսններումնեում ԳՊՀ ղեկավար Ռուզաննա Հակոբյանը ելույթ ունեցավ օրինագծի նորմատիվ բովանդակության, կարգավորման առարկայի և նպատակների, հետազոտական գործունեության իրավական հիմքերի, գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգի՝ մասնագիտության դոկտորի (գիտությունների թեկնածուի) և գիտության դոկտորի աստիճանների, նախաբակալավրիատի կարճ շրջափուլի, բուհերի կառավարման համակարգի և այլ հիմնախնդիրների մասին՝ ներկայացնելով համապատասխան օրենսդրական առաջարկություններ՝ միտված օրինագծում նախատեսված իրավակարգավորումների հստակեցմանը:

Իրականացված կրթական, դաստիարակչական, հետազոտական աշխատանքների արդյունքում համալսարանի ուսանողները լուրջ հաջողություններ արձանագրեցին ակադեմիական, հասարակական ակտիվության դրսևորման բազմազան նախագծերում, մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ անցկացվող «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում ԳՊՀ հինգ ուսանող հաղթող ճանաչվեց բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ՝ ՏՀՏ), հումանիտար գիտությունների, հասարակագիտության, հայագիտության ոլորտներում:

Հաշվետու ուստարում համալսարանում կայացավ բուհի ամենամյա 20-րդ գիտաժողովը՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր-ղեկավար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 90-ամյակին, որին մասնակցեցին ինչպես ԳՊՀ, այնպես էլ այլ բուհերի 92 գիտնականներ, հետազոտողներ, ասպիրանտներ, մանկավարժներ: Ներկայացված զեկուցումներից 76-ը երաշխավորվեց տպագրության:

Համալսարանի դասախոսների գիտական, մանկավարժական, հետազոտական գործունեությունը բարձր է գնահատվել հանրապետական մակարդակում ևս, նրանցից արժանացել են պետական պարգևների, մասնավորապես, «Թարգմանական գրականություն» անվանակարգում ակնառու նվաճումների համար ՀՀ նախագահի մրցանակին արժանացավ Գավառի պետական համալսարանի դասախոս, բանասիրական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյանը, իսկ Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանը պարզևատրվեց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով՝ երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության գործում ներդրած ավանդի ու ազգանպաստ գիտամանկավարժական գործունեության համար:

Համալսարանի ուսումնագիտական գործունեության մեջ հատուկ կարևորելով աշխատաշուկայի պահանջներն ու շրջանավարտների համապատասխան իրազեկություններից գործատուների ակնկալիքները՝ համալսարանում կազմակերպվեց կյոթ-սեղան քննարում, որին մասնակցում էին Հայաստանի Գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) նախագահ Գագիկ Մակարյանը, ՀԳՀՄ անդամ կազմակերպությունների աշխատանքը համակարգող Նելլի Գասպարյանը և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի ու Ճամբարակի տարածաշրջանների տարբեր ոլորտներ ներկայացնող 45 գործատու: Կայացած աշխատաժողովում որոշում ընդունվեց ստեղծել ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի Գործատուների հանրապետական միության տարածքային միավորում, որին անդամակցեց նաև համալսարանը՝ նպատակ ունենալով կրթության բովանդակության արդիականացման գործում համագործակցել միավորման հետ, հաշվի առնել շրջանավարտներին ներկայացվող պահանջները:

2018-2019 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները

2018-2019 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում հայտարարել նոր մրաժողության, նոր մոտեցումների և նոր տեսլականի տարի

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Ակտիվացնել հանրակրթական դպրոցների հետ համալսարանի համագործակցությունը, բազմազանեցնել աշխատանքները, ներդնել այդ ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության գնահատման կառուցակարգեր:
2. Մարզի հանրակրթական և ավագ դպրոցների աշակերտների, թիրախային այլ խմբերի շրջանում իրականացնել հարցախոյզեր, ամփոփել արդյունքները, ճշգրտել բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկը:
3. Նոր մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար ապահովել անհրաժեշտ ուսումնամեթոդական, կադրային, ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսներ:
4. Լրամշակել համալսարանում գործող՝ մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը՝ գնահատման հստակ

- չափանիշներ սահմանելով նորարարական, հետազոտական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների համար:
5. Իրականացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման ծրագրեր՝ ուսանողների հետազոտական աշխատանքները ըստ բաղադրիչների գնահատելու վերաբերյալ:
 6. Իրականացնել ամփոփիչ ատեստավորման գործընթացը՝ ըստ գնահատման նոր մեթոդաբանության:
 7. Բարձրացնել համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորողների ուսումնական, արտադրական, նախաավարտական, գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետությունը:
 8. Սովորողների հետադարձ կապի ուսումնասիրման գործում ակտիվորեն ներգրավել ուսանողական ինքնակառավարման մարմիններին:
 9. Հստակ սահմանել Որակի ապահովման բաժնի մասնագետների, ֆակուլտետային պատասխանատուների պարտականություններն ու գործառույթները:

**ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

10. Հստակեցնել ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունները՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ:
11. Ամբիոններում իրականացրած հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների, կատարված աշխատանքների գնահատումների հիման վրա հրապարակել վերլուծություններ:
12. Մշակել ամբիոնների հետազոտական գործունեության երկարաժամկետ, և կարճաժամկետ ծրագրեր:
13. Հանրապետության առաջատար գիտահետազոտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների հետ կնքել պայմանագրեր, հետազոտական լաբորատորիաները համատեղ օգտագործելու վերաբերյալ, ընդլայնել ուսանողների հետազոտական պրակտիկաների բազաները:

**ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ**

14. Կատարելագործել էլեկտրոնային ուսուցման համակարգի («E.Learning.GSU.am») տեխնիկական հնարավորությունները, նախագծել նոր ենթածրագրեր:
15. Թարմացնել համակարգում ներբեռնված ուսումնական նյութերի բովանդակությունը:
16. Շահառուների շրջանում ուսումնասիրել նրանց անհրաժեշտ էլեկտրոնային ռեսուրսների կարիքները, նախագծել դրանց բավարարման կառուցակարգեր:
17. Աշխատանքներ տանել համալսարանի կենտրոնական մասնաշենքի աստիճանների վրա թեքահարթակի կառուցման ուղղությամբ:

18. Արդիականացնել և համալրել լինգաֆոնային լսարանի սարքավորումները:
19. Իրավագիտության բաժնի ուսանողների գործնական հմտությունների զարգացման նպատակով հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում հիմնել կրիմինալիստիկայի լաբորատորիա՝ հագեցած փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով:
20. Բնագիտության լաբորատորիան համալրել նոր սարքերով, նյութերով ուսանողների, աշխատակիցների գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսներով:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

21. Բարձրացնել ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետությունը, բացահայտել ուսանողների կրթական կարիքները, վեր հանել և համապատասխան լուծում տալ նրանց խնդիրներին, բարձրացնել սովորողների ինքնուրույնությունն իրենց կրթական անհատական ծրագիրը կազմելու և ուսմանը վերաբերող այլ հարցերում:
22. Մշակել նոր լրացուցիչ կրթական ծրագրեր, իրականացնել հանրության շրջանում դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածում:
23. Կազմակերպել օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ:
24. Նախագծել և գործարկել օտարալեզու ուսումնական կայքէջ:
25. Բոլոր ՄԿԾ-ների գծով մշակել օտարալեզու դասընթացներ:
26. Համակարգչային գրագիտության բարձրացման նպատակով իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր:
27. Բազմազանեցնել ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգման ու գնահատման ձևերը՝ կարևորելով գիտելիքի, կարողությունների և հմտությունների ստուգման տարբերակված մեթոդները:
28. Ուսանողների համար կազմակերպել կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումներ, ինտելեկտուալ մրցույթներ, «Լավագույն ուսանող», «Լավագույն խումբ», «Լավագույն ֆակուլտետ», ինչպես նաև «Լավագույն դասախոս», «Լավագույն գիտական աշխատանք» և այլ անվանակարգերում ամենամյա մրցանակաբաշխություններ, գիտելիքի արժևորմանը միտված այլ ծրագրեր:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

29. Լրամշակել կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը:

30. Հստակեցնել կառուցվածքային ստորաբաժանումների, անձնակազմի գործառույթները՝ դրանք համապատասխանեցնելով համալսարանի կանոնադրական խնդիրների և ռազմավարական նպատակների իրականացմանը:
31. Կատարելագործել դասախոսական և վարչական անձնակազմի մրցույթի և ընտրության գործընթացները, ապահովել դրանց օբյեկտիվությունն ու թափանցիկությունը:
32. Մշակել և գործարկել անձնակազմի ծառայողական արդյունավետության մշտադիտարկման կառուցակարգեր, ներկայացնել կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:
33. Կիրառել խրախուսման կառուցակարգեր՝ շահակիցների կարծիքների և առաջարկությունների հաշվառմամբ:
34. Իրականացնել երիտասարդ դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ, ներդնել կրեդիտների կուտակողական համակարգ:
35. Լրամշակել ԳՊՀ գործավարության կարգը:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

36. Մշակել ֆինանսական վերլուծություններ՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը, կատարել ֆինանսական երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում՝ ըստ համալսարանի ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների:
37. Պարբերաբար ուսումնասիրել շահառուների բավարարվածության աստիճանը ֆինանսական ռեսուրսներից, բացահայտել ֆինանսական կարիքները:
38. Իրականացնել պետական և /կամ/ մասնավոր ոլորտի կողմից ֆինանսավորվող գիտակրթական ծրագրեր:
39. Ուսանողների շրջանում զարգացնել փոքր դրամաշնորհային ծրագրերին մասնակցության հայտերի մշակման և ներկայացման կարողությունները, կազմակերպել համապատասխան սեմինարներ, խորհրդատվություններ:
40. Շարունակաբար համալրել սոցիալապես անապահով ուսանողների անձնական տվյալների էլեկտրոնային բազան:
41. Աշխատակիցների հաշվետվությունների հիման վրա իրականացնել գնահատումներ, կիրառել խրախուսման կառուցակարգեր, ԳՊՀ տարեկան բյուջեում պլանավորել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումներ:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

42. Համակարգված աշխատանքներ կատարել համալսարանի արտաքին կապերի ընդլայնման ուղղությամբ և մշտադիտարկել միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը:

- 43. Մշակել և գործարկել հենանիշային վերլուծության (բենչմարքինգի) արդյունավետության գնահատման կառուցակարգեր:
- 44. Իրականացնել հենանիշային ուսումնասիրությունների խորքային վերլուծություններ, հրապարակել դրանց արդյունավետության գնահատումները:
- 45. Մշակել և ներդնել համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների գծով հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշման բազմազան կառուցակարգեր՝ շարունակաբար գնահատելով դրանց արդյունավետությունը, և ըստ դրա կատարելով համապատասխան շտկումներ:

**ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

- 46. Նախագծել և գործարկել հանրության տարբեր շերտերի կրթական կարիքների ուսումնասիրման էլեկտրոնային հարթակ:
- 47. Մշակել և իրականացնել լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր:
- 48. Կատարել շարունակական աշխատանքներ համալսարանում շահակիցներին տրամադրվող աջակցման ծրագրերի արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:
- 49. Ներքին շահակիցների շրջանում պարբերաբար իրականացնել նյութական բավարարվածության աստիճանի գնահատում և դրան համապատասխան ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

**ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

- 50. Հետևողականորեն կիրառել ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրոյթները և ԳՊՀ էթիկայի կանոնները, իրականացնել ուսանողների իրավագիտակցության բարձրացման ծրագրեր:
- 51. Դասախոսների, ուսանողների, աշխատակիցների շրջանում հնարավոր կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ անանուն հարցումներ իրականացնել, արդյունքներն ամփոփել, ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ:
- 52. Վերանայել համալսարանում ծագած վեճերը քննող հանձնաժողովի գործունեության ընթացակարգը:
- 53. Կատարել բուհում անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության գնահատումներ, վերլուծություններ:
- 54. Իրավագիտության բաժնի ուսանողների միջոցով աշակերտների շրջանում մշակել և իրականացնել իրավագիտակցության բարձրացման ծրագրեր:

**Ն. Ա. Կուրուզյան՝
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԵՎ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, 2017թ. բյուջեն և 2018թ.բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել 2017-2022թթ ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հիմք են ընդունվում համապատասխան ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Այսպիսով, ըստ ԳՊՀ 2017-2022թթ. Ռազմավարական ծրագրի ուղղությունների՝ ԳՊՀ բյուջեի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 71.5%, որը իր մեջ ներառում է նաև այլ ոլորտների համար նախատեսված միջոցները:

2. Գիտահետազոտական գործունեության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.4%:

3. Կրթական միջավայրի արդիականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.9%:

4. Ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.8%:

5. Վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.8%:

6. Ֆինանսական գործունեության և ներքուհական տնտեսության կազմակերպման ոլորտներում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.8%:

7. Արտաքին կապերի և համագործակցության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ փոստային և կապի վճարներ, այլ ծառայությունների և ներկայացուցչական ու գործուղման ծախսեր, մարքեթինգի և գովազդի ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.2%:

8. Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 5 %

9. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.1 %:

Ստորև ներկայացվում է 2017 թվականի բյուջեի կատարողականի և 2018 թվականի բյուջեի նախահաշվի վերլուծությունը.

Գավառի պետական համալսարանի 2017թ-ի և 2018թ-ի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին: Այս սկզբունքը պահպանվել է 2017թ-ի ծախսերը կատարելիս՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով:

Այսպիսով, 2017թ-ին պլանավորված մուտքերի 83 տոկոսը բաժին է ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 76 տոկոս, քանի որ հոդվածով 2017թ-ի համար պլանավորված գումարը ամբողջովին չի կատարվել՝ պայմանավորված ընդունելության արդյունքներով ուսանողների քանակի նվազումով, և ըստ մեր գնահատականների այդ միտումը պահպանվելու է նաև 2018թ-ի ընթացքում, ուստի 2018թ-ի համար այս ցուցանիշի պլանավորված մեծությունը նվազեցվել է 2017թ-ի կատարողականին համապատասխան: Քանի որ այս հոդվածով արձանագրվել և նախատեսվում է եկամուտների նվազում, հետևաբար դա իր ազդեցությունն է թողել ելքերը պլանավորելիս:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը, բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2017թ-ի պլանավորման,

կազմել է 12.6 տոկոս, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից սոցիալապես անապահով ընտանիքների երեխա ուսանողներին հատկացվող ֆինանսավորման գումարը աճել է, 2018թ-ի համար պլանավորված գումարը սահմանվել է կատարողականի սահմաններում, այնուամենայնիվ՝ պայմանավորված 2018/2019 ուստարվա ընդունելության արդյունքների անորոշությամբ, հնարավոր չէ արժանահավատորեն կանխատեսել և գնահատել այդ մեծությունը:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 3 տոկոսից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 8.3 տոկոս, քանի որ համալսարանը ունեցել է նոր դրամաշնորհային պայմանագրեր և, դրանց գծով ֆինանսավորումը ստացվել է 2017թ-ի ընթացքում:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը գրեթե 1.1 տոկոսով կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են ընդունելության քննություններից և գործերի ընդունումից մուտքերը, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է 1.2 տոկոս:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 80 տոկոսը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որոնք իրենց մեջ ներառում են նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը, և՛ ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, այնպես էլ հետազոտական ոլորտի աշխատակիցներին վճարումները:

Վճարումներ պետական բյուջե /Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդվածի գծով 2017թ-ի համար պլանավորումը կազմել է գրեթե 0.7 տոկոս, բայց կատարվել է 0.3 տոկոսը, պայմանավորված ավելի փոքր շահութահարկի գումարի ձևավորմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ՀՀ վարած հարկային քաղաքականությանը համապատասխան: Հոդվածով նախատեսվել է աճ, քանի որ 2018թ-ի համար նախատեսվել է շահույթի ավելացում և դրա հետևանքով շահութահարկի վճարում:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 5.2 տոկոսը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր: Հոդվածը կատարվել է ամբողջությամբ, և 2018թ-ի համար նախատեսվել է բյուջեի մոտ 5 տոկոսը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարներ պլանավորվել են 0.4 տոկոսի չափով: Հոդվածն ըստ էության կատարվել է և հաջորդ տարվա համար պլանավորվել է նույն չափաբաժնով: Ինչպես 2016թ-ի ընթացքում, այնպես էլ 2017թ-ի ընթացքում թվային տեսանկյունից հոդվածում չունենք տնտեսում, բայց որակական տեսանկյունից ունենք առավելություն, քանի որ ելնելով համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման առաջընթացից և դրանով պայմանավորված ավելի բարձր արագությամբ ինտերնետ

ծառայության անհրաժեշտությունից՝ բանակցությունների արդյունքում կրկնապատկվել է ինտերնետ ծառայության արագությունը, սակայն սակագինը կրկնակի նվազեցվել է, որպեսզի ինտերնետ ծառայության արագության կրկնապատկումը բյուջեի վրա որևէ ազդեցություն չունենա:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.4 տոկոսը, այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հոդվածի գծով ունեցել ենք տնտեսում 0.4 տոկոսի չափով: 2017թ-ի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է 1.15 տոկոս:

Ծախսերի հաջորդ բաժինը Տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.2 տոկոսը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնա-գիտահետազոտական գործունեության ոլորտը, և՛ արտաքին կապերի- համագործակցության ընդլայնման ոլորտը:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, և այստեղ բավականին մեծ ծավալ են կազմում հետազոտական աշխատանքների համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածը կազմում է ծախսերի գրեթե 1 տոկոսը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածի կատարողականը գրեթե չի շեղվել պլանավորվածից, և 2018թ-ին հոդվածը պլանավորվել է նույն չափաբաժնով:

Ծախսերի հաջորդ բաժինը Մարքեթինգի և գովազդի ծախսերն են, որոնք բյուջեի ընդամենը 0.2 տոկոսն են կազմել: Հոդվածը կատարվել է պլանավորված ցուցանիշների համաձայն, և հաջորդ տարվա համար ցուցանիշը մի փոքր ավելացվել է, քան կատարողականն է, քանի որ նախատեսվում է արտաքին կապերի և համագործակցության ծրագրերի ընդլայնում:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Ներկայացուցչական և գործուղման ծախսերը: Այս հոդվածը նույնպես կազմել է ծախսերի ընդամենը 0.2 տոկոսը: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի և բարերարների շրջանակների մեծացումն է, հոդվածով թեև արձանագրվել է տնտեսում, բայց և այնպես հաջորդ տարվա համար նախատեսվել է նույն չափաբաժնով:

Ծախսերի հաջորդ բաժինը Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգայու համար: Հոդվածը գրեթե կատարվել է ամբողջությամբ: Արձանագրվել է 0.05 տոկոս տնտեսում, քանի որ ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է արտաքին միջոցներով:

Ծախսերի հաջորդ բաժինը «Այլ ծախսեր» հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև գրադարանների համար գրքերի ձեռքբերման ծախսերը: Հոդվածը կազմում է ծախսերի ավելի քան 3 տոկոսը: Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների, Գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերի գծով արձանագրվել են որոշակի խնայողություններ, քանի որ ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է այլ անձանց կողմից: Դրամաշնորհների ընթացիկ ծախսերն ավելի շատ են կատարվել, քանի որ 2017թ-ի ընթացքում դրամաշնորհների նախապես չալանավորված մուտքեր են տեղի ունեցել, որոնց համապատասխան էլ առաջացել են լրացուցիչ ծախսեր:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք կազմել են ծախսերի 0.2 տոկոսը, հոդվածի կատարողականը կազմել է 0.1 տոկոս՝ պայմանավորված ավելի շահավետ գներով ապրանքների ձեռքբերման և վաճառքի գների շահութաբերության ցածր մարժայով, քանի որ ԳՊՀ-ն իրականացնում է ուսանողների համար ավելի մատչելի ծառայությունների մատուցման քաղաքականություն, բայց պլանավորումը թողնվել է նույնը, որպեսզի 2018-ի ընթացքում գների հնարավոր աճը չբերի շեղումների:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են, այս հոդվածը կազմում է ծախսերի 2.3 տոկոսը: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների և ԳՊՀ բարերարների կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2017թ-ին հոդվածը գերակատարվել է , քանի որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պլանավորումն իրականացվել է մինչև սեպտեմբեր ամիսը և հետո վերահաշվարկվել, նույն սկզբունքով պլանավորվել է նաև 2018թ-ը: Ինչպես նաև ԳՊՀ բարերար ժիրայր Նիշանյանի կողմից ուսանողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ տրամադրվել է ևս մեկ ամսվա լրացուցիչ կրթաթոշակ՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ «Կապիտալ ակտիվների ձեռքբերում» հոդվածն է, այս հոդվածով ծախսերը կազմել են 2017թ-ի ծախսերի 0.5 տոկոսը: Այս հոդվածով ավել էժան պայմաններով գնում կատարելու արդյունքում ունեցել ենք տնտեսումներ: 2018թ-ի համար նախատեսվել են որոշակի կապիտալ ծախսեր, մասնավորապես, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար համալսարանի մասնաշենքերի մուտքերի աստիճանավանդակների վրա թեքահարթակների կառուցում:

Ծախսերի հաջորդ բաժինը «Ելքեր կապիտալ նորոգումների գծով» բաժինն է: Այս հոդվածով 2017թ-ի ընթացքում պլանավորվել է 0.5 տոկոս, սակայն վերանորոգումներ չեն

իրականացվել, իսկ 2018թ-ի համար պլանավորվել է ԳՊՀ գլխավոր մասնաշենքի տանիքի վերանորոգում:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը, ինչպես նաև ԳՊՀ 2017-2022թթ Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլանը՝ 2018թ. **բյուջեն ըստ հոդվածների /տողերի/ վերաբաշխվել է ներքոհիշյալ համամասնությամբ.**

1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 69.1 %

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.4 %

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՎԱՅՐԻ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 2.5%

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԵՏ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 4.1%:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ոլորտներում կատարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.3%:

6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների

ծեռքերման ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.8%:

7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ մարքեթինգի և գովազդի ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.4%:

8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 6.3 %:

9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.1 %:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՄ

Առկա և կանխատեսվող ֆինանսական ռեսուրսների համադրմամբ, ֆինանսական ռիսկերի կանխատեսման և դրանց նվազեցման, ֆինանսավորման այլընտրանքային միջոցների որոնման, ինչպես նաև հետագայում անհրաժեշտ ռեսուրսների կարիքների բացահայտման նպատակով ԳՊՀ բյուջեում նախատեսվել են նաև պահուստային միջոցներ՝ ավելի քան 9 մլն ՀՀ դրամի չափով, ինչպես նաև մշակվել է հետագա **ֆինանսական կանխատեսումների ծրագիրը՝ ըստ համալսարանի 2017-2022 թ. Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղվող գործողությունների.**

h/h	Նպատակը	Ռեսուրսները				
		Կանխա տես վող 2017թ	Կանխա տես վող 2018թ	Կանխա տես վող 2019թ	Կանխա տես վող 2020թ	Կանխա տես վող 2021թ
I.	Ուսումնական գործունեություն	70.8 %	69.1 %	64.6%	62.5 %	60 %
II.	Գիտահետազոտական գործունեություն	0.4 %	0.4%	1.0%	1.5%	2.0%
III.	կրթական միջավայրի արդիականացում	2 %	2.5 %	3.0 %	4.0 %	5.0 %
IV.	Ուսանողների հետ տարվող աշխատանքներ	3.8 %	4.1 %	4.4 %	4.5 %	4.5 %
V.	Վարչարարություն և մարդկային ռեսուրսների կառավարում	0.8 %	1.3 %	2.1 %	2.3 %	3.0 %

VI.	Ֆինանսական գործունեություն և ներբուհական տնտեսության կազմակերպում	9.8 %	9.8 %	9.9 %	9.9 %	10 %
VII.	Արտաքին կապեր և համագործակցություն	3.2 %	3.4 %	3.6 %	3.8 %	3.8 %
VIII.	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացում	6 %	6.3 %	7.2 %	7.3 %	7.5 %
IX.	Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում,	0.1%	0.1%	0.2%	0.2%	0.2%
	Պահուստային միջոցների ձևավորում	3.0 %	3.0 %	4.0 %	4.0 %	4.0%

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ և
2019 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, 2018 թվականի բյուջեն և 2019 թվականի բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել ԳՊՀ 2017-2022թթ ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հիմք են ընդունվում համապատասխան ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Այսպիսով, ըստ ԳՊՀ 2017-2022թթ Ռազմավարական ծրագրի ուղղությունների՝ ԳՊՀ բյուջեի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսումնական գործընթացի կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 66.6%, որը իր մեջ ներառում է նաև այլ ոլորտների համար նախատեսված միջոցները:

1. Գիտահետազոտական գործունեության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.5%: Այս գործունեության համար աշխատանքի վարձատրությանը, անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերմանը, պայմանների ստեղծմանը և այլ անհրաժեշտ ծախսերին ուղղվող միջոցները ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Ուստի, գիտահետազոտական ուղղությամբ կատարվող ընդհանուր ծախսերն ավելին են:

2. Կրթական միջավայրի արդիականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.2%:

3. Ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.6%:

4. Վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.8%:

5. Ֆինանսական գործունեության և ներքուհական տնտեսության կազմակերպման ոլորտներում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, դրամաշնորհների ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.8%:

6. Արտաքին կապերի և համագործակցության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ փոստային և կապի վճարներ, այլ ծառայությունների և ներկայացուցչական ու գործուղման ծախսեր, մարքեթինգի և գովազդի ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.4%:

7. Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ուղղությամբ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 5 %

8. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.1 %:

Ստորև ներկայացվում է 2018 թվականի բյուջեի կատարողականի և 2019 թվականի բյուջեի նախահաշվի վերլուծությունը.

Գավառի պետական համալսարանի 2018 թվականի և 2019 թվականի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին: Այս սկզբունքը պահպանվել է 2018 թվականի ծախսերը կատարելիս՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով:

Այսպիսով, 2018 թվականին պլանավորված մուտքերի 74 տոկոսը բաժին է ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 65 տոկոս, քանի որ հոդվածի կատարողականը մոտ 10 տոկոսով պակաս է 2018 թվականի համար պլանավորված գումարից, ինչպես նաև բյուջեի ընդհանուր մուտքերի մեջ դրամաշնորհներից մուտքերի աճով պայմանավորված: Հոդվածի թերակատարումը պայմանավորված է ընդունելության արդյունքներով՝ ուսանողների քանակի նվազումով, ինչն իր ազդեցությունն է թողել 2018 թվականի համար նախատեսված ծախսերի կատարողականի վրա: Ըստ վիճակագրության՝ 2019 թվականին ՀՀ դպրոցներում և, մասնավորապես, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցներում շրջանավարտների թվաքանակը աճելու է, ինչը հիմք ընդունելով ավելացվել է 2019 թվականին վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտների պլանավորված մեծությունը մինչև 77.2 տոկոս:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը, բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2018 թվականի պլանավորման, կազմել է 14.5 տոկոս, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից սոցիալապես անապահով ընտանիքիների երեխա ուսանողներին հատկացվող ֆինանսավորման գումարը աճել է, 2019 թվականի համար պլանավորված գումարը սահմանվել է կատարողականի սահմաններում, այնուամենայնիվ՝ պայմանավորված 2019/2020 ուստարվա ընդունելության արդյունքների անորոշությամբ, հնարավոր չէ արժանահավատորեն կանխատեսել և գնահատել այդ մեծությունը:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 10 տոկոսից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտներից մուտքերը կազմել են 18.73 տոկոս, քանի որ համալսարանը ունեցել է նոր դրամաշնորհային պայմանագրեր և, դրանց գծով ֆինանսավորումը ստացվել է 2018 թվականի ընթացքում:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը գրեթե 1 տոկոսով կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են ընդունելության քննություններից և գործերի ընդունումից մուտքերը, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը կազմել է 0.9 տոկոս:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 82 տոկոսը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որոնք իրենց մեջ ներառում են և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը, և՛ ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպումը, և՛ մարդկային

ռեսուրսների կառավարումը, և՛ վարչարարության, ինչպես նաև գիտահետազոտական գործունեության համար վճարումները:

Վճարումներ պետական բյուջե /Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հողվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հողվածի գծով 2018 թվականի համար պլանավորումը կազմել է գրեթե 0.8 տոկոս, բայց կատարվել է 0.7 տոկոսը: Հողվածով նախատեսվել մոտ 0.1 տոկոսի աճ, քանի որ 2018 թվականի համար նախատեսվել է շահույթի ավելացում և դրա հետևանքով շահութահարկի վճարում:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 5 տոկոսը, որն իր մեջ ներառում է և՛ հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը, և բոլոր այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կոմունալ ծախսեր: Հողվածում առկա է մոտ 0.7 տոկոս տնտեսում, և 2019թ-ի համար նախատեսվել է բյուջեի մոտ 4 տոկոսը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարներ պլանավորվել են 0.4 տոկոսի չափով: Հողվածն ըստ էության կատարվել է և հաջորդ տարվա համար պլանավորվել է նույն չափաբաժնով: Ինչպես 2017 թվականի ընթացքում, այնպես էլ 2018 թվականի ընթացքում թվային տեսանկյունից հողվածում չունենք տնտեսում, բայց որակական տեսանկյունից ունենք առավելություն, քանի որ ելնելով համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման առաջընթացից և դրանով պայմանավորված ավելի բարձր արագությամբ ինտերնետ ծառայության անհրաժեշտությունից՝ բանակցությունների արդյունքում կրկնապատկվել է ինտերնետ ծառայության արագությունը, սակայն սակագինը կրկնակի նվազեցվել է, որպեսզի ինտերնետ ծառայության արագության կրկնապատկումը բյուջեի վրա որևէ ազդեցություն չունենա:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.2 տոկոսը, այս բաժինն իր մեջ ներառում է բոլոր ոլորտների համար անհրաժեշտ նյութերը (հետազոտական աշխատանքների, մարդկային ռեսուրսների կառավարման և վարչարարության, արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման և ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը): Այս հողվածի գծով ունեցել ենք տնտեսում 0.4 տոկոսի չափով: 2019 թվականի բյուջեում այս հողվածը պլանավորվել է մոտ 1.2 տոկոս:

Ծախսերի հաջորդ բաժինը Տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.26 տոկոսը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հողվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնա-գիտահետազոտական գործունեության ոլորտը, և՛ արտաքին կապերի- համագործակցության ընդլայնման ոլորտը: Հողվածով բացարձակ տեսանկյունից ունենք տնտեսում 14.3 տոկոսի չափով, բայց կատարողական ընդհանուր բյուջեում կազմել է 1.32 տոկոս, 2019թ-ի բյուջեի 1.18 տոկոսը նախատեսվել է տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են, այս բաժնի համար պլանավորվել էր բյուջեի 0.62 տոկոսը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, ներառյալ տպագրության, մարքեթինգի և գովազդի համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածի կատարողականը կազմել է 2018 թվականի բյուջեի 0.55 տոկոսը և 2019 թվականի համար նախատեսվել է բյուջեի 0.56 տոկոսը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք 2018 թվականի համար պլանավորվել էր 0.4 տոկոս, կատարողականը կազմել է ընդհանուր ծախսերի 0.33 տոկոսը, իսկ 2019թ-ի համար նախատեսվել է բյուջեի 0.43 տոկոսը ծախսել այս ուղղության համար: Հոդվածը ներառում է գիտահետազոտական աշխատանքների և նյութերի համար անհրաժեշտ ծախսերը, բայց այս գործունեության համար անհրաժեշտ վարձատրության, կոմունալ, կապի և այլ անհրաժեշտ ծախսերը ներառված են բյուջեի համապատասխան հոդվածներում: Այսինքն՝ գիտահետազոտական գործունեության համար ծախսերն ավելին են:

Ծախսերի հաջորդ բաժինը Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ ելքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Այս հոդվածի կատարողականը գրեթե չի շեղվել պլանավորվածից, և 2019 թվականին հոդվածը պլանավորվել է նույն չափաբաժնով:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Ներկայացուցչական և գործուղման ծախսերը: Այս հոդվածը նույնպես կազմել է ծախսերի ընդամենը 0.2 տոկոսը: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցության ծրագրերի և բարերարների շրջանակների մեծացումն է, հոդվածով արձանագրվել է տնտեսում, իսկ հաջորդ տարվա համար նախատեսվել է ծախսերի 0.14 տոկոսը:

Ծախսերի հաջորդ բաժինը Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Հոդվածը կատարվել է ամբողջությամբ: Նախատեսվել էր 0.14 տոկոսը, կատարողականը կազմել է 0.15 տոկոս, իսկ 2019թ-ի համար նախատեսվել է 0.13 տոկոսը ընդհանուր ծախսերում, այս հոդվածով ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից:

Ծախսերի հաջորդ բաժինը «Այլ ծախսեր» հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, աշխատաժողովների և գիտաժողովների, այլ միջոցառումների կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև գրադարանների համար գրքերի ձեռքբերման ծախսերը: Հոդվածը կազմել է 2018 թվականի պլանավորված ծախսերի ավելի քան 3 տոկոսը: Հոդվածի կատարողականը կազմել է ծախսերի 5.8 տոկոսը, արձանագրված աճը բացատրվում է դրամաշնորհների ընթացիկ ծախսերի աճով պայմանավորված

Ֆինանսավորման աճով, Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների գծով ծախսերում արձանագրվել են որոշակի խնայողություններ, իսկ Գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը պլանավորվածից գրեթե չեն շեղվել: 2018 թվականի ընթացքում ԳՊՀ-ը գրադարանային ֆոնդը համալրվել է նաև անհատներից և կազմակերպություններից նվիրատվության կարգով ստացված ավելի քան 500000 դրամի գրականությամբ: 2019թ-ի բյուջեում այս հոդվածով նախատեսված ծախսը աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է դրամաշնորհային ծրագրերով նախատեսված համապատասխան ծախսերով:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք կազմել են ծախսերի 0.2 տոկոսը, հոդվածի կատարողականը կազմել է 0.1 տոկոս՝ պայմանավորված ավելի շահավետ գներով ապրանքների ձեռքբերման և վաճառքի գների շահութաբերության ցածր մարժայով, քանի որ ԳՊՀ-ն իրականացնում է ուսանողների համար ավելի մատչելի ծառայությունների մատուցման քաղաքականություն, բայց պլանավորումը թողնվել է նույնը, որպեսզի 2019 թվականի ընթացքում գների հնարավոր աճը չհանգեցնի շեղումների:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են, այս հոդվածը պլանավորվել է ծախսերի 2.55 տոկոսը: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների և ԳՊՀ բարերարների կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2018 թվականին հոդվածը գերակատարվել է, քանի որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից պլանավորումն իրականացվել է մինչև սեպտեմբեր ամիսը և հետո վերահաշվարկվել, նույն սկզբունքով պլանավորվել է նաև 2019 թվականը: Ինչպես նաև ԳՊՀ բարերար ժիրայր Նիշանյանի կողմից ուսանողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում տրամադրվել է նվեր՝ մոտ 7 ամսվա կրթաթոշակի չափով:

Ծախսերի հաջորդ բաժինը՝ «Կապիտալ ակտիվների ձեռքբերում» հոդվածն է, այս հոդվածով ծախսերը կազմել են 2018 թվականի ծախսերի 0.02 տոկոսը: Այս հոդվածով նախատեսվել էր 8.5 տոկոս, սակայն 2018 թվականի ընթացքում դրամաշնորհներով նախատեսված գնումները տեղափոխվել են 2019 թվական, որի արդյունքում նախատեսվել է 2019 թվականի բյուջեի մոտ 13 տոկոսը ծախսել այս ուղղությամբ: Այս հոդված ներառում է նաև գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կապիտալ ակտիվների ձեռքբերում: 2018 թվականի համար նախատեսվել էր որոշակի կապիտալ ծախսեր հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար համալսարանի մասնաշենքերի մուտքերի աստիճանավանդակների վրա թեքահարթակների կառուցման համար, որը նույնպես տեղափոխվել է 2019 թվական:

Ծախսերի հաջորդ բաժինը «Ելքեր կապիտալ նորոգումների գծով» բաժինն է: Այս հոդվածով 2018 թվականի ընթացքում պլանավորվել է 0.5 տոկոս, որը կատարվել է 2018 թվականի ընթացքում, մասնավորապես վերանորոգվել է գլխավոր մասնաշենքի տանիքը, իսկ 2019 թվականի համար պլանավորվել է 1.4 տոկոսը, որը օգտագործվելու է այլ վերանորոգումների և հատկապես՝ տրանսպորտային միջոցների:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը, ինչպես նաև ԳՊՀ 2017-2022թթ Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլանը՝

2019թ. բյուջեն ըստ հոդվածների /տողերի/ վերաբաշխվել է ներքոհիշյալ համամասնությամբ.

1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 64.6 %

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1 %

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3%

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 4.4%:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ոլորտներում կատարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 2.1%:

6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.9%:

7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ մարքեթինգի և գովազդի ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.6%:

8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված ոլորտում աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 7.2 %:

9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.2 %:

ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՄ

Առկա և կանխատեսվող ֆինանսական ռեսուրսների համադրմամբ, ֆինանսական ռիսկերի կանխատեսման և դրանց նվազեցման, ֆինանսավորման այլընտրանքային միջոցների որոնման, ինչպես նաև հետագայում անհրաժեշտ ռեսուրսների կարիքների բացահայտման նպատակով ԳՊՀ բյուջեում նախատեսվել են նաև պահուստային միջոցներ՝ ավելի քան 9 մլն ՀՀ դրամի չափով:

**Գ. Գ. Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Ասոյան Թաթուլ Արտիկի,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ՝ Սարգսյան Ռուզաննա Մարարի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 100

Շրջանավարտների թիվը՝ 46

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

1. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում ընդունելությունը, ըստ համապատասխան մասնագիտությունների, հետևյալ պատկերն ունի.

<u>Բակալավրիատ</u> - 12	<u>Մագիստրատուրա</u> - 12
Հայոց լեզու և գրականություն – 5	4
Անգլերեն լեզու և գրականություն – 7	5
Ռուսաց լեզու և գրականություն - -	3
Ընդամենը – 24	

2016-2017 ուստարվա համեմատ բանասիրական ֆակուլտետի ուսանողական համակազմը քանակական փոփոխություն է կրել.

2016-2017 ուստարի – 106	2017-2018 ուստարի – 99	Նվազում – 7 ուսանողով
-------------------------	------------------------	-----------------------

Ուսանողների շարժը՝ Ազատում-1(Ղազարյան Ռիմա, ԱԼ3) Հեռացում - 1 (Վոշիկյան Երջանիկ, ՄՀԼԳ2)

Ընդունելության և ուսանողական համակազմի համալրման ուղղությամբ աշխատանքներ տարվում են (օրինակ՝ աշնանը և գարնանը այցելություններ են կատարվել Վարդենիսի տարածաշրջանի ավագ և միջնակարգ դպրոցներ), սակայն դրանք բավարար չեն համալրման առումով: Նոր մոտեցումների անհրաժեշտություն է զգացվում:

2. ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում 2017-2018 ուստարում գրանցվել են հետևյալ արդյունքները.

2.1. Զմեռային քննաշրջան

Այս քննաշրջանում 100% առաջադիմություն ունեցել են ՀԼԳ1, ՀԼԳ3, ՀԼԳ4, ՄՀԼԳ1, 90%՝ ԱԼ4, ՄՀԼԳ2, 80-87%՝ ԱԼ1, ՀԼԳ2, ԱԼ3, 66%՝ ՄՌԼԳ, 50-57%՝ ՌԼԳ4, ՄԱԼ2 կուրսերը:

2.2. Գարնանային քննաշրջան

Գարնանային քննաշրջանում 100% առաջադիմություն ցուցաբերել են ՀԼԳ1, ԱԼ1, ՀԼԳ3, ՄՀԼԳ1, ՄՌԼԳ1, 80-87%՝ ՀԼԳ2, ԱԼԳ3, ՄԱԼԳ1 կուրսերը:

2.3. Տարեկան առաջադիմությունը

	2017-18 ուստարի	2016-17 ուստարի
<u>Բակալավրիատի տարեկան առաջադիմությունը</u> –	91%	88,00%
<u>Մագիստրատուրայի տարեկան առաջադիմությունը</u> –	91,67%	56,52%
<u>Ֆակուլտետի տարեկան առաջադիմությունը</u> -	94,23%	78,08%

Առաջադիմության ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ նախորդ ուսումնական տարվա համեմատ տեղի է ունեցել առաջադիմության նկատելի աճ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ

ա) արդյունքների վրա բացասաբար է անդրադառնում թեկուզև հարգելի պատճառով քննություններին չներկայանալը (ամուսնություն, հիվանդություն, ծննդաբերություն, այլ պատճառներ),

բ) քննաշրջանի ընթացքում ուսման վարձավճարների, ժամանակացույցի, դասախոսների հետ կապված խնդիրներ չեն առաջանում,

գ) գերակշռում են գերազանց գնահատականները, որը կարելի է բացատրել կուրսերում ուսանողների միջև առկա մրցակցությամբ:

• ՄԱՍՆԱԳՐԵՐ, ՈՒՍՊԼԱՆՆԵՐ, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Կրթության հիմքն են կազմում և հայեցակարգային կարևոր նշանակություն ունեն ՄԿԾ-ների նկարագրերի վերանայումը, կրթական վերջնարդյունքների, դրանց հասնելու համար ուսուցման և ուսումնառության մեթոդների որոշարկումը, ուսալանների, կրթական ծրագրերի թարմացումը, նոր առարկաների ու դասընթացների ներառումը: Նշված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քննարկվել և վերլուծվել են արտաքին շահառուների արձագանքները, ուսումնասիրվել են այլ բուհերի փորձը, ուսանողական համակազմի ակադեմիական կարիքները, ԳՊՀ ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման բարելավման ծրագիրը: Արդյունքում կատարվել է հենանիշային ուսումնասիրությունների վերլուծություն՝ կրթական ծրագրերի, առարկայացանկի, ուսալանների, ժամաքանակների բաշխման չափանիշների կատարելագործման նպատակով:

Փոփոխություններ են կրել կրթական ծրագրերի մասնագրերը.

ա) բովանդակային և ձևական համակարգմամբ են ներկայացվել կրթական ծրագրերի նպատակները,

բ) թարմացվել և լրամշակվել են ծրագրերի կրթական վերջնարդյունքներն՝ ըստ գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական կարողություններ և ընդհանրական (փոխանցելի) կարողություններ բաղադրիչների,

գ) մշակվել և ներմուծվել են գնահատման նկարագրիչները,

դ) ըստ կրթական վերջնարդյունքների ներկայացվել են ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդները:

Ուսալաններում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

ա) հանվել են որոշ դասընթացներ, ներառվել են նոր դասընթացներ,

բ) կատարվել են դասընթացների տեղաշարժեր ըստ կիսամյակների,

գ) փոփոխվել են որոշ դասընթացներին տրված ժամաքանակները:

Ուսալաններում կատարված փոփոխություններին համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև առարկայական ծրագրերում:

• ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Ֆակուլտետն ունի կայուն պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որն իրականացնում է որակյալ գիտամանկավարժական գործունեություն թե՛ առկա, թե՛ հեռակա ուսուցմամբ համակարգերում: Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ս. Հայթյանը անցկացրել է ներառական կրթությանը վերաբերող դասընթացներ, Ռ. Սարգսյանն աշխատել է Իտալիայի Պավիայի համալսարանում և իր փորձը կիրառում է Գավառի պետական համալսարանում: Կազմվել է ԳՊՀ դասախոսների

վերապատրաստման ծրագիր, որով նախատեսված դասընթաց է անցկացրել Վ.Կատվայանը: Թ.Ասոյանը մասնակցել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում կազմակերպված հանրապետական գիտաժողովի՝ նվիրված մեծանուն գիտնական Գր. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին: Ֆակուլտետի ամբիոնների դասախոսները մասնակցել են ԳՊՀ ամենամյա գիտաժողովին: Դասախոսական անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատելու և բարձրացնելու նպատակով անցկացվել են դասախոսական կազմի գործունեությունը գնահատող ուսանողական հարցումներ և դասախոսներ, որոնց արդյունքները քննարկվել են, կատարվել է վերլուծություն:

5. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Կրթական գործընթաց իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծումը (մասնագրեր, ուսալսաններ, առարկայական ծրագրեր և այլն) պարտադիր նախապայման է, բայց դեռ բավարար չէ որակյալ ուսուցում իրականացնելու համար. անհրաժեշտ է նաև մեծ ուշադրություն դարձնել դասավանդման գործընթացին, որից է մեծ մասամբ կախված ուսանողի ուսումնառության արդյունավետության աստիճանը: Այդ նպատակով ամբիոններում հետևողականորեն վերահսկվել է առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, կատարվել են դասախոսներ, վերլուծություններ: Մասնավորապես ա) դասավանդման ընթացքում կիրառվել են ուսուցման նոր մեթոդներ ու եղանակներ՝ ըստ անհրաժեշտության համադրելով նաև ավանդականը, բ) ցուցաբերվել են գնահատման տարբեր մոտեցումներ, գ) անցկացվել են կինոդիտումներ, բաց դասեր՝ հայ լեզվաբանների ու լեզվաբանության, ռուս և արտասահմանյան գրականության վերաբերյալ, դ) կազմակերպվել են դասախոսներ և քննարկումներ: Ամբիոններում առկա են դասախոսների վերաբերյալ վերլուծությունները:

6. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ուսանողակենտրոն ուսուցումը, կրթական միջավայրի որակական փոփոխությունները, արժեհամակարգային որակների դաստիարակումը ենթադրում են միշտ ուշադրության կենտրոնում պահել ուսանողների կրթական, գեղագիտական կարիքները: Այդ նպատակով ա) անցկացվում են հանդիպումներ և կազմակերպվում են քննարկումներ ՈՒԽ և ՈՒԳԸ անդամների հետ, բ) կազմվել է միջոցառումների ծրագիր-ժամանակացույց, և ուսանողների մասնակցությամբ անցկացվել են տարբեր բնույթի միջոցառումներ, Ա.Այլիսլիի, Մ.Մոնտենի, Ֆ.Կաֆկայի ստեղծագործությունների քննարկումներ: գ) նկատվում է հանրապետական ուսանողական գիտաժողովներին ԳՊՀ ուսանողների մասնակցության ակտիվացում. ուսանողները մասնակցել են համալսարանական, հանրապետական գիտաժողովների և արժանացել հավաստագրերի՝ ԵՊՀ-ում, Վանաձորի, Գորիսի, Արցախի, Շիրակի պետական համալսարաններում, դ) ուսանողներն օգտվում են տարբեր հիմնադրամներից և ուսման վարձի զեղչերից, ե) ներգրավվում են միջազգային ծրագրերում,

զ) ուսանողների միջավայրում քննարկվում են համալսարանական կանոնակարգերն ու ընթացակարգերը,

է) ուսանողները մասնակցում են համալսարանի կառավարման գործընթացներին, որոշումների ընդունմանը՝ որպես ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի անդամներ:

7. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համալսարանական կյանքի կարևոր բաղկացուցիչներից են միջոցառումները, որոնք հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել և անցկացվել են «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և նախաձեռնություններ» նշանաբանով: Մշակվել է միջոցառումների ծրագիր: Դրանք անցկացվել և նոր ուսումնական տարում անցկացվելու են երեք հիմնական ուղղություններով.

ա) Ֆրանկոֆոնիա,

բ) Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման և մայիսյան հաղթանակների 100-ամյա հոբելյաններ,

գ) ԳՊՀ հիմնադրման 25-ամյակ և այլ հոբելյաններ, նշանավոր մարդիկ, ազգային սովորույթներ և բանահյուսություն:

Միջոցառումները կազմակերպվել են ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների, դասախոսների, լաբորանտների կողմից:

8. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնական տարվա ընթացքում աշխատանքային հիմնական ծանրաբեռնվածությունն արտահայտվում է երկրորդ կիսամյակում: Դա մեծ մասամբ պայմանավորված է ամփոփիչ ատեստավորման քննությունների պատշաճ կազմակերպման և անցկացման հանգամանքով: Մինչև մայիսյան քննություններն այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել՝ համաձայն համապատասխան շրջաբերականով նախատեսված ժամանակացույցի: Գործընթացն ընդգրկել է հետևյալ ուղղությունները. ամփոփիչ քննությունների հարցաշարերի պատրաստում և տրամադրում ավարտական կուրսերի ուսանողներին, աշխատանք արխիվում, անձնագրային ճշգրտված տվյալներով ցուցակների կազմում, քննական հանձնաժողովների և նրանց նախագահների ներկայացում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության անցկացում, դիպլոմների միջուկների, արձանագրությունների մատյանների, հարցատոմսերի և դիպլոմի հավելվածի պատրաստում: Քննություններն անցկացվել են մշակված և հաստատված ժամանակացույցին համապատասխան, առանց լարվածության և բողոքարկման դեպքերի:

1. Ռեսուրսները – Քննություններն անցկացնելու համար առկա են եղել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ու նյութերը՝ հարցաշարերը, հարցատոմսերը, արձանագրությունների մատյանները, գործնական առաջադրանքների համար նախատեսված նյութերը, ձայնագրիչները: Հարցաշարերը մինչև ավարտական կուրսերի ուսանողներին տրամադրելը, վերանայվել են, լրամշակվել կամ նոր են կազմվել գործնական առաջադրանքների՝ լեզվական վերլուծությունների և թարգմանությունների համար նախատեսված նյութերը՝ պահպանելով տեքստերի թե՛ բովանդակային, թե՛ ծավալային

համամասնությունները և հաշվի առնելով նախորդ ուստարվա փորձը, արված առաջարկություններն ու դիտողությունները:

2. *Ընթացքը* – Քննություններն ընթացել են սահմանված կարգով. ուսանողների ներկայությամբ բացվել են հարցատոմսերի ծրարները, հարցատոմսերը համարակալվել և ստորագրվել են հանձնաժողովների նախագահների կողմից, ուսանողների պատասխանները ձայնագրվել են: Գնահատականները հայտարարվել են քննության ավարտից հետո: Նշենք, որ քննություններն անցել են նորմալ աշխատանքային պայմաններում և բնականոն ընթացքով: Ուսանողներին պատասխանելու ընթացքում լարվածությունից ազատելու և չկաշկանդելու միտումով քննասենյակում ստեղծվել է բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ, ապահովվել է հանձնաժողով-ուսանող անմիջական կապ, որի արդյունքում դժգոհություններ և բողոքարկումներ չեն եղել:

3. Արդյունքները

Բակալավրիատ – Ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ գրանցվել են հետևյալ արդյունքները. ուսանողների քանակը՝ 7, որից A+1, A-5, A- -1, հայոց լեզու (բանավոր, 3 ուսանող)՝ A-3, հայ գրականություն (բանավոր, 4 ուսանող)՝ A+1, A-1, A- -2:

Մագիստրատուրա – Մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքում գրանցվել են հետևյալ գնահատականները. հայոց լեզու և գրականություն(10 ուսանող)՝ A-7, A- -2, B- -1, անգլերեն լեզու և գրականություն(14 ուսանող)՝ A+11, A-1, A- -1, B- -1:

4. Կարծիքներ

Ուսանողներ - Քննություններն ընթացել են հանգիստ մթնոլորտում: Քննող հանձնաժողովը անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն է տվել, անհարկի և շփոթեցնող միջամտություններ չեն եղել: Արդյունավետ են եղել աշխատանքները ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների հետ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Հատկապես բարձր է գնահատվել թեզերի կատարման մակարդակը: Դժգոհություններ չեն եղել:

Հանձնաժողովների նախագահներ - «Մագիստրանտները ներկայացրին իրենց թեզերը գերազանց մակարդակով, հրաշալի տիրապետում էին տեխնիկական միջոցներին, թեմաները հետաքրքիր և արդիական էին» (ՄԱԼ, Բ.Հարությունյան):

«Ուսանողները ընդհանուր առմամբ լավ էին պատրաստված, տեսական գիտելիքները գոհացուցիչ էին: Մեծամասնությունը լավ տիրապետում էր հաղորդակցական հմտությունների»(ԲԱԼ, Բ.Հարությունյան):

«Մագիստրանտներն ունեին մասնագիտական բավարար գիտելիքներ, նրանց խոսքը տրամաբանված էր, դատողությունները համոզիչ: Աշխատանքներն ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք»(ՄՀԼԳ, Գ.Գևորգյան):

«Ուսանողների մասնագիտական պատրաստականությունն ընդհանուր առմամբ բարձր էր, աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի և խոր իմացությամբ»(ԲՀԼԳ, Գ.Գևորգյան):

«Ուսանողները ցուցաբերեցին լավ գիտելիքներ: Հարկ ենք համարում նշել աշխատանքների թեմաների արդիականությունը և ուսանողների հետազոտությունների ինքնուրույնությունը»(ՌԼԳ, Ի.Սարգսյան):

Առաջարկությունները

«Փոփոխել գրախոսության և ղեկավարի կարծիքի ձևաչափը և ծավալը: Կարելի է ներմուծել սանդղակով գնահատման ձևաթուղթ»:

«Վերարտադրման համար նախատեսված նյութերը լինեն հնարավորինս համաչափ» (Ք.Հարությունյան):

«Այսուհետև ևս այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են, առավել շատ ուշադրություն դարձնել տեխնիկական պահանջներին»:

«Ուշադրություն դարձնել մագիստրոսական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով փաստական նյութի վերլուծությունը, գասակարգումը և զուգադրումը» (Գ.Գևորգյան):

«Ավարտական աշխատանքներն ուղարկել արտաքին կարծիքի: Ավարտական աշխատանքների որոշ հատվածներ կարելի է հրատարակել «Ռուսագիտության արդի հիմնախնդիրները» հանդեսում համահեղինակությամբ» (Ի.Սարգսյան):

Արտահայտված կարծիքներն ու առաջարկությունները հաշվի են առնված ֆակուլտետի զարգացման հայեցակարգում:

ԳՎԱԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հայեցակարգը մշակվել է ԳՊՀ 5-ամյա ռազմավարական ծրագրի դրույթների, բանասիրական գիտությունների առանձնահատկությունների, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների, հաշվառմամբ:

1. Մասնագրեր, կրթական և առարկայական ծրագրեր

1.1 Իրականացնել մասնագրերի, կրթական և առարկայական ծրագրերի շարունակական բարելավում, աշխատանքներ կատարել բովանդակային և կառուցվածքային առումով դրանք կատարելագործելու ուղղությամբ՝ հիմք ունենալով հենանշային ուսումնասիրությունները:

1.2 Բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերում ներառել նոր դասընթացներ՝ հաշվի առնելով աշխատաշուկայի, մասնավորապես Գեղարքունիքի տարածաշրջանի, գործատուների, ուսանողների և ժամանակի պահանջները:

1.3 Մշտապես իրականացնել կրթական ծրագրերի, դասախոսությունների, ուսանողներին տրամադրվող նյութերի թարմացում, վերանայում և արդիականացում՝ հաշվի առնելով մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ըմբռնումներում տեղի ունեցող փոփոխությունները:

2. Դասավանդում, ուսուցում, ուսումնառություն

2.1 Հետևողական աշխատանքներ տանել մանկավարժական առաջավոր փորձի լուսաբանման և տարածման ուղղությամբ՝ անցկացնելով բաց դասեր, վերապատրաստման դասընթացներ:

2.2 Նպաստել նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը՝ բարձրացնելով դասի արդյունավետությունը, իրականացնելով ուսանողակենտրոն ուսուցում:

2.3 Ակտիվացնել դասալսումները՝ որպես դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման ազդակ:

2.4 Ստեղծել գործիքակազմ ստուգարքների, քննությունների, աշխատանքների պաշտպանության գործընթացներում ակադեմիական ազնվությունը ապահովելու նպատակով:

2.5 Ուսանողների գնահատման գործընթացը դարձնել հնարավորինս թափանցիկ, ուսանողներին իրազեկել բազմագործոն գնահատման համակարգի մասին:

2.6 Անցկացնել նորագույն մեթոդներով և տեխնոլոգիաներով հագեցած բաց դասեր, քննարկումներ, մեթոդական զեկուցումներ:

3. Հարցումներ, մշտադիտարկումներ, վերլուծություններ

3.1 Ուսանողների կրթական կարիքները բացահայտելու նպատակով համագործակցել ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ՝ ֆակուլտետում հարցումներ անցկացնելու համար:

3.2 Իրականացնել հայեցակարգային դրույթների կատարման ուղղությամբ արված աշխատանքների մշտադիտարկում:

3.3 Իրականացնել վերլուծություններ դասալսումների, ուսանողական հարցումների, ծրագրերի կատարման ընթացքի, արտաքին շահառուների կարծիքների վերաբերյալ:

3.4 Իրականացնել ֆակուլտետի գործունեության տարեկան ինքնավերլուծություն:

3.5 Ներկայացնել կիսամյակային և տարեկան հաշվետվություններ ֆակուլտետում տարվող աշխատանքների, կիսամյակային և ամփոփիչ քննությունների, միջոցառումների վերաբերյալ:

3.6 Իրականացնել կրթական ծրագրերի, առարկայացանկի, դասընթացներին տրվող կրեդիտների և ժամաքանակների հենանշադրում՝ ուսուցման որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաներ, գրադարան, ընթերցասրահ

4.1 Ուսանողներին ուղղորդել դեպի ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգերը:

4.2 Կրթական ծրագրերն ապահովել էլեկտրոնային ռեսուրսներով:

4.3 Համատեղ աշխատանքներ իրականացնել գրադարանի և ընթերցասրահի հետ՝ կազմակերպելով գրքերի քննարկումներ:

4.4 Առարկայական ծրագրերը, անհրաժեշտ գրականության ցանկերը, հարցաշարերը, անհատական և կուրսային աշխատանքների թեմաները և այլ նյութեր ուսանողներին տրամադրել էլեկտրոնային եղանակով:

4.5 Ուսանողների հետ աշխատել էլեկտրոնային եղանակով, իրականացնել նաև հեռավար խորհրդատվություններ:

4.6 Լիարժեք օգտագործել լինգվաճառային կաբինետի հնարավորությունները:

5. Ուսանողներ, ուսանողական ինքնակառավարման մարմիններ

5.1 Ակտիվացնել անմիջական շփումները ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

5.2 Օպերատիվ արձագանքել ուսանողների կողմից բարձրացված հարցերին, խնդիրներին՝ դրանց տալով անհրաժեշտ լուծումներ, քննարկել արված առաջարկությունները:

5.3 Ուշադրության կենտրոնում պահել առաջին կուրսեցիներին՝ պարբերաբար նրանց ծանոթացնելով ԳՊՀ իրավական փաստաթղթերին՝ ներքին կարգապահական կանոններ, իրավունքներ և պարտականություններ, փոխատեղում, ուսման վարձի զեղչեր, կրեդիտային համակարգ, շարժունության ծրագրեր և այլն:

5.4 Խրախուսել ուսանողների մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերի, համալսարանական և հանրապետական գիտաժողովների, քննարկումների, սեմինարների, տարբեր մրցույթների, միջոցառումների:

6. Հետազոտական աշխատանք

6.1 Ամբիոններում ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները:

6.2 Ակտիվացնել ուսանող-ամբիոն կապը՝ ուսանողների հետաքրքրությունները պարզելու և հետազոտական աշխատանքների մղելու նպատակով:

7. Ամփոփիչ քննություններ, մագիստրոսական թեզեր, ավարտական աշխատանքներ

7.1 Հետևողական աշխատանքներ տանել մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:

7.2 Թեմաների ընտրությունը կատարել՝ հաշվի առնելով նրանց տեսական և գործնական արդիականությունը:

7.3 Պահպանել ամփոփիչ քննությունների, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների պաշտպանությունների՝ ԳՊՀ կանոնակարգերով, շրջաբերականներով նախատեսված ընթացակարգը, ժամկետները՝ ապահովելով հանգիստ աշխատանքային պայմաններ և ռեսուրսներ:

7.4 Մշակել գիտական ղեկավարի, գրախոսի, քննական հանձնաժողովի նախագահի կարծիքների, աշխատանքների գնահատման ձևաթերթեր:

7.5 Ներկայացնել հաշվետվություն ամփոփիչ քննությունների, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների պաշտպանությունների վերաբերյալ:

8. Համագործակցություն

8.1 Ներկայացնել դպրոց-բուհ համագործակցությունն ամրապնդելու ծրագիր:

8.2 Համագործակցել ՀՀ ԳԱԱ լեզվի և գրականության ինստիտուտների, մարզի մտավորականության, մշակութային օջախների հետ:

8.3 Համագործակցել արտաքին շահառուների հետ:

8.4 Համագործակցել ԳՊՀ կառուցվածքային մյուս ստորաբաժանումների հետ:

9. Միջոցառումներ

9.1 Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ՝ նվիրված հոբելյանական տարեթվերին, մշակութային ու պատմական իրադարձություններին:

10. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ

10.1 Մասնակցել որակավորման բարձրացման նպատակով կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

**Թ. Ա. Ասոյան՝
Բանասիրական ֆակուլտետի ղեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	5	-	3	100,00
2-րդ	6	-	5	83, 33
3-րդ	10	-	5	100,00
4-րդ	7	-	6	100,00
Ռուսաց լեզու և գրականություն 4-րդ	4	-	-	50,00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	7	-	2	85,71
2-րդ	5	-	3	80, 00
3-րդ	8	-	3	87, 50
4-րդ	11	-	4	90, 91
Ընդամենը	63	-	31	88,89
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս	4	-	3	100,00
Հայոց լեզու և գրականություն 2-րդ կուրս	10	-	8	90, 00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	3	80, 00
Անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրս	14	-	8	57, 14
Ռուսաց լեզու և գրականություն, 1-ին կուրս	3	-	2	66, 67
Ընդամենը	36	-	24	75. 00

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն 1-ին	5	-	3	100.00
2-րդ	6	-	2	83.33
3-րդ	10	-	7	100.00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին	7	-	2	100.00
2-րդ	4	-	1	100.00
3-րդ	8	-	3	87.50
Ընդամենը	40	-	18	95.00
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս	4	-	3	100.00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	5	-	3	80.00
Հաշվետու ժամանակաշրջանում ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում հետևյալ մասնագիտությունների գծով՝ իրավագիտություն, պատմություն, տարրական մանկավարժություն և մեթոդիկա: Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետն իր գործունեությունը իրականացնում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների և ռազմավարական ծրագրերի հենքի վրա: Աշխատանքներն ընթացել են 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի և 2017-2018 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրերի իրականացման գործողությունների պլանին համապատասխան: Կրթության որակի բարելավումը և ուսման արդյունավետության բարձրացումը ֆակուլտետի գործունեության գլխավոր նպատակը համարելով՝ աշխատանքները կազմակերպվել են հետևյալ ուղղություններով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետ են ընդունվել 15 բակալավր ուսանող, իսկ իրավագիտության բաժնի մագիստրատուրա ընդունվել են 23 ուսանող, պատմության՝ 5 ուսանող, տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժին՝ 7 ուսանող: Նախորդ տարի՝ 27 ուսանող: Բակալավրիատ և մագիստրատուրա միասին ընդունվել են 50 ուսանող (նախորդ տարի՝ 48):

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի համապատասխան մասնագիտությունների դիմորդների քանակի և ընդունված ուսանողների քանակի միջև կար զգալի տարբերություն, դիմորդների մի մասը չկարողացավ հաղթահարել ընդունելության քննությունների գնահատականների նվազագույն շեմը: Մյուս կողմից հանրակրթության ոլորտում անընդհատ փոփոխությունների հետևանքով խախտվել է շրջանավարտների համաչափությունը: Մարզի տարածքում հանրակրթական դպրոցներ մեր այցելությունները ցույց տվեցին, որ 2017-2018 ուստարվա շրջանավարտների քանակը շուրջ 3 անգամ պակաս է նախորդ տարիների և հաջորդ տարվա շրջանավարտների քանակից: Իսկ ընդհանուր առմամբ աշակերտների թվի նվազում է նկատվում արտագաղթի հետևանքով առաջացած ժողովրդագրական բացասական փոփոխությունների առումով:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ

Համալսարանի մյուս ֆակուլտետներից հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 3 ուսանող, մեկ ուսանող՝ Երևանի պետական համալսարանից, 1 ուսանող՝ Ռուսաստանի Դաշնության բուրից: Նախորդ տարիներին տարբեր պատճառներով ուսումը դադարեցրած 8 ուսանողի իրավունքները վերականգնվել են: Զինվորական ծառայությունից վերադարձել են 3 ուսանող: Համալսարանի այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 8 ուսանող: Եվրոպական միության «Էրասմուս +» միջազգային փոխանակման ծրագրով արտերկրում ուսումը շարունակել են 2 ուսանող, վերադարձել են 3-ը և ներկայացրել շնորհանդես-հաշվետվություններ: Տարբեր

պատճառներով մագիստրատուրայից հեռացվել են 5 ուսանող, բակալավրիատից՝ 3-ը: Ֆակուլտետում ուսանողների քանակը կազմել է 164, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 156-ի համեմատ:

ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգով նախատեսված էր ուսման առաջադիմությունը ինչպես կիսամյակային, այնպես էլ տարեկան կտրվածքով պահպանել 75-80%-ի սահմաններում, թույլ չտալ նահանջ այդ սահմանագծից: Առաջին կիսամյակում առաջադիմությունը կազմել է 80.1%, 2-րդ կիսամյակում 76%:

Ուսման առաջադիմության որակական ցուցանիշ ենք համարում A և B միջակայքի գնահատականների առկայությունը ուսանողների կողմից ստացած ընդհանուր գնահատականների մեջ: Ֆակուլտետի զարգացման հայեցակարգով նախատեսել ենք A և B միջակայքի գնահատականների տեսակարար կշիռը պահել 60% սահմանագծից վերև: Վերլուծելով 1-ին և 2-րդ կիսամյակի քննաշրջանների արդյունքները, համադրելով A և B տիրույթի գնահատականները C տիրույթի գնահատականների հետ, ստացել ենք հետևյալ արդյունքները. A և B տիրույթի գնահատականները ընդհանուր գնահատականների մեջ կազմել են 63.5%: Այնուհանդերձ 36.5% C միջակայքի գնահատականների առկայությունը մտահոգիչ է, և դեկանատի ու ամբիոնների առաջնահերթ խնդիրն է ուսանողների հետ տարվող հետևողական աշխատանքների շնորհիվ նվազեցնել C-, C, C+ տիրույթի գնահատականների քանակը: Ուսման որակական ցուցանիշը արտահայտվում է 100% առաջադիմություն ունեցող կուրսերի առկայությամբ: 1-ին կիսամյակում ունեցել ենք 8, իսկ 2-րդ կիսամյակում 6 նման կուրսեր: 100% առաջադիմություն ունեցող խմբերը անվճար ուսուցման տեղեր և տարաբնույթ հիմնադրամներից օգտվող խմբերն են: Ամփոփելով բակալավրիատում և մագիստրատուրայում անվճար սովորելու իրավունքով տեղերի փոխատեղման արդյունքները՝ պարզվեց, որ 16 ուսանողներից 6-ը կորցրել են անվճար սովորելու իրավունքը: Սա վկայում է մրցակցային ուսումնառության, գնահատման օբյեկտիվության, արդյունքների ամփոփման հստակության մասին: Արդյունքները հրապարակելուց հետո բողոքարկման դեպք չի արձանագրվել:

2017-2018 ուստարվա արդյունքներով «Լավագույն կուրս» մրցանակին արժանացավ պատմության բաժնի 4-րդ կուրսը: Կուրսն աչքի ընկավ հասարակական ակտիվությամբ, ուսանողների բարձր առաջադիմությամբ: «Լավագույն ուսանող»-ի մրցանակին արժանացավ նույն կուրսի ուսանողուհի Բալասան Սաքեյանը, ով գիտական զեկուցումով հանդես էր եկել Երևանի պետական համալսարանում կազմակերպված հանրապետական ուսանողական գիտաժողովին, այլ գիտաժողովների և ուներ հավաստագրեր: Դեկանատը հետևողական աշխատանքներ է կատարում ուսման վարձավճարները ժամանակին հավաքագրելու ուղղությամբ: Ծնողների ֆինանսական բեռը թեթևացնելու նկատառումներով բուիը իր հերթին կիրառում է ուսման վարձավճարի գեղչեր: Բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողները օգտվել են տարբեր հիմնադրամներից: Այսպես. «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամներից օգտվել են 18, «Նիշանյան» հիմնադրամից՝ 15, Հայաստանի երիտասարդական հիմնադրամից՝ 2, «Վիվասելլ –ՄՏՍ» ընկերությունից՝ 3, «Փարոս» համակարգի շահառու 14 ուսանող ստացել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում պետական բյուջեից:

Ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցել են բակալավրիատի և մագիստրատուրայի 69 ուսանող: Քննությունների արդյունքներով բակալավրիատում և մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 100%: Ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնաժողովների նախագահների կողմից հաշվետվություններում ներկայացված առաջարկություններն ու նկատառումները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում, իսկ Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/ բաժնի քննական հանձնաժողովի նախագահի դիտարկումները քննարկվել են միջհամալսարանական երեք համապատասխան ամբիոնների վարիչների և դասախոսների հետ: Քննարկման արդյունքները ներկայացվել են ԳՊՀ գիտական խորհրդին:

Վերլուծել ենք նաև ուսման առաջադիմությանը և որակին խոչընդոտող հանգամանքները, որոնցից կառանձնացնենք հետևյալը. մանկավարժական խմբում երկրորդ և մյուս հայտերով ընդունված արական սեռի ուսանողները կա՛մ մասնագիտությունը փոխելու նկատառումներով, կա՛մ զինվորական ծառայության մեկնելու պատճառով չեն ցուցաբերում բարձր առաջադիմություն: Իսկ մագիստրոսական խմբերում, հիմնականում որպես հարակից մասնագիտությունից ընդունված ուսանող չեն ցուցաբերում բարձր առաջադիմություն:

Ուսանողների կարգապահական հարցերը ևս եղել են ուշադրության կենտրոնում: Հետևողական բացատրական աշխատանքների միջոցով փորձել ենք նվազագույնի հասցնել դասերից անհարգելի բացակայողների թիվը: Այնուհանդերձ առաջին կիսամյակում անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել 38, իսկ խիստ նկատողություն՝ 4 ուսանող: 2-րդ կիսամյակում նկատողություն՝ 17-ը, խիստ նկատողություն՝ 2-ը:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վարչական աշխատողների, ուսումնաօժանդակ անձնակազմի և դասախոսների որոշ մասի վերապատրաստման շնորհիվ ստացած գիտելիքներն ու կարողությունները միմյանց փոխանցելու և օգնելու միջոցով հաջողվեց ամբողջովին վերանայել առարկայական ծրագրերի նկարագրերը և դրանք շարադրել նորովի:

Առկա և հեռակա բաժիններում դասավանդվող բոլոր առարկայական ծրագրերում տարանջատվեցին ուսումնառության և գնահատման մեթոդները: Ինքնավերլուծության և հավատարմագրման գործընթացի պահանջների տեսանկյունից կատարվածը առաջընթաց էր, չնայած որոշ դասախոսներ հապճեպ և ստեղծագործական աշխատանքի փոխարեն կատարեցին մեխանիկական ընդօրինակումներ՝ ոչ միշտ հաշվի առնելով իրենց կողմից դասավանդվող առարկաների առանձնահատկությունները: Դասախոսների զգալի մասը կատարված փոփոխությունները ջանադրաբար հասցրեցին ուսանողներին, որոշ մասը համապատասխան բարեխղճություն չցուցաբերեցին, ուստի բացթողումներն ու թերացումները հաշվի են առնված 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգում:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ կատարվեցին բոլոր ամբիոններում ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի վերանայման ու թարմացման ուղղությամբ: Աշխատանքների ընթացքում համագործակցել ենք հանրապետության առաջատար պետական բուհերի համապատասխան ամբիոնների հետ:

Հասարակական գիտությունների և պատմության ամբիոնը համագործակցել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի հետ: Իրավագիտության ամբիոնը շարունակեց տեսական և պրակտիկ ոլորտների դասախոսական կազմի հետ արդյունավետ համագործակցությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ֆակուլտետի երեք ամբիոնների ուսումնական ծրագրերն իրականացնում են գիտությունների 7 դոկտորներ և 12 գիտության թեկնածուներ, ինչպես նաև երիտասարդ ասիստենտներ: Դասախոսական կայուն կազմը և աշխատանքային բարենպաստ միջավայրը պահպանված են: Ֆակուլտետի առանձնահատկություններից ելնելով դասատվության ընթացքն ապահովում ենք իրավիրյալ պրակտիկ մասնագետների միջոցով:

Հաշվետու ժամանակաշրջանում դասախոսների կողմից շարունակաբար թարմացվել և համալրվել են էլեկտրոնային ուսուցման համակարգի համապատասխան առարկայական տիրույթները:

Ուսանողների հարցումների արդյունքում պարզվել է, որ նրանց 94 %-ը օգտվում է էլեկտրոնային ուսուցման «E- learning.Gsu.am» համակարգից:

Հաշվետու ժամանակաշրջանում «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսի շրջանակներում ֆակուլտետում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ:

Ֆակուլտետը համագործակցել է մի շարք կազմակերպությունների, ուսումնական, մշակութային հաստատությունների հետ: Քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների հետ հանդիպումներ են կազմակերպվել Հ. Բունիաթյանի անվան պատկերասրահում, որտեղ դասախոսները կարդացել են արվեստին առնչվող թեմաներով դասախոսություններ:

Դասախոսները և ուսանողները համատեղ Գավառի մանկատան սաների համար անցկացրել են պատմության թեմաներով դասախոսություններ:

Ֆակուլտետի ուսանողները մասնակցել են «Սարդարապատից Արցախ» խորագրով համալսարանական մրցույթին և արժանացել պատվոգրերի:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ուշադրության կենտրոնում է եղել տվյալ և նախորդ տարիների շրջանավարտների զբաղվածության հարցը: Հետադարձ կապը ապահովվում է շրջանավարտների պարբերաբար այցելությամբ և նրանց աշխատանքի տեղավորվելու վերաբերյալ հարցումներով: Հաշվետու ժամանակահատվածում իրավագիտության բակալավրիատը ավարտել է 27 ուսանող, որոնցից 9-ը ուսումը շարունակում է մագիստրատուրայում: Պատմության բակալավրը ավարտել է 4 ուսանող, բոլորն էլ ուսումը շարունակում են մագիստրատուրայում: Մանկավարժության բակալավրը ավարտել են 15-ը, մագիստրատուրայում ուսումը շարունակում են 6-ը:

Մագիստրատուրայի շրջանավարտների 85%-ը աշխատում են տարբեր կազմակերպություններում:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր Հ. Խ. Հակոբյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ֆակուլտետի 14 դասախոս: Ուսանող- դասախոս փոխհամագործակցության

շրջանակներում որպես համազեկուցող հանդես եկան պատմության մագիստրատուրայի 2 ուսանող: Միջազգային գիտաժողովներին մասնակցել են 7 դասախոս:

Ֆակուլտետի 8 ուսանող մասնակցել են Վանաձորի և Գորիսի պետական համալսարանների կազմակերպած հանրապետական ուսանողական գիտաժողովներին: 12 ուսանող մասնակցել են ԳՊՀ ֆակուլտետային գիտաժողովներին:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի ուսանողների և աշխատակիցների կողմից կազմակերպվել են բազմաթիվ գրական-գեղարվեստական, ուսուցողական, ճանաչողական միջոցառումներ:

Իրավաբանական կլինիկայում ընդգրկված ուսանողները մասնակցել են Աղվերանում կազմակերպված հանրապետական միջբուհական դատախազին և արժանացել հավաստագրերի և խրախուսական մրցանակների:

**ՀՈՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018-2019
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

**1. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

1. Պահպանել պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատողների կազմը, հնարավորինս համալրել երիտասարդ խոստումնալից կադրերով,
2. Ուսումնասիրել ՀՀ Գեղարքունիքի մարզի աշխատաշուկայի պահանջները և հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների նախասիրությունները, հաշվառել, համադրել և բակալավրիատի ու մագիստրատուրայի կրթական աստիճաններում մշակել և իրագործել հումանիտար մասնագիտությունների կրթական ծրագրեր,
3. Գործնականում իրականացնել «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսը,
4. ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման և փորձագիտական խմբի զեկույցի ուսումնասիրման, կուտակած փորձի հենքի վրա կիսամյակը մեկ կատարել ինքնավերլուծություն և նախապատրաստվել ծրագրային հավատարմագրման,
5. Ամբողջովին վերանայել և լրամշակել դասընթացների, պրակտիկաների ծրագրերը՝ կրեդիտների հատկացման, ուսումնառության և գնահատման մեթոդների, առկա և հեռակա ուսուցման ձևերում դասընթացների լսարանային և ինքնուրույն ժամաքանակների բաշխվածության և վերջնարդյունքների հասանելիության տեսանկյուններից,
6. Վերանայել, լրամշակել և թարմացնել ուսումնական պլաններով նախատեսված դասընթացներով ուսանողներին տրվող դասախոսությունների նյութերը, հետևել էլեկտրոնային ուսուցման համակարգում դրանց ներբեռնման աշխատանքներին,
7. Ֆակուլտետում պահպանել արդյունավետ աշխատանքին նպաստող առողջ բարոյահոգեբանական միջավայր, խրախուսել յուրաքանչյուր աշխատակցի՝ իր պաշտոնի անձնագրին կամ աշխատանքի նկարագրին համապատասխան, ապահովել գործառույթների պատշաճ կատարումը,

8. Կատարելագործել ամփոփիչ ատեստավորման գործընթացը, հստակեցնել ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գնահատման չափանիշները, հանձնաժողովի նախագահի և կազմի ձևավորման համար առաջադրել բարձրակարգ մասնագետներ:

2. ՈՒՍՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

1. 2018-2019 ուստարվա ընթացքում կիսամյակային և տարեկան ցուցանիշներով ուսման առաջադիմությունը պահել 75-80 %-ի սահմաններում ապահովելով 1%-ի աճ, թույլ չտալ նահանջ այդ սահմաններից,
2. 100% առաջադիմություն ունեցող կուրսերի քանակը հասցնել առավելագույնի՝ կիրառելով նոր մեթոդաբանություն և նոր եզրույթ. «Բացարձակ 100%-անոց առաջադիմությամբ խումբ»՝ նկատի ունենալով այն խմբերը, որում չեն լինի բավարար գնահատական ստացողներ,
3. Ուսման առաջադրնթացի, արդյունավետության և որակի բարելավման աշխատանքները համարել շարունակական գործընթաց, այն դիտարկել դիալեկտիկական միասնության մեջ՝ միաժամանակ տարանջատելով «ուսման առաջադիմություն» և «ուսման որակ» հասկացությունները: Վերջինս նպատակաուղղված է բավարար գնահատականների հնարավոր աստիճանական նվազեցմանը,
4. Մասնագիտական ամբիոնների կողմից սահմանված կարգով իրականացնել դասալսումներ, կատարել վերլուծություններ և հետևություններ,
5. Ավելացնել կամընտրական դասընթացները և դրանց վերաբերյալ բարձրացնել ուսանողների իրազեկվածությունը:

3. ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

1. Մշակել մասնագիտական ամբիոնների հետազոտական գործունեության 2018-2019 ուստարվա ծրագիրը, գիտական հետազոտությունը շաղկապել տարածաշրջանի սոցիալ-պատմական և մշակութային խնդիրների վերհանմանը:
2. Հստակեցնել մասնագիտական ամբիոնների գիտական հետազոտական ուղղվածությունը, առանձին դասախոսների գիտական հետաքրքրությունների ոլորտը զուգադրել, գիտական ներուժը ուղղորդել որևէ կոնկրետ խնդրի լուծմանը:
3. Ֆակուլտետի կրթական և գիտական ներուժը ուղղել ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային զարգացմանը:
4. Իրականացնել գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, խրախուսել ուսանող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը բարոյական և նյութական միջոցներով,
5. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները փոխկապակցել տարածաշրջանի արդիական խնդիրների ուսումնասիրության, վերլուծության և հետազոտությունների հետ:
6. Ապահովել մասնագիտական ամբիոնների բոլոր դասախոսների ակտիվ մասնակցությունը համալսարանի 2018-2019 ուստարվա գիտաժողովներին, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներին: Գիտաժողովներում կարդացած

զեկուցումները տպագրել ԳՊՀ հոդվածների ժողովածուներում, ինչպես նաև հանրապետության և արտերկրի առաջատար հանդեսներում:

7. Գավառի պետական համալսարանի տարեկան հոդվածների ժողովածուներում տպագրված նյութերը օգտագործել սեմինար պարապմունքների, անհատական, կուրսային աշխատանքների և գիտաուսումնական ուղղվածություն ունեցող այլ աշխատանքներում:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ

1. Լինելով հումանիտար ոլորտի գիտելիքներ փոխանցող ֆակուլտետ՝ ուսանողության շրջանում, որպես աշխարհայացքային կողմնորոշում, նպատակադրված աշխատանքի միջոցով ամրագրել 21-րդ դարում կայուն ու խորը գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը, արժևորել գիտելիքը և դրա դերն ու նշանակությունը մարդու անձնական և հասարակական կյանքում:
2. Ուսանողների շրջանում անցկացնել հարցումներ պրոֆեսորդասախոսական անձնակազմի գործունեության արդյունավետության վերաբերյալ, վերլուծել, քննարկել ֆակուլտետի խորհրդի նիստերում, ապահովել հետադարձ կապ դասախոսական անձնակազմի հետ, ձեռնարկել բարելավման միջոցներ,
3. Հետևողական աշխատանքի շնորհիվ տարաբնույթ հիմնադրամներից ուսանողների օգտվելու հնարավորությունը հասցնել առավելագույնի, նպաստել սովորողների ընտանիքների ֆինանսական «բեռի» թեթևացմանը, ուսումնասիրել և բացահայտել նրանց սոցիալական կարիքները, իրականացնել աջակցության ծրագրեր:
4. Ֆակուլտետի համակարգչային լսարանի և համացանցի հնարավորությունները օգտագործել լիարժեք, դասերն անցկացնել վավերագրական և ուսուցողական ֆիլմերի ցուցադրմամբ, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:
5. Ֆակուլտետում կահավորել 3 մասնագիտությունների համար նախատեսված մասնագիտական գրքերի ընթերցասրահ:
6. Նպաստել ուսանողական ինքնակառավարման մարմինների ակտիվ գործունեությանը, խրախուսել այդ մարմիններում ուսանողների առավելագույն ընդգրկվածությունը, ակտիվությունը և նախաձեռնողականությունը:
7. Ուսման առաջադիմությանը, որակի բարձրացմանը ու կարգապահության ամրապնդմանը նպատակաուղղել ուսանողական ինքնակառավարման մարմինների ջանքերը:
8. Ապահովել ֆակուլտետի ուսանողների ակտիվ մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացներին:
9. Ուսանողների հասարակական ակտիվությունը դիտարկել որպես ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, լայն աշխարհայացք և կայուն համոզմունք ունեցող անհատական կայացման բաղկացուցիչ մաս:
10. Նպատակաուղղել ֆակուլտետի ուսանողական խորհրդին և առանձին ուսանողներին՝ ակտիվորեն համագործակցելու ֆակուլտետում գործող Զինիշյան հիշատակի հիմնադրամի «Ծրագրային թիմի» հետ բանավեճեր, կլոր սեղաններ, ինտելեկտուալ

խաղերի համատեղ մրցույթներ կազմակերպելու և փոքր դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով:

11. Լիարժեք օգտագործել ԳՊՀ իրավաբանական կլինիկայի հնարավորությունները, ապահովել առաջատար ուսանողների մասնակցությունը ամառային և ձմեռային դպրոցների դասընթացներին: Կլինիկայում անցկացնել իրավաբան ուսանողների նախաավարտական պրակտիկաները, միջբուհական տարաբնույթ միջոցառումներ, դատախազ, կլոր սեղան-քննարկումներ:
12. Նպատակային աշխատանք կատարել առաջին կուրս ընդունված ուսանողների հետ, ծնողների հետ հանդիպել մինչ սեպտեմբերի 1-ը, հարցաթերթիկների լրացման միջոցով ծանոթանալ առաջին կուրսեցիների նախասիրություններին՝ հասարակական աշխատանքներին և տարաբնույթ միջոցառումներին ընդգրկելու նպատառումներով:
13. Իրագործել «ուսանողական յուրաքանչյուր խումբ՝ կիսամյակը առնվազն 1 միջոցառում» կարգախոսը: Միջոցառումները պետք է կրեն ճանաչողական, գիտագեղարվեստական, գրական-գեղարվեստական ուղղվածություն:
14. Ուսանող-դասախոս փոխգործակցությունն առավել ամրապնդելու և օգտակար սոցիալական փորձը փոխանցելու նկատառումներով կազմակերպել համատեղ տարաբնույթ միջոցառումներ՝ այդ թվում ազգային ավանդույթների, կարևոր հորելյանների, պատմական հիշարժան տարելիցներին նվիրված:
15. Ստեղծել հնարավորություններ ֆակուլտետի ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության աստիճանի բարձրացման, էլեկտրոնային գրադարանից և այլ ուսումնական, տեխնիկական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու նկատառումներով:
16. Անցկացնել «Լավագույն կուրս» և «Լավագույն ուսանող» մրցույթներ և հաղթող լավագույն ուսանողներին ներկայացնել Հանրապետության լավագույն ուսանողների ամենամյա մրցույթին՝ այն ակնկալիքով, որ յուրաքանչյուր տարի ունենանք մեկ հաղթող:

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. Իրականացնել հենանիշային վերլուծություն՝ ֆակուլտետի ՄԿԾ-ների և նմանատիպ ծրագրեր իրականացնող Հանրապետության առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետ:
2. Ֆակուլտետի աշխատակազմի և դասախոսների ներուժն օգտագործել, համախմբել և նպատակամղել՝ տարաբնույթ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով:
3. Աջակցել և խրախուսել ուսանողներին ընդգրկվելու տարաբնույթ ծրագրերում, կատարելու կամավորական աշխատանք, ձեռք բերելու գործնական գիտելիքներ ու կարողություններ:
4. Համագործակցել Հանրապետության առաջատար բուհերի համապատասխան մասնագիտական ամբիոնների և գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ գիտական աշխատանքներ կատարելու և գիտաժողովների փոխադարձ մասնակցելու համար:

**Հ. Գ. Ղազոյան՝
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի ղեկավար**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
2-րդ	8	-	4	100
3-րդ	15	-	4	60
4-րդ	26	-	8	84
Պատմություն				
1-ին	4	-	3	100
3-րդ	5	-	2	100
4-րդ	4	-	4	100
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին				
2-րդ	12	-	2	75
3-րդ	8	-	2	100
4-րդ	8	-	3	100
	15	-	3	93
Ընդամենը	105	-	35	86
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	22	-	4	55
2-րդ	12	-	-	58
Պատմություն				
1-ին	5	-	4	80
2-րդ	7	-	3	57
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա				
1-ին	6	-	6	100
2-րդ	4	-	2	100
Ընդամենը	56	-	19	66

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն 2-րդ	8	-	4	100
3-րդ	15	-	5	80
Պատմություն 1-ին	4	-	-	100
3-րդ	5	-	1	100
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	12	-	2	66
2-րդ	7	-	-	100
3-րդ	8	-	-	100
Ընդամենը	59		12	88,1
Մագիստրատուրա				
Իրավագիտություն 1-ին	21	-	3	33
Պատմություն	5	-	5	100
Տարր. մանկավարժ. և մեթոդիկա	6	-	2	83,3
Ընդամենը	32		10	53

2017/2018 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	3	2	1	41	1

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Քուրքյան Լուսիկ Ներսեսի,*
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ղաջոյան Համլետ Գրիշայի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Օհանյան Հայկ Հեքիմի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Մայիլյան Անուշ Տոլիկի** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դասախոս
4. **Գարեյան Մելանյա Վարդանի** - դասախոս
5. **Խաչիկյան Հայկ Խաչիկի** - դասախոս
6. **Ղաջոյան Արմինե Սամվելի** – ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Բարսեղյան Պարգև Աշոտի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Այվազյան Էդվարդ Իշխանի** – մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
3. **Զարգարյան Արփինե Հրանտի** - դասախոս
4. **Կոտոլկյան Թամարա Հակոբի** - դասախոս
5. **Սաֆարյան Ալիտա Սոսի** - դասախոս
6. **Դավթյան Արմինե Վահրամի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները և մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները):
2. Մարդը ժամանակակից սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և կրթադաստիարակչական զարգացման արժեհամակարգում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	2	-	17	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ղաջոյան Հ. Գ.** Հուշի արժեքները և «Հրանտ Հակոբյանը հավերժի ճամփորդ» հուշապատումը//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 24-39:
2. **Բարսեղյան Պ. Ա.** Հայ եկեղեցու նվիրյալը. Բագրատ արք. Վարդազարյան// Տարեգիրք 2017, Աստվածաբանության ֆակուլտետ, XII, Երևան, 2017, էջ 52-165:
3. **Բարսեղյան Պ. Ա.** Վահագնի պաշտամունքը հայոց մեջ//«Интернаука»: научный журнал, N 23 (57). Часть 2. М., Изд. «Интернаука», 2018, էջ 40-42:
4. **Բարսեղյան Պ. Ա.** Մարդու արարումը և փրկությունը սիկիզմում//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 722-729:
5. **Քուրբջյան Լ. Ն., Աթայան Ն. Ա.** Մանկատան սաների մասնագիտական կողմնորոշման գործընթացում հետաքրքրությունների և դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 642 – 649:
6. **Քուրբջյան Լ. Ն., Վահանյան Ա. Վ.** Ընտանեկան կարծրատիպերի դերը ծնող-երեխա փոխհարաբերությունների կառուցվածքում//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 650 – 658:
7. **Куркчян Л.Н., Ваганян А.В.** Психологическая помощь семье при локализации проблем в области детско-родительских отношений//Жур. «Воспитатель ДОУ», N 5, М., 2017, с. 101-106:
8. **Օհանյան Հ. Հ., Օհանյան Գ. Հ.** Նորովի մոտեցում ծնողների մանկավարժական իրազեկման խնդրին//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 659 – 666:
9. **Մայիլյան Ա. Տ.** Մեծահասակների առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը որպես կրթական խնդիր//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 697-707:
10. **Խաչիկյան Հ. Խ.** Շախմատը որպես հասարակության կյանքի արտացոլում և նրա դերը ժամանակակից աշխարհում//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 716-721:
11. **Ե.Լողատկո, Այվազյան Է. Ի.** Դպրոցական ուսուցման պրոբլեմները Վ. Ֆիրսովի գիտամանկավարժական ժառանգությունում//Մաթեմատիկական դպրոցում, Թ. 1 (109) և թ. 2 (110), Երևան, 2017, էջ 55-63,30-35:
12. **Այվազյան Է. Ի.** Պատմական ակնարկ քառակուսային հավասարման լուծման մասին// Թ. 3 (111), 23-36, Երևան, 2017:

13. **Айвазян Э.И.** Об одном способе нахождения множества (области) значений функции// Научный вестник Кировоградской Летной академии НАУ Украины, Серия: Пед. науки, N 1, Кроповницкий, 2017, стр. 296-299:
14. **Айвазян Э.И.** О целесообразности применения современных методов обучения в ВУЗах//Вестник Черкасского ун-та, Педагогические науки, N7, Черкассы, 2018, Стр. 90-96:
15. **Айвазян Э.И.** Об обучении доказательству методом исключения//Венгрия, журнал - «Science and Education a New Dimension», Педагогика: Психология, 02: VI (66), Issue 162, Budaapest, 2018, Стр. 7-11:
16. **Դավթյան Ա. Վ.** Կրտսեր դպրոցականների դասագրքերի ստեղծման մեթոդաբանական հիմքերը//Ձեռնարկ, Երևան, Հեղ. հրատ., 2018թ., 143 էջ:
17. **Դավթյան Ա. Վ.** Ես պատրաստ եմ դպրոց գնալ (Հ.Մ. Գրիգորյան, Ա.Վ. Դավթյան)//Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիոլոգիական եվ հոգեբանամանկավարժական հետազոտություն, Ուսումնամեթոդական ուղեցույց ձեռնարկ և Այբուբեն, Հեղ. Հրատ., 2018թ., 81 էջ:
18. **Давтян А.В.** Компетентностный подход в процессе подготовки кадров для преподавания предметов религиоведения в средней и высшей школе//Научный результат. Педагогика и психология образования, 2017, DOI: 10.18413/2313-8971-2017-3-1-16-22, URL: <http://rrpedagogy.ru/journal/annotation/1050/> :
19. **Лалабегян А.Б., Давтян А.В.,** Исследование мотивационной сферы личности современных студентов, Международная Объединенная Академия Наук, Тенденции развития науки и образования, Научный журнал, В выпуске собраны материалы XXXIII международной научной конференции «Тенденции развития науки и образования», 25 декабря 2017 г., N 33, Часть 3, стр. 18-24, SPLN 001-000001-0232-L,http://journal.ru/wp-content/uploads/2016/05/lj25.12.2017_p3.pdf:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Հարությունյան Համլետ Մալխասի,
*պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Արսեն Աշոտի** - պատմական գիտությունների թեկնածու
2. **Պողոսյան Աշխունջ Ամիրխանի** - պատմական գիտությունների թեկնածու
3. **Հայրապետյան Քանաքարա Խաչիկի** - ասիստենտ

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Զոհրաբյան Էդուարդ Լենդրուշի** - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Պողոսյան Էդուարդ Վանիկի** – պատմական գիտությունների դոկտոր
3. **Թունյան Վալերի Գեորգիի** - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երևանի նահանգը 1849-1917 թվականներին:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	2	-	1	13	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Հարությունյան Հ. Մ.** Արցախի հիմնահարցը 1917-1920թթ.//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 140-155:
2. **Հարությունյան Հ. Մ.** Նոր Բայազետի Գավառը 1920թ. Մայիսյան ապստամբության համատեքստում //ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 140-155:
3. **Հարությունյան Հ. Մ., Սիմոնյան Ս. Ս.** Երևանի նահանգի ֆարիկա-գործարանային արդյունաբերությունն ըստ 1900թ. վիճակագրական//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 176-189:
4. **Հարությունյան Հ. Մ., Սաղաթեյան Մ. Լ.** Երևանի նահանգի գյուղատնտեսությունն ըստ 1899թ. վիճակագրական տվյալների//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 189-203:
5. **Թունյան Վ. Գ.** Թուրքիայի ԱԳՆ «Հայկական հարցի 9 հարցը և 9 պատասխանը»//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 203-216:
6. **Թունյան Վ. Գ.** Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը//Պատմաբանասիրական հանդես, Երևան, N 1, 2018, էջ 20-34:
7. **Թունյան Վ. Գ.** Հայկական հարցը, Կայսրական քաղաքականության ավարտը և գլոբալիզացիան// Պատմություն և Մշակույթ, Երևան, 2017, էջ 41-49:
8. **Тунян В. Г.** Фальсификация истории восстановления Армянской государственности в Азербай-джанской историографии// Ереван, 2018, 396 էջ:
9. **Тунян В. Г.** Католикос Епрем I Дзорахецци//Ереван, 2018, 286 էջ:
10. **Թունյան Վ. Գ.** Նոր Նախիջևանի հայերը գեղձարությունում–Армяне юга России, История, культура, общее будущее//Материалы III, Международной конференции г. Ростов-на-Дону, 30-31мая 2018 г. Ростов-на-Дону, 2018, с. 201-203.
11. **Պողոսյան Ա. Ա.** «Ջրաբերդ» խմբին պատկանող գորգերի ծագումնաբանական ու տիպաբանական հարցերի մասին//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 260-281:
12. **Հակոբյան Ա. Ա., Շազոյան Գ., Խուրշուդյան Վ.** «Պանդի» ուխտը՝ որպես գետաշենցիների ինքնության հարացույց//Հնագիտության և ազգագրության

ինստիտուտի աշխատություններ N1, Հայ ժողովրդական մշակույթ XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան 2018, էջ 116-125:

13. **Հակոբյան Ա. Ա.** Կովկասյան տարածաշրջանի էթնոքաղաքական պատմություն// Ուսումնամեթոդական ուղեցույց, Երևան, 2018, 44 էջ:
14. **Հայրապետյան Ք. Խ.** Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի՝ Երևանի փոխթեմակալության առաջին շրջանը (1909-1914թթ.)//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 134-141:
15. **Հայրապետյան Ք. Խ.** Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հասարակական-քաղաքական գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Մայիս, Ս. Էջմիածին, 2018:
16. **Հայրապետյան Ք. Խ.** Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյանի մահվան անդրձվածի խնդրի քննական վերլուծությունը պատմագիտության մեջ, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Հունիս, Ս. Էջմիածին, 2018:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հակոբյան Ռուզաննա Խաչիկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Ապրոյան Արսեն Հրաչիկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու
3. **Խաչատրյան Սամվել Արտաշեսի** - իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Հովհաննիսյան Օլգա Արտյոմի** - ԳՊՀ դոցենտ
5. **Մուրադյան Պապին Օնիկի** - ասիստենտ
6. **Դանոյան Հեղինե Գուրգենի** – ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Հակոբյան Հրանուշ Հրանտի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Խաչատրյան Աշոտ Հայկի** - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
3. **Հարությունյան Մնացական Հայկի** - իրավաբանական գիտությունների թեկնածու
4. **Վարդանյան Գեղեցիկ Մարատի** - ասիստենտ
5. **Հարությունյան Արևիկ Տելեմակի** – ասիստենտ
6. **Լազարյան Վարդան Գերասիմի** - դասախոս
7. **Վարդանյան Մարզպետունի Գոռի** - դասախոս
8. **Շանոյան Վարդան Սերգոյի** – դասախոս
9. **Գրիգորյան Տարոն Վրեժի** – ասիստենտ
10. **Բախտիկյան Լուսինե Վանիկի** - ասիստենտ:

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,
2. ՀՀ սահմանադրական, քաղաքացիական իրավունքի ինստիտուտներ,
3. Հայաստան-Սփյուռք գործակցություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	11	1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հակոբյան Հ. Հ.** Հայկական սփյուռքը հարափոփոխ աշխարհում, մենագրություն (հայերեն, ռուսերեն, արևմտահայերեն), Երևան, 2017, 652 էջ:
2. **Հակոբյան Հ. Հ.** Հայաստան-սփյուռք գործակցության զարգացում. պետական քաղաքականությունը (2008-2016թթ.)//Հայագիտության հարցեր, N 2 (11), Երևան: ԵՊՀ հրատ., 2017, էջ 3-28:
3. **Հակոբյան Հ. Հ.** Հայ ինքնության հիմնահարցեր//Հայկազյան հայագիտական հանդես, տարեգիրք, N 37, Բեյրութ, 2017, էջ 9-42:
4. **Հակոբյան Հ. Հ.** Սփիհոքը նոր հորիզոններու դիմաց, Սփիհոքի հայի ինքնահասկացողութիւնը //«Սփիհոք և ինքնութիւն» գիտաժողովի նյութեր, Անթիլիաս, 2018, էջ 21-45:
5. **Հակոբյան Հ. Հ.** Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման հիմնախնդիրները երեսուն տարի անց //Թեզիսներ, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտաժողովի նյութեր, 2018, 4 էջ:
6. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Մարդասիրությունը՝ որպես իրավունքի ընդհանուր սկզբունք//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 19-28:
7. **Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ.** Իրավունքի սկզբունքները որպես հիմնարար գաղափարներ// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 730-739:
8. **Հակոբյան Ռ. Խ.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվությունը՝ ըստ ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունների//Հանրային կառավարում, N 1, 2017թ., էջ 91-101:
9. **Ապրոյան Ա. Հ.** Երեխայի իրավական կարգավիճակի սահմանման միջազգային-իրավական հիմքերի մասին// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 740-750:
10. **Խաչատրյան Ս. Ա.** Հայոց Տրդատ Առաջին և Սանատրուկ թագավորների անձերի նույնության շուրջ (ուսումնասիրություն իրավաբանական և տրամաբանական

ապացուցման եղանակներով ու մեթոդներով), Արդարադատություն//N 3 (44), Երևան, էջ 44-54:

11. **Հարությունյան Ա. Տ.** Ապահովագրության պատմական էվոլյուցիան//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 761-771:
12. **Հովհաննիսյան Օ. Ա.** Փոխնակ մայրության իրավական /օրենսդրական/ կարգավորման որոշ խնդիրների վերաբերյալ//ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 5 (20), 2018, էջ 751-760:
13. Khachatryan A. Samvel Age groups law: children, youths, adults and elders in zoroastrian and early Christian Armenia// European journal of humanities and social sciences, N 3, Vienna, 2018, p. 156-162, ISSN 2414-2344:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ **Ամիրխանյան Սամվել Գրիգորի,**
 Կնիքապահության թեկնածու, դոցենտ,
 ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ **Հերզնյան Մարիամ Նորիկի,**
 Կնիքապահության թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
041101.01.6	041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041101.01.7	041101.00.7 Հաշվապահական հաշվառում և հարկում Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	Տնտեսագիտության մագիստրոս
041201.01.6	041201.00.6 Ֆինանսներ Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Տնտեսագիտության բակալավր
041201.01.7	041201.00.7 Ֆինանսներ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Տնտեսագիտության մագիստրոս
031101.01.6	031101.00.6 Տնտեսագիտություն Տնտեսագիտություն	Տնտեսագիտության բակալավր
031101.01.7	031101.00.7 Տնտեսագիտություն Տնտեսագիտություն	Տնտեսագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 141

Շրջանավարտների թիվը՝ 62

**ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2017-2018 ուսումնական տարին հորեյյանական էր, քանի որ լրացավ է ԳՊՀ հիմնադրման 25-ամյակը: Անցած 25 տարիները բազմապատկել են բուհի, ֆակուլտետի կողմից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրեր պատրաստելու, եվրոպական կրթական համակարգին համապատասխան գործելու փորձը:

Հաշվետու ուսումնական տարում առաջնորդվել ենք ԳՊՀ որդեգրած կարգախոսով՝ «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, ակտիվ նախաձեռնություններ»:

Տնտեսագիտական ֆակուլտետում ուսուցման և դաստիարակության գործընթացի բարելավման հիմքում եղել է 2017-2018 ուսումնական տարվա հայեցակարգային պահանջների, նպատակների և դրանց միտված գործողությունների իրականացումը:

Լուրջ ուշադրություն է դարձվել դիմորդների ներգրավման, աշակերտներին տնտեսագիտական ֆակուլտետի մասնագիտություններին ծանոթացնելու, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքներն ակտիվացնելուն: Այդ նպատակով կազմակերպվել են այցելություններ և մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություններ Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի ավագ և Ծովազարդի, Լճաշենի, Երանոսի, Կարճաղբյուրի, Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցներում: Գործատուների, ինչպես նաև դիմորդների շրջանում կատարվել են հարցումներ, մասնագիտությունների նկատմամբ աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրություն, կազմակերպվել են դպրոցի բարձր դասարանների աշակերտների հանդիպումներ համալսարանի դասախոսների և ուսանողների հետ: Տարածաշրջանի տնտեսական զարգացման հեռանկարներին, առանձնահատկություններին և աշխատաշուկայի պահանջներին վերաբերող նորությունները ներառվել են առարկայական ծրագրերում:

Ֆակուլտետում ձեռնարկվել են համալիր միջոցառումներ կրթության որակի բարձրացման, ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման ուղղությամբ: Աշխատանքներ են կատարվել կրթական գործընթացը բազմաբովանդակ դարձնելու, գնահատման նորմերից շեղումները բացահայտելու, ամբիոններում առարկայի դասավանդման որակը ուսումնասիրելու ուղղությամբ: Մշակել ենք առարկաների դասավանդման որակի ապահովման համալիր միջոցառումներ, առաջադիմությամբ հետ մնացող ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքի պլան: Հայեցակարգով նախատեսված գործողությունների արդյունքում կատարվել են 2 հարցում ուսանողների շրջանում՝ որակի ապահովման բաժնի հետ միասին, ուսումնասիրություններ շահակիցների շրջանում, վերլուծություններ, միջանկյալներից առաջ 1-ական խորհրդատվություն 3-րդ և 4-րդ կուրսերում, ուսանողների մասնակցություն ուսանողական գիտաժողովների Գորիսում և Վանաձորում, ցածր առաջադիմությամբ ուսանողների հետ տարվող աշխատանքների ծրագրի մշակում, ամբիոնային 2 քննարկում – սեմինար դասավանդման որակի արդյունավետության բարձրացման վերաբերյալ, 3-րդ կուրսերում /ըստ

մասնագիտությունների/ անցկացված միջանկյալ քննությունների որակի վերաբերյալ ամբիոնային քննարկում:

Վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը՝ դրանք համապատասխանեցնելով արդի չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին: Կրթական ծրագրի որակի վերաբերյալ գնահատումներն իրականացնելիս՝ հաշվի են առնվել շահակիցների առաջարկությունները, ուսումնասիրվել Հանրապետության, ինչպես նաև արտերկրի նմանատիպ մասնագիտություններ ունեցող բուհերի ծրագրերը, կատարվել է համեմատական վերլուծություն, ստուգվել ծրագրերի նպատակների աստիճանական իրացման ընթացքը, գնահատվել ստացված արդյունքները՝ դրան մասնակից դարձնելով գործատուներին: Իրականացվել են քննությունների ընթացքի և արդյունքների դիտարկում, կրթական ծրագրերի վերաբերյալ համեմատական վերլուծություն է կատարվել հիմք ընդունելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի Ամերիկյան համալսարանի, Ագրարային համալսարանի /Կառավարման և ֆինանսների ամբիոն/, Մոսկվայի տնտեսագիտական շինարարական ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի /Հաշվապահական հաշվառման ամբիոն/ կրթական ծրագրերը: ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսումնական պլանները քննարկվեց «Արդշինբանկ», «IDբանկ»-ի, «Ֆինքա», «ՍԵՖ» ֆինանսական կազմակերպությունների մասնագետների հետ: Կատարվել է հենանիշային ուսումնասիրություն «Կառավարում և ֆինանսներ» /մագիստրատուրա/ կրթական ծրագրի վերաբերյալ: Երեք բանկերում և ֆինանսական կազմակերպություններում տեղի են ունեցել քննարկումներ կառավարիչների և գործատուների մասնակցությամբ:

Կրթության արդյունավետությունը բարձրացնելու կարևոր նախապայմաններից է առարկայական ծրագրերի շարունակական թարմացումը, ակնկալվող մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների հստակ սահմանումը, կրթական ելքային արդյունքների համապատասխանեցումը գործատուների պահանջներին: 2017- 2018 ուստարվա ընթացքում վերանայվել և համեմատվել են առարկայական ծրագրերի 40% -ը բակալավրիատում, 20%-ը՝ մագիստրատուրայում: Պարբերաբար իրականացվել են քննարկումներ ուսանողների, գործատուների և շրջանավարտների շրջանում:

Սկզբունքային նշանակություն ունի աշխատաշուկայի պահանջների, գործատուների ակնկալիքների ուսումնասիրությունը, ուսուցման բովանդակության, տեսական և գործնական գիտելիքների համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին, Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկությունների հաշվառումը: Կատարվել են գործատուների կարիքների ուսումնասիրություն «Արդշինբանկ», «ABB», «VTB», «IDբանկ», «AEB» բանկերում, «Ֆինքա», «ՍԵՖ» ֆինանսական կազմակերպություններում:

«Կառավարչական հաշվառում» առարկայի գործնական դասաժամերը ավելացվել են 32 ժամով, «Հաշվապահական հաշվառում համակարգիչների միջոցով» առարկան 48-ից դարձել է 64 ժամ, ավելացել են նաև «Հարկեր, հարկային քաղաքականություն» առարկայի գործնական ժամերը:

Արդիական խնդիրներից են ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառումը, դրանց արդյունավետության բարձրացումը, ուսանողներին համակարգի վերաբերյալ պատշաճ իրազեկումը, գնահատման գործոնների հստակ ներկայացումը: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքների արդյունքում

«Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր» /դասախոս՝ Հովհաննիսյան Ա./ և «Էլեկտրոնային բիզնես» /դասախոս՝ Ղազարյան Ա./ առարկաների քննություններն անցկացվել են «Examination.GSU» ծրագրով, անցկացվել են խորհրդատվություններ գնահատման մեթոդների վերաբերյալ:

Ֆակուլտետում մշտական քննարկման առարկա են դասավանդման ավանդական և նորագույն մեթոդների արդյունավետ համադրումը, համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ) և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների, եվրոպական կրթական մեթոդների ուսումնասիրման և կիրառման հարցերը, որոնք պետք է հստակ արտացոլվեն կրթական գործընթացներում: Կազմակերպվել են քննարկումներ, մեթոդական գրականության ուսումնասիրություններ: Անցկացվել են կիսամյակային հարցումներ 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում, կազմակերպվել է արտերկրում ուսանած ուսանողների կողմից արտասահմանյան բուհերում ընդունված դասավանդման մեթոդների ներկայացում:

Ուշադրության կենտրոնում են եղել մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացի բարելավման, մագիստրոսների հետազոտական հմտությունների զարգացման հարցերը: Այդ նպատակով կիրառել ենք մագիստրոսական թեզերի 2 ղեկավար ունենալու պրակտիկան: Արդյունքում 5 թեզ ղեկավարել են նաև գործատուների հանրապետական միության մասնագետները, ընդ որում՝ այդ ձևաչափով 2 մագիստրոսական թեզ արդեն կատարվել է, իսկ 3-ը ընթացքի մեջ են: Կարևորվել է մագիստրոսների հետազոտական աշխատանքների կիրառական ուղղվածությունը:

Նպատակային աշխատանք է իրականացվել միջազգային ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցությունն ապահովելու ուղղությամբ: Կազմակերպվել են հանդիպումներ արտերկրում ուսանած ուսանողների և ներկայումս մասնագիտական աշխատանքի անցած շրջանավարտների հետ, անգլերենի հմտությունները զարգացնելու նպատակով անցկացվել են արտալսարանային պարապմունքներ, օտարալեզու գրքերի ընթերցումներ և քննարկումներ: Այդուամենայնիվ, միջազգային ծրագրերի առումով տեղի է ունեցել մասնակցության նվազում /2016-2017 ուստարի՝ 9 ուսանող, 2017-2018 ուստարի՝ 5 ուսանող/:

Հայեցակարգային կարևոր խնդիրներից է պրակտիկաների արդյունավետության բարձրացումը, պրակտիկաների ծրագրերի նպատակամղումը ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների լիարժեք ձևավորմանը, նրանց կոնկրետ մասնագիտական աշխատանքի նախապատրաստմանը: Վերանայվել են ուսումնական պրակտիկայի ծրագրերը: Պայմանագրեր են կնքվել Երևանի «Կենցաղային քիմիայի գործարան», Գավառի «Հեր-Մուշ շին» ՍՊԸ-ների և «Սևանի հացի գործարան» ՓԲԸ-ի հետ: Հարցումներ են անցկացվել պրակտիկան անցկացնող կազմակերպությունների մասնագետների շրջանում՝ ԳՊՀ ուսանողների գիտելիքներից բավարարվածության վերաբերյալ:

Ֆակուլտետում նախատեսվել է միջոցներ ձեռնարկել ամփոփիչ (ավարտական) ատեստավորման, ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացի բարելավման համար՝ սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատման նպատակով: Մշակվում են մագիստրոսական

թեզերի և ավարտական աշխատանքների գրագործության կանխարգելման մեխանիզմներ: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

Ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է նաև ուսուցման էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման հանգամանքով, ուստի մշտապես թարմացվում և բարելավվում է ուսանողների համար նախատեսված «E.Learning.GSU.am» էլեկտրոնային ուսուցման համակարգը: Բոլոր առարկաների գծով կիսամյակների սկզբում կատարվում է էլեկտրոնային ռեսուրսների թարմացում և մշտադիտարկում:

Տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների աշխատանքի հիմնական ուղղվածությունը գերակա գիտական ուղղությունների հստակեցումն է ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների հաշվառմամբ: Սակայն, այս այս ուղղությամբ տարվող աշխատանքները դեռևս հեռու են բավարար լինելուց, և այս առումով անելիքներ շատ ունենք:

Տնտեսագիտական ֆակուլտետում կարևորվում են նաև ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքները: Ուսանողների հետ շարունակական բացատրական աշխատանքներ են կատարվել, որպեսզի ուսանողը գիտակցի իր ընտրած մասնագիտության կարևորությունը և վերաբերվի իր մասնագիտական կայացմանը պատասխանատվության մեծ զգացումով: Կարևոր հանգամանք է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին: Ուսանողների շրջանում մշտապես անցկացվում են գիտելիքների, հմտությունների պարբերական ստուգումներ, զրույցներ մասնագիտության շուրջ: Իրականացվում է ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում, բոլոր կուրսերի ուսանողների էլեկտրոնային բազայի թարմացում:

Ուսանողների համար կազմակերպվում են կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումներ, ինտելեկտուալ մրցույթներ, իրականացվում են գիտելիքի արժևորմանը միտված ծրագրեր: Կազմվում և իրականացվում է միջոցառումների անցկացման ժամանակացույց-ծրագիր: Մասնավորապես, 2017-2018 ուստարում անցկացվել է 5 միջոցառում (նախատեսված 9-ի փոխարեն): Այստեղ ունենք թերակատարում: Մեր նպատակն է նաև բազմաբնույթ ձեռնարկներով ապահովել սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակությունը: Ապահովվել է «Տնտեսագետների ակումբի» մասնակիցների թվի աճ: Նախատեսվել էր ստեղծել նաև «Սոցիոլոգների ակումբ», սակայն այդ ձեռնարկը չի իրականացել:

Որոշակի աշխատանքներ են կատարվել վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում: Զարգացման հայեցակարգով նախատեսված էր իրականացնել ծրագրեր՝ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական զարգացման նպատակով նրանց վերապատրաստման, որակավորումների բարձրացման ծրագրեր: Անհրաժեշտ է մշակել և գործարկել դասախոսների վերապատրաստման դասընթացներ: Այս առումով աշխատանքները շատ են: Խրախուսվել է երիտասարդ դասախոսների մասնագիտական

աճը, նրանք ընդգրկվել են գիտահետազոտական աշխատանքներում, մասնակցել գիտաժողովների:

Այնուամենայնիվ, կան հայեցակարգով նախատեսված աշխատանքներ, որոնք չեն կատարվել կամ թերի են իրականացվել: Մասանվորապես խոսքը վերաբերում է 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակում նախատեսված շրջանավարտների հավաք-հանդիպմանը և հայաստանյան հաստատությունների հետ համագործակցության ակտիվացմանը:

2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգով նախատեսված այն աշխատանքները, որոնք չեն իրականացվել, կներառվեն 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգում:

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը

2017-2018 ուստարում ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ դիմել է 17 դիմորդ, որից բուհ է ընդունվել 10-ը: 2016-2017 ուսումնական տարում տնտեսագիտական ֆակուլտետ դիմել է 20 դիմորդ, որից բուհ է ընդունվել 8-ը:

Ընդունելությունը ունի հետևյալ պատկերը: 2017-2018 ուստարում տնտեսագիտական ֆակուլտետ է ընդունվել 34 դիմորդ՝ բակալավրիատում 10 ուսանող, մագիստրատուրայում 24: 2016-2017 ուստարում ընդունվել է 31-ը: Թեև անցած ուստարվա համեմատ ուսանողների թիվն աճել է 3-ով, սակայն ընդհանուր պատկերը բացասական միտում ունի: Եթե 2016-2017 ուստարում ուսանողների թիվը ֆակուլտետում 164 էր, ապա 2017-2018 ուստարում 141 է: Այսինքն՝ նկատվում է նվազման միտում /-23/:

Տնտեսագիտական ֆակուլտետ ընդունված ուսանողների թիվը

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ			
Տարիներ	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Տնտեսագիտություն
2016-2017	4	3	1
2017-2018	4	3	3
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ			
Տարիներ	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի /	Տնտեսագիտություն
2016-2017	15	6	2
2017-2018	13	3	8

2017-2018 ուստարում նախատեսել ենք այցելություններ դպրոցներ, հանդիպումներ աշակերտների հետ: Կկիրառվեն հանդիպումների նոր ձևաչափեր, կներկայացվի կոնկրետ մասնագիտության կարևորությունը գովազդի միջոցով, կընդգրկվեն աշխատաշուկայի պահանջները:

2017-2018 ուսումնական տարում ասպիրանտուրայի Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ընդունվել է 1 ասպիրանտ:

Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսագիտական ֆակուլտետում արձանագրվել է ուսանողների հետևյալ շարժը:

**Ուսանողների շարժը տնտեսագիտական ֆակուլտետում
2017-2018 ուսումնական տարում**

	բակալավրիատ	մագիստրատուրա	ընդամենը
Զորակոչվել է բանակ	3	-	3
Զորացրվել է բանակից	3	-	3
Վերականգնել է ուսանողական իրավունքները	3	1	4
Տրամադրվել է տարկետում	-	-	-
Սովորում է արտերկրում	4	1	5
Հեռացվել է ԳՊՀ-ից	5	6	11
Ազատվել է ԳՊՀ-ից	2	1	3
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ այլ ֆակուլտետներից	7	-	7
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից այլ ֆակուլտետ	-	-	-
Տեղափոխվել է ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետից հեռակա ուսուցման ֆակուլտետ	2	-	2
Տեղափոխվել է այլ բուհից/քոլեջից/ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ	1	-	1
Ներֆակուլտետային տեղափոխություններ	1	-	1

- Քոլեջներից և այլ բուհերից տնտեսագիտական ֆակուլտետ է տեղափոխվել այս տարի 1 ուսանող, իսկ նախորդ ուսումնական տարում 16-ը:
- Բանակից վերադարձել է 3 ուսանող, զորակոչվել է բանակ 3 ուսանող:
- Համալսարանից հեռացվել են 11 ուսանող, որոնցից 6-ը մագիստրատուրայից, 5-ը բակալավրիատից, իսկ նախորդ տարի 8 ուսանող:
- Այս տարի ուսանողական իրավունքները վերականգնել են 4 ուսանող, որոնցից 1-ը մագիստրատուրայում, 3-ը բակալավրիատում, իսկ նախորդ տարի 1 ուսանող:
- Այլ ֆակուլտետներից տնտեսագիտական ֆակուլտետ են տեղափոխվել հաշվետու ժամանակաշրջանում 7 ուսանող, նախորդ տարի 3 ուսանող:

2. Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը և ուսումնական առաջադիմության արդյունքները

2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետի առաջադիմությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 8%-ով և կազմել 68%: Այն նվազել է նաև բակալավրիատում կազմելով 73,2%, իսկ մագիստրատուրայում աճել է 20%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-ներով)

	2016-2017 ուստարվա II կիսամյակ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2016-2017 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2017-2018 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Տնտեսագիտական ֆակուլտետ	76	67.1	68.0	-8	+0.9
Բակալավրիատ	83.1	75	73.2	-9.9	-1.8
Մագիստրատուրա	33	44.7	53	+20	+8.3

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-ներով)

Ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնում

Կուրսը	2016-2017 ուստարվա II կիսամյակ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2016-2017 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2017-2018 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	75	100	0	+25
Երկրորդ	76.9	66.7	54.5	-22.4	-12.2
Երրորդ	89.7	72.7	70	-19.7	-12.7
Չորրորդ	-	86.2	-	-	-

Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսում ուսման առաջադիմությունը երկրորդ կիսամյակում, ինչպես նախորդ տարի նույն ժամանակահատվածում կազմել է 100%:

Երկրորդ կուրսում առաջադիմությունը նվազել է համապատասխանաբար 22.4% և 12.2 %-ով:

Երրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 19.7%-ով, իսկ առաջին կիսամյակի համեմատությամբ 12.7%-ով:

Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-ներով)

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ բաժնում

Կուրսը	2016-2017 ուստարվա II կիսամյակ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2016-2017 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2017-2018 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	66.7	100	0	+33.3
Երկրորդ	77.8	83.3	66.7	-11.1	-16.6
Երրորդ	100	58.3	81.8	-18.2	+23.5
Չորրորդ	-	87.5	-	-	-

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտության առաջին կուրսում առաջադիմությունը հաշվետու տարվա երկրորդ կիսամյակում և նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 100%:

Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ մասնագիտության երկրորդ կուրսի առաջադիմությունը 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 11.1%-ով, իսկ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ նվազել է 16.6%-ով:

Երրորդ կուրսի առաջադիմությունը նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 18.2%-ով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 23.5%-ով:

**Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-ներով)
Տնտեսագիտություն բաժնում**

Կուրսը	2016-2017 ուստարվա II կիսամյակ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2016-2017 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2017-2018 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Առաջին	100	33.3	100	0	+66.7
Երկրորդ	90	-	-	-	-
Երրորդ	50	100	62.5	+12.5	-37.5
Չորրորդ	-	50	-	-	-

Տնտեսագիտություն մասնագիտության առաջին կուրսում նախորդ և հաշվետու տարվա երկրորդ կիսամյակներում առաջադիմությունը չի փոխվել՝ կազմելով 100%, իսկ հաշվետու ժամանակաշրջանի առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է 66.7%-ով:

Երրորդ կուրսում նախորդ տարվա համեմատությամբ առաջադիմությունը աճել է 12.5%-ով, իսկ առաջին կիսամյակի նկատմամբ աճել է 37.5 %-ով և կազմել 62.5%:

**Ուսման առաջադիմության համեմատական ցուցանիշները (%-ներով)
Մագիստրատուրայում**

Բաժինը, կուրսը	2016-2017 ուստարվա II կիսամյակ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ	Շեղումը 2016-2017 ուստարվա II կիսամյակի համեմատությամբ	Շեղումը 2017-2018 ուստարվա I կիսամյակի համեմատությամբ
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ I կուրս	27	50	63	+36	+13
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /ՄՖԴ/ II կուրս	-	40	-	-	-
Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ I կուրս	33	66.7	100	+67	+33.3
Հաշվապահական հաշվառում /ըստ	-	33.3	-	-	-

ճյուղերի/ /ՄՀՀ/II կուրս					
Տնտեսագիտություն I կուրս	100	25	25	-75	0
Տնտեսագիտություն II կուրս /ՄՏ/	-	100	-	-	-

Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը ինչպես նախորդ տարվա երկրորդ կիսամյակի, այնպես էլ հաշվետու տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ աճել է համապատասխանաբար 36 և 13%-ով:

Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/ մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը նույնպես աճել է համապատասխանաբար 67 և 33.3%-ով և կազմել 100%:

Տնտեսագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում առաջադիմությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 75%-ով և կազմել 25%:

Տնտեսագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 100%:

Ֆակուլտետում ուշադրություն է դարձվում ուսանողների հաճախումներին: Ամենօրյա հաշվառման արդյունքում որոշ ուսանողներ ենթարկվել են վարչական պատասխանատվության (նկատողություն, խիստ նկատողություն, հեռացում): Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 27 ուսանողներ ստացել են նկատողություն և 9 ուսանող խիստ նկատողություն:

Վարչական տույժեր ստացած ուսանողների թիվը

Կրթական աստիճաններ	2017-2018 ուստարվա I կիսամյակ	2017-2018 ուստարվա II կիսամյակ
	Նկատողություն	
Բակալավրիատ	9	5
Մագիստրատուրա	8	5
Ընդամենը	17	10
Խիստ նկատողություն		
Բակալավրիատ	7	-
Մագիստրատուրա	-	2
Ընդամենը	7	2

Անվճար տեղերում սովորող ուսանողները դրսևորում են բարձր առաջադիմություն՝ ձգտելով պահպանել իրենց կարգավիճակը: Ֆակուլտետի 32 ուսանող բակալավրատից և 14 ուսանող մագիստրատուրայից սովորում են պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

**Տնտեսագիտական ֆակուլտետում անվճար սովորողների թիվն՝ ըստ մասնագիտությունների
Բակալավրիատ**

Կուրսը	Ֆինանսներ				Հաշվապահական հաշվառում				Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում			Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	1-ին կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	
Ուսանողների թիվը	3	3	3	3	3	3	3	3	2	3	3	32

Մագիստրատուրա

Կուրսը	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ		Հաշվապահական հաշվառում / ըստ ճյուղերի/		Տնտեսագիտություն		Ընդամենը
	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	1-ին կուրս	2-րդ կուրս	
Ուսանողների թիվը	4	3	2	1	2	2	14

Անվճար տեղերի առկայությունը բակալավրիատում և մագիստրատուրայում ուսանողների ակտիվության և ուսման որակի բարձրացման գրավական է, իսկ մրցակցությունը ուսանողներին մղում է առաջընթացի:

Համալսարանի ռեկտորատը, դեկանատը մշտապես մտահոգվում են ուսանողների սոցիալական խնդիրներով և միջոցներ են ձեռնարկում նրանց նյութապես աջակցելու համար: Տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողները օգտվում են ներքոհիշյալ հովանավոր կազմակերպությունների կրթաթոշակներից.

Տնտեսագիտական ֆակուլտետի կրթաթոշակառու ուսանողների թիվը

Հովանավոր կազմակերպությունը	Ուսանողների թիվը
Հայ օգնության ֆոնդի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	24
«Հրայր և Աննա Հովնանյան» բարեգործական հիմնադրամ	14
«Վիվասել- ՄՏՍ կրթական ֆոնդ»	9
Ընտանիքի անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված	8
«Ամբոր Հայաստան» բարեգործական հիմնադրամ	3
Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	2
Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցներ	2
ԳՊՀ կողմից կատարված ուսման վարձի գեղչեր	10
Ընդամենը	72

3. Վիճակագրական տվյալներ ծրագրի ավարտից հետո շրջանավարտների գրադավածության վերաբերյալ

2016թ. ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներից աշխատում են 56 %-ը, 25 աշխատողներից 18-ը կամ 72%-ը

աշխատում են իրենց մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ 17 շրջանավարտներից 5-ը աշխատում են, որոնցից 5-ն էլ աշխատում են իրենց մասնագիտությամբ: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ 11 շրջանավարտներից 5-ը աշխատում են, որոնք բոլորն էլ աշխատում են իրենց մասնագիտությամբ:

2017թ. ֆինանսներ մասնագիտության գծով բակալավրիատի և մագիստրատուրայի 30 շրջանավարտներից աշխատում են 14-ը, որոնցից 12-ը իրենց մասնագիտությամբ: Հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ 2017թ. շրջանավարտներ չեն եղել, սակայն մագիստրատուրա այլ բուհերից ընդունված 3 ուսանողներից 2-ը կատարում են մասնագիտական աշխատանք: Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ 16 շրջանավարտներից 4-ը աշխատում են, որոնցից 3-ը՝ տնտեսագետի մասնագիտությամբ:

Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Շրջանավարտ ըստ մասնագիտությունների	Ֆինանսներ		Հաշվապահական հաշվառում		Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում	
	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.	2016թ.	2017թ.
Բակալավրիատի շրջանավարտ	34	24	10	-	7	13
Ընդունվել են մագիստրատուրա	15	13	6	3	2	8
Մագիստրատուրայի շրջանավարտ	10	6	7	-	4	3
Նրանցից աշխատում են /մասնագիտությամբ/	25/18/	14/12/	5/5/	2/2/	5/5/	4/3/

Տարվա ընթացքում իրականացվում են շրջանավարտների գիտելիքներից և կարողություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, որոնց արդյունքները քննարկվում են ֆակուլտետի խորհրդում, իսկ ապագա անելիքները ձևակերպվում են գործողությունների ծրագրում:

4. Կրթական ծրագրի զարգացումն ու փոփոխությունները

Կապված հասարակական կյանքում և աշխատաշուկայում տեղի ունեցող անընդհատ փոփոխությունների հետ՝ մշտապես վերանայվում և թարմացվում են ուսալանները, առարկայական ծրագրերը: Փոփոխություններ են կրել կրթական ծրագրերի մասնագրերը:

Մասնագիտական կրթական ծրագրերի և տեղեկագրքերի հիման վրա բոլոր մասնագիտությունների գծով բակալավրիատում և մագիստրատուրայում ձևավորվել են կրթական ծրագրերի մասնագրեր: Թարմացվել և լրամշակվել են ծրագրերի կրթական վերջնարդյունքներն՝ ըստ գիտելիքի /իմացություն/, ընդհանրական կարողությունների և գործնական մասնագիտական կարողությունների: Մշակվել են գնահատման չափանիշները

և ներկայացվել են ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդներն՝ ըստ կրթական վերջնարդյունքների:

Նորացվել և թարմացվել են ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը: Հաշվապահական հաշվառում մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսում «Հարկային վարչարարություն» առարկայի փոխարինել է «Բիզնեսի իրավական կարգավորման խնդիրները» առարկայով՝ հաշվի առնելով ձեռնարկատիրության վարչական իրավական հիմքերի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Մագիստրատուրայի երկրորդ կուրսերում «Էլեկտրոնային բիզնես» առարկայի փոխարինվել է «Բանկային տեղեկատվական համակարգեր և էլեկտրոնային բանկային գործառույթներ /բանքինգ/» առարկայով:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պլանից հանվել է «Էլեկտրոնային կոմերցիա» առարկան, որի փոխարեն ներառվել է «Էլեկտրոնային բիզնես» առարկան:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պլանից հանվել է «Բիզնեսի վիճակագրություն» առարկան, որը կուսումնասիրվի «Բիզնեսի կազմակերպում» առարկայի շրջանակներում:

Ֆինանսներ 2-րդ կուրսում ավելացել է «Գործարարության հոգեբանություն»

դասընթացը:

«Բիզնեսի վերակազմակերպում» առարկան փոխարինվել է «Ներդրումային նախագծերի գնահատում» առարկայով՝ մագիստրատուրայի երկրորդ կուրսում:

«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» և «Տնտեսագիտություն» մասնագիտության մագիստրատուրայի երկրորդ կուրսերում ներդրվել է «Կորպորատիվ տեղեկատվական համակարգեր» դասընթացը:

Կատարվել են նաև դասընթացների անվանափոխություններ:

Փոփոխություններ են կատարվել նաև առարկայական ծրագրերում: Օրինակ հաշվի առնելով, որ 2018թ.-ից ուժի մեջ է մտել ՀՀ հարկային օրենսգիրքը դրա վերաբերյալ թեմաներ են ներառվել առարկայական պլաններում: Բակալավրիատում նախատեսվել է «Ծառայությունների ոլորտի կազմակերպություններում հաշվապահական հաշվառումը ՀՀ-ում» առարկան: Իսկ մագիստրատուրայում «Հաշվապահական հաշվառման արդի հիմնախնդիրները» առարկայում ներդրվել է էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի և հաշիվների դուրս գրվելու և ստանալու կարգը /դասախոս՝ Ս. Մարկոսյան/, այն կներառվի նաև հեռակա ուսուցման հաշվապահական հաշվառման բաժնում:

Ընթացք է տրվել նաև ուսանողների առաջարկությանը առանձին դասընթացները ուսումնական պլաններում ներառելու վերաբերյալ: Հեռակա ուսուցման ֆակուլտետի հաշվապահական հաշվառում բաժնի ուսանողներն առաջարկել էին ուսումնասիրել նաև «Հաշվապահական հաշվառումը համակարգիչների միջոցով» պրակտիկ դասընթաց, և առաջիկայում այն կներառվի ուսումնական պլանների մեջ:

Արտաքին փորձաքննության են ներկայացվել կրթական ծրագրերը, և կարծիքները հիմնականում դրական են:

Արտաքին փորձագետների կողմից կրթական ծրագրերի առումով նշվել են խնդիրներ, որոնք վերաբերվում են ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին,

դասավանդման մեթոդներին, կրեդիտների բաշխման հստակ քաղաքականությանը, կամընտրական դասընթացներին: Նշված հարցերը ներառել ենք ֆակուլտետի գործողությունների ծրագրում:

Կարևոր է նաև ուսանողների շրջանում հարցախոյզերի արդյունքների վերլուծությունը: 2016-2017 ուսումնական տարում իրականացված հարցման արդյունքներով տնտեսագիտական ֆակուլտետի պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում /ՊԻԳԲ/ շրջափուլն իրագործելու նպատակով՝ վերհանված խնդիրների բարելավման համար կազմվել են միջոցառումների ծրագիր և գործողությունների պլան:

5. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

Առարկայական ծրագրերում ներառված են դասավանդման նոր մեթոդներ՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները: Նոր մեթոդների կիրառմանը զուգահեռ դասախոսները դասավանդման գործընթացում աշխատում են նաև ուսանողների գիտելիքների գնահատման ձևերի կատարելագործման ուղղությամբ:

Ամբիոններում քննարկվել են դասավանդման մեթոդները, դրանց արդյունավետությունը և լավագույն մեթոդների վերաբերյալ կազմակերպվում են բաց դասեր:

Առարկայական ծրագրերը կազմելիս՝ նշվում են նպատակները և այն ելքային արդյունքները, որին պետք է հասնենք ծրագրի ավարտին: Որպեսզի պարզաբանենք թե ինչպես և ինչ չափով են իրագործվում նախատեսված ելքային վերջնարդյունքները և ձևակերպված նպատակները նախատեսում ենք մշակել չափանիշային հարցաշարեր, որոնց միջոցով ամբիոնները և դեկանատը կիրականացնեն ուսումնասիրություններ և կկատարեն վերլուծություններ:

6. Ուսումնագիտական ռեսուրսները և օժանդակ ծառայությունները

Արդի ժամանակաշրջանում հնարավոր չէ որոշակի գործողություն ծավալել առանց համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների:

Այս ուսումնական տարում ֆակուլտետի դասախոսները մասնակցել են բուհի ամենամյա 20-րդ գիտաժողովին՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր-ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 90-ամյակին և ներկայացրել 22 հոդված /նախորդ տարի ներկայացվել է 12 հոդված/:

Ֆակուլտետն ունի կայուն պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որն իրականացնում է որակյալ գիտամանկավարժական գործունեություն: Ֆակուլտետի ամբիոններում դասավանդում են 31 դասախոսներ, այդ թվում 2 դոկտոր և 15 թեկնածու:

ԳՊՀ-ն որպես կրթական ծառայություններ իրականացնող հաստատություն, կրթական ծրագրերն իրացնում է՝ ունենալով որոշակի նյութատեխնիկական բազա:

ԳՊՀ-ն ունի իր կայքէջը, համակարգչային լսարաններ, էլեկտրոնային գրադարան, գրադարան, էլեկտրոնային ուսուցման համակարգ, որոնք մատչելի են և նպաստում են արդյունավետ ուսումնառությանը:

7. Որակի ապահովման գործընթացը

Տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հայեցակարգը և դրանից բխող գործողություններն ուղղված են ուսումնառության իրական գործընթացի համապատասխանեցմանը ուսանողի հետ կնքած պայմանագրին:

Որակի ապահովման գործում կարևոր է կրթական վերջնարդյունքների հստակ ձևակերպումը, որպեսզի ուսանողը հասկանա, թե ինքն ինչ է սովորելու և ինչպես: Դասախոսները կրթական գործընթացը պետք է դարձնեն արդիական, այդ նպատակով զինվեն նոր մեթոդներով, տիրապետեն մասնագիտական նոր ձեռքբերումներին, կարևորեն տեսության և պրակտիկայի կապը, նպատակ դարձնեն ուսանողների գործնական գիտելիքների ձեռքբերումը:

Կրթության որակի վերաբերյալ խնդիրները ուսումնասիրում ենք ուսանողների և արտաքին փորձագետների կողմից բարձրացված խնդիրների համատեքստում: Նշենք, որ հաճախ ուսանողների կրթական կարիքները վերհանվում են ոչ համակարգված, մեխանիզմներն անկատար են:

Հստակեցման կարիք ունեն ակադեմիապես ցածր առաջադիմությամբ ուսանողների համար կիրառվող մոտեցումները, իրականացվող լրացուցիչ պարապմունքները:

Որակի ապահովման բաժնի կողմից հարցումների վերլուծության ներկայացումը և ֆակուլտետի կողմից միջոցառումների և գործողությունների ծրագրի կազմումը կնպաստեն այդ խնդիրների լուծմանը:

Նախատեսել են մինչև միջանկյալ քննությունները ակադեմիապես ցածր առաջադիմությամբ ուսանողների համար կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ:

Գործողությունների ծրագրում նախատեսված առաջարկություններն են.

- Կրթական գործընթացը դարձնել բազմաբովանդակ:
- Բարձրացնել ուսանողների պատասխանատվությունը, բացառել գնահատման չափանիշներից շեղումները:
- Դասավանդման գործընթացը դարձնել հետաքրքիր և բովանդակային, ուսանողի կողմից գիտելիքների ամբողջական ծավալի յուրացմանը, հետևել նրանց ինքնուրույն աշխատանքին:
- Հետևել օտար լեզուների ուսումնառության ընթացքին և աշխատանքներին, օտար լեզուներով մասնագիտական գրքերի ուսումնասիրությանը:
- Ակտիվացնել ուսանողների մասնակցությունը միջբուհական գիտաժողովներին:
- Հետևել ուսանողների բանավոր խոսքի զարգացմանը, շնորհանդես պատրաստելու հմտություններին և դրանց ներկայացմանը:

Արտաքին փորձագետների դիտողություններից է.

Կատարել ֆակուլտետի նպատակների իրականացման համար մարդկային, նյութական ռեսուրսների մասին խոր վերլուծություն:

Կարևոր է յուրաքանչյուր ուսանողի միջին որակական գնահատականը և ուսումնառության ընթացքում դրա շարժընթացը:

2017-2018 ուստարում ըստ մասնագիտությունների և կուրսերի ձևավորման ՄՈԳ-ը՝ համապատասխան սանդղակով 2016-2017 ուստարվա համեմատությամբ

Մասնագիտություններ, կուրսեր	ուսանողների թիվը	1,7-2,9		3,0-3,5		3,6-4,0	
		ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս	ուսանողների թիվը	տոկոս
\$ 1-ին	-/4	-/1	-/25	-/2	-/50	-/1	-/25
\$ 2-րդ	4/12	-/6	-/50	1/2	25/16.6	3/4	75/33.3
\$ 3-րդ	13/10	3/2	23/20	4/3	31/30	6/5	46/50
\$ 4-րդ	29/30	3/6	10/20	4/2	14/7	22/22	76/73

ՀՀ 1-ին	-/3	-/1	-/67	-	-	-/2	-/33
ՀՀ 2-րդ	3/6	-/1	-/16.6	2/2	66/33.3	1/3	34/50
ՀՀ 3-րդ	10/11	2/1	33/9	-/2	-/18	8/8	67/73
ՀՀ 4-րդ	8/8	-/-	-/-	2/2	25/25	6/6	75/75
Տ 1-ին	-/3	-/1	-/33.3	-/1	-/33.3	-/1	-/33.3
Տ 2-րդ	1/-	-	-	1/-	100/-	-	-
ՁՏԿ 3-րդ	12/10	0/2	0/20	5/3	42/27	7/8	58/80
ՁՏԿ 4-րդ	11/12	1/4	9/33	4/3	36/25	6/5	55/42

3,6-4,0 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվն աճել է 3-րդ կուրսերում: Այն նվազել է ֆինանսներ /ըստ ոլորտի/ 2-րդ, ֆինանսներ 4-րդ և ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտության 4-րդ կուրսում, իսկ հաշվապահական հաշվառում 4-րդ կուրսում այն մնացել է նույնը՝ 75 տոկոս: Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում մասնագիտությունների 3-րդ կուրսերում 1,7-2,9 ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը նվազել է, որը համարվում է որակական առաջընթաց, իսկ մնացած կուրսերում այն ավելացել է:

Համալսարանում որակի ապահովման գործընթացին ուսանողների ներգրավումը կատարվում է որոշակի կանոնակարգային հիմքով: Իրականացվում են առցանց, անանուն հարցումներ՝ վերհանելով ուսանողների կրթական կարիքները: Ուսանողների կրթական կարիքների բարելավմանը նպաստում են նաև ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների արդյունքներով ֆակուլտետի վերաբերյալ բացահայտված խնդիրների ներկայացումը:

8. Համագործակցային կապերը և դրանց կառավարումը

Տնտեսագիտական ֆակուլտետը համագործակցային կապեր ունի հայաստանյան բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, մարզպետարանի, համայնքապետարանների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, առանձին ձեռնարկությունների հետ, որոնք՝ որպես գործատու կազմակերպություններ, մասնակցում են ԳՊՀ կրթական ծրագրերի բարելավմանը: Ուսանողներն իրենց պրակտիկան անցկացնում են նշված կազմակերպություններում, որոնց կողմից արված գրավոր դիտողությունները և առաջարկությունները նպաստում են ծրագրերի բարելավմանը:

Ֆակուլտետը համագործակցում է համալսարանի մյուս ֆակուլտետների և ստորաբաժանումների հետ: Այդ համագործակցության ակտիվացումը և օպերատիվ կապի ամրապնդումը կնպաստի ֆակուլտետի հայեցակարգային խնդիրների լուծմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրենց ակտիվ գործունեությունն են իրականացրել տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը, «Տնտեսագետների ակումբը»: Ամբիոնների խորհրդատուների և ուսանողների կողմից կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

9. Ֆակուլտետի գործունեության «SWOT» վերլուծություն՝ ըստ որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների

Ուժեղ կողմեր	Հնարավորություններ
<ul style="list-style-type: none"> • Պրոֆեսիոնալ և փորձառու դասախոսներ, որոնց շարքում կան նաև պրակտիկ աշխատողներ: • Դասախոսներ, ովքեր համատեղում են դասախոսությունները գործնական աշխատանքների հետ՝ շուկայի հետազոտություն, ռազմավարական պլանի պատրաստում, բիզնես պլանի մշակում/: • Կրթությունը կարևորող ուսանողների մոտիվացիա: • Սերտ համագործակցություն գործատուների միության, հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, հասարակական և մասնագիտական կազմակերպությունների հետ: • Ուսանողների մասնակցություն եվրոպական շարժունության ծրագրերին: • Հետևողական աշխատանք որակյալ առարկայական մասնագիտական ծրագրերի մշակման և պահանջվող ստանդարտներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ: • Ֆակուլտետն ավարտած ուսանողների՝ աշխատաշուկայում ներգրավվածության բարձր ցուցանիշ 	<ul style="list-style-type: none"> • Կրթական չափորոշիչների համապատասխանեցում մարզի զարգացման առանձնահատկություններին: • Աշխատաշուկայի վերլուծություն, ուսանող-գործատու կապի ուժեղացում: • Հանրապետությունում գործող ձեռնարկությունների հետ նոր պայմանագրերի կնքում, ուսանողների պրակտիկայի հնարավորությունների ընդլայնում: • Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում՝ աշխատաշուկայի պահանջներից բխող՝ բանկային, հաշվապահական, բիզնեսի և այլ ոլորտներին վերաբերող: • Փորձի փոխանակման հնարավորությունների օգտագործում: • Գործատուների հետ հետադարձ կապի ամրապնդում: • Հյուր-խոսնակների ներգրավում: • Դպրոց-ամբիոններ կապի ամրապնդում, մասնագիտության ընտրության կողմնորոշման նոր մեթոդների մշակում և կիրառում: • Անվճար կրթություն ստանալու հնարավորություններ՝ պետությունից, անհատ ներդրողներից և հիմնադրամներից տրամադրվող: • ԳՊՀ-ն պարբերաբար նոր համագործակցային պայմանագրեր է ստորագրում հայաստանյան և միջազգային հաստատությունների հետ: • ԳՊՀ-ն ակտիվորեն մասնակցում է միջազգային կրթական ծրագրերի, որը ֆակուլտետը օգտագործում է ի շահ իրեն: • Միջազգային շուկայում ակտիվորեն ներդրվում են կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ և մոդելներ կրթության որակը բարձրացնելու համար: • ԵՄ «Erasmus+» և այլ միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերը ստեղծում են հնարավորություններ արտերկրում դասախոսների վերապատրաստման համար:

Թույլ կողմեր	Վտանգներ
<ul style="list-style-type: none"> • Նոր կրթական ծրագրերի մեխանիկական ընդունում՝ առանց լրացուցիչ խորը ուսումնասիրությունների և տեղայնացման: • Հետազոտական հնարավորությունների պակաս: • Հրապարակված հոդվածների և գիտաժողովներին մասնակցության ցածր ցուցանիշ: • Որոշ դասախոսների կողմից տեսական գիտելիքների հաղորդում: • Դասախոսների վերապատրաստման հնարավորությունների պակաս: • Լսարանային կահավորանքի, տեխնիկական հնարավորությունների և մասնագիտական գրականության պակաս: • Նոր կրթական տեխնոլոգիաները և մեթոդները կիրառող դասախոսների տեսակարար կշիռը դեռևս ցածր է: • Կամընտրական դասընթացների ընտրության առումով մասնագիտական կողմնորոշման թերի իրականացումը: 	<ul style="list-style-type: none"> • Բնակչության թվաքանակի անկում: • Ուսանողների թվաքանակի նվազումը: • Մագիստրոսական կրթություն ստանալու մոտիվացիայի նվազում: • Աշխատատեղերի ոչ դինամիկ ավելացում, ձեռնարկությունների լճացում: • Գործատուների մոտ համագործակցությունը կրթական հաստատությունների հետ մշակված ձևաչափեր դեռևս չկան: • Ուսանողները և դիմորդները մասնագիտությունը ընտրում են ոչ իրենց կարողությունների և աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա:

10. Ֆակուլտետի շրջանավարտները.

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 48 և մագիստրատուրայի 14 ուսանողներ:

Ամփոփիչ ատեստավորմանը բակալավրիատի ֆինանսներ մասնագիտությամբ մասնակցել է 29 ուսանող, հաշվապահական հաշվառում մասնագիտությամբ՝ 9 ուսանող, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ՝ 10 ուսանող: Հաշվետու տարում բակալավրիատի ֆինանսներ բաժինն ավարտել է 29 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 15 ուսանող:

Հաշվապահական հաշվառում բաժինն ավարտել է 9 ուսանող, այդ թվում՝ գերազանցության դիպլոմով՝ 6 ուսանող:

Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժինն ավարտել է 10 ուսանող, 4-ը՝ գերազանցության դիպլոմով:

Մագիստրատուրան ավարտել են 14 մագիստրոսներ, այդ թվում՝ ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ մասնագիտությամբ՝ 8 ուսանող, որոնցից 4-ը՝ գերազանցության դիպլոմով, հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտի/ մասնագիտությամբ՝ 3 ուսանող, որոնցից 2-ը՝ գերազանցության դիպլոմով, տնտեսագիտություն մասնագիտությամբ՝ 3 ուսանող, որոնցից 2-ը՝ գերազանցության դիպլոմով:

Ստորև ներկայացվում են ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

**2017-2018 ուսումնական տարվա
ամփոփիչ ատեստավորման արդյունքները**

Բաժինը		Ուսանողների թիվը	A+	A	A-	B+	B	B-	C+	C	C-	F
Ֆինանսներ /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	29	3	6	6	2	7	2		2	1	
	Ամփոփիչ քննություն II	4									4	
	Ավարտական աշխատանք	25	4	8	5	4	3			1		
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ /մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	8	3	1			1	1	1	1		
Հաշվապահական հաշվառում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	9	3	2	2	1				1		
	Ամփոփիչ քննություն II	1								1		
	Ավարտական աշխատանք	8		6		2						
Հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտի//մագիստրատուրա/	Մագիստրոսական թեզ	3	1	1			1					
Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /բակալավր/	Ամփոփիչ քննություն I	10	2	2			4	1	1			
	Ամփոփիչ քննություն II	3					2		1			
	Ավարտական աշխատանք	7	4			3						
Տնտեսագիտություն /մագիստրատուրա /	Մագիստրոսական թեզ	3	2					1				

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները ներկայացրին կրթության որակը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ, որոնց իրականացման վերաբերյալ կազմվել է գործողությունների պլան և ֆակուլտետի ամբիոնները ձեռնամուխ են եղել դրանց իրականացմանը:

**Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի
2018-2019 ուսումնական տարվա զարգացման
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

Հայեցակարգը մշակվել է ԳՊՀ 5-ամյա ռազմավարական ծրագրի, տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման 5-ամյա հայեցակարգի դրույթներին համապատասխան, Գեղարքունիքի մարզի աշխատաշուկայի պահանջների և զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ:

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- 1.1. ԳՊՀ դիմորդների ներգրավում, աշակերտներին տնտեսագիտական մասնագիտությունների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում, նպաստում մասնագիտական կողմնորոշմանը:
- 1.2. Կրթության որակի բարձրացում, արդյունավետ ուսուցման ապահովում:
- 1.3. Մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագրերի՝ արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցում:

- 1.4. Առարկայական ծրագրերի, մասնագիտական կրթական ծրագրերի ելքային արդյունքների՝ գործատուների պահանջներին համապատասխան արդիականացում: Վերջնարդյունքների՝ «գիտելիք-կարողություն-հմտություն», հստակեցում:
- 1.5. Ուսուցման բովանդակության ու գործնական գիտելիքների համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին, մասնավորապես Գեղարքունիքի մարզի զարգացման առանձնահատկություններին: Աշխատաշուկայի պահանջների, գործատուների ակնկալիքների ուսումնասիրություն:
- 1.6. Ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում, դրանց արդյունավետության բարձրացում, ուսանողներին համակարգի վերաբերյալ իրազեկում, գնահատման գործոնների հստակեցում:
- 1.7. Դասավանդման արդիական և ավանդական մեթոդների արդյունավետ համադրման ապահովում, համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ) և այլ նորարարական կրթական տեխնոլոգիաների, եվրոպական կրթական մեթոդների ուսումնասիրում և կիրառում:
- 1.8. Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման գործընթացի բարելավում, մագիստրոսների հետազոտական հմտությունների զարգացում:
- 1.9. Միջազգային շարժունության ծրագրերին ուսանողների և դասախոսների ակտիվ մասնակցության ապահովում:
- 1.10. Ուսումնական և արտադրական պրակտիկաների արդյունավետության բարձրացում՝ ուսանողների գործնական կարողությունների և հմտությունների զարգացման, կոնկրետ մասնագիտական աշխատանքի նախապատրաստելու նպատակով:
- 1.11. Ամփոփիչ (ավարտական) ատեստավորման գործընթացի բարելավում, սովորողների կողմից ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքների և մասնագիտական կարողությունների օբյեկտիվ գնահատում:
- 1.12. Ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության բարձրացում, ուսանողների կրթական կարիքների բացահայտում և խորհրդատվությունների իրականացում:
- 1.13. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի կիրառման արդյունավետության բարձրացում:
- 1.14. Տնտեսագիտական ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և արտաքին միջավայրի պահանջների Գեղարքունիքի տնտեսական զարգացման առանձնակատկությունների հաշվառմամբ:
- 1.15. Դրամաշնորհային ծրագրերին հայտ ներկայացնելու և ծրագրեր իրականացնելու ուղղությամբ Ֆակուլտետի ռեսուրսների կենտրոնացում:
- 1.16. Ասպիրանտական որակյալ կրթության ապահովում:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- 2.1. Ուսանողի կողմից ընտրած մասնագիտության կարևորության գիտակցում և անձնական պատասխանատվության աճ:

2.2. Ուսանողների սոցիալական կարիքների բացահայտում, թղթային և էլեկտրոնային անձնական գործերի կազմում, սոցիալական օժանդակության հասցեագրված ծրագրերի իրականացում:

2.3. Ուսանողների կրթադաստիարակչական, հոգևոր-մշակութային, բարոյաէթիկական և այլ բնույթի միջոցառումների, ինտելեկտուալ մրցույթների, գիտելիքի արժևորմանը միտված ծրագրերի իրականացում:

2.4. Սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության ապահովում:

2.5. Ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների դաստիարակում, նրանց բարոյականային հատկանիշների զարգացում, ուսանողների շրջանում պատշաճ իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորում:

2.6. Ֆակուլտետի ուսանողական ինքնակառավարման մարմինների՝ ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի հետ տարվող աշխատանքների շարունակական բարելավում և արդյունավետության բարձրացում:

3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

3.1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական որակների շարունակական բարելավում:

3.2. Գիտական աստիճան չունեցող երիտասարդ դասախոսների մասնագիտական աճի խրախուսում, նրանց ներառում գիտահետազոտական աշխատանքներում:

3.3. Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում նոր ու երիտասարդ պրակտիկ կադրերով, փորձառու և սկսնակ դասախոսների համագործակցության ապահովում:

3.4. Գիտաժողովներին պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության, գիտահետազոտական աշխատանքների կատարման ակտիվացում:

3.5. Վարչական անձնակազմի կազմակերպական կարողությունների զարգացում, աշխատանքի արդյունավետության բարձրացում:

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

4.1. Հետադարձ կապի պահպանում համալսարանի շրջանավարտների հետ, շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի շարունակական համալրում, անմիջական և էլեկտրոնային հաղորդակցության ապահովում:

4.2. Հանրապետության տնտեսագիտական հաստատությունների և ընկերությունների հետ փոխըմբռնման հուշագրերի կնքում, ակտիվ համագործակցության և փորձի փոխանակման ապահովում:

4.3. Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ կապի շարունակական բարելավում, համատեղ ծրագրերի իրականացում:

4.4. Համալսարան-դպրոց կապի ապահովում և ընդլայնում: Աշակերտների շրջանում ֆակուլտետի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնող

փոխադարձ հանդիպումների և մասնագիտական կողմնորոշմանը միտված տարաբնույթ միջոցառումների կազմակերպում:

5. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

5.1. Կրթական ծրագրերի մշակման, փորձաքննության իրականացման, ամփոփիչ ատեստավորման գործընթացներում գործատուների ներգրավում:

5.2. Գործատուների կարիքների բացահայտում, հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն:

5.3. Տնտեսվարող սուբյեկտների հետ գործընկերային հարաբերությունների հաստատում, խորհրդակցությունների, քննարկումների, «կլոր սեղանների» անցկացում:

6. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

6.1. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացում, կոռուպցիայի ցանկացած դրսևորման բացառում:

6.2. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթների պահպանում և իրագործում:

6.3. ԳՊՀ էթիկայի կանոնների, բարեվարքության նորմերի պահպանում:

**Ս. Գ. Ամիրխանյան՝
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 1-ին	4	1	-	75.0
2-րդ	9	-	5	66.7
3-րդ	11	-	4	72.2
4-րդ	29	-	13	86.2
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 1-ին	3	-	-	66.7
2-րդ	6	-	1	83.3
3-րդ	12	-	5	58.3
4-րդ	8	-	6	87.5
Տնտեսագիտություն 1-ին	3	1	1	33.3
2-րդ	-	-	-	-
3-րդ	11	-	6	100
4-րդ	12	-	4	50.0
Ընդամենը	108	2	45	75.0
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ 1-ին				
2-րդ	12	1	3	50.0
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/ 1-ին	10	-	4	40.0
2-րդ	3	-	-	66.7
3-րդ	3	-	1	33.3
Տնտեսագիտություն 1-ին	8	-	2	25.0
2-րդ	2	-	2	100
Ընդամենը	38	1	12	47.7

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Ֆինանսներ /ըստ ոլորտի/ 1-ին	4	-	1	100
2-րդ	11	2	-	54.5
3-րդ	10	3	4	70.0
Հաշվ. հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 1-ին	3	-	2	100
2-րդ	6	-	1	66.7
3-րդ	11	-	6	81.8
Տնտեսագիտություն 1-ին	3	-	-	100
2-րդ	-	-	-	-
3-րդ	8	-	3	62.5
Ընդամենը	56	5	17	73.2
Մագիստրատուրա				
Ֆինանսներ, դրամաշրջ. և վարկ 1-ին	8	-	3	63.0
Հաշվ. հաշվառում /ըստ ճյուղերի/ 1-ին	3	-	1	100
Տնտեսագիտություն 1-ին	8	-	2	25
Ընդամենը	19	-	6	53

2017/2018 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	5	2	27	-

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Զաքոյան Հրայրա Սամվելի,*
 Կրթության գործառնության թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հերգնյան Մարիամ Նորիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
2. **Խաչատրյան Հակոբ Հայկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Խաչատրյան Գայանե Արտիկի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Հարությունյան Հարություն Սարգսի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
5. **Մուրադյան Գուրգեն Գևորգի** - ասիստենտ
6. **Բագոյան Սոնա Սահակի** - ասիստենտ
7. **Մարտիրոսյան Ռշտուն Հովակիմի** - դասախոս
8. **Հովեյան Աստղիկ Գագիկի** - դասախոս
9. **Քալոյան Մանվել Խաչիկի** - դասախոս
10. **Բաղինյան Արա Պավելի** - դասախոս
11. **Ավետիսյան Աստղիկ Սիմոնի** - դասախոս
12. **Թադևոսյան Նարինե Հակոբի** - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Սահակյան Արմեն Կոլյայի** - տնտեսագիտության թեկնածու, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
2. **Մարդոյան Աշոտ Վարդանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. **Նալչաջյան Վահրամ Թորգոմի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
4. **Դավթյան Գագիկ Հայկարամի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Բաղդասարյան Արեգ Մերուժանի** - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
6. **Ղազարյան Արմեն Յուրիկի** - տնտեսագիտության թեկնածու
7. **Թորոսյան Դավիթ Լևոնի** - դասախոս

**ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- ա) Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունները ՀՀ-ում:
բ) Տեղական և տարածքային տնտեսական զարգացման հիմնախնդիրներ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	2	19	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Բագոյան Ս. Ս.**, Աութսորսինգի առավելություններն ու թերությունները լոգիստիկայում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 346-353:
- Բաղդասարյան Ա. Մ.**, Problems of the Capital Market Development in Eastern Europe // Bulletin of National Agrarian University of Armenia (Materials of International Scientific Conference), #3(63), Yerevan, 2018, p. 61-66 :
- Բաղինյան Ա. Պ.**, Գույքի ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 326-333:
- Թորոսյան Դ. Լ.**, Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների նշանակությունը ՀՀ զբոսաշրջության զարգացման գործում Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի օրինակով // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 334-345:
- Խաչատրյան Գ. Ա.**, Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների առանձնահատկությունները և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 319-325 :
- Арутюнян А. С., Восканян А.Е., Казарян Э. С.**, Модель формирования ценностной цепи заготовки зерна в Республике Армения // Экономико-правовые аспекты реализации стратегии модернизации России: Поиск модели эффективного социохозяйственного развития. Сборник статей международной научно-практической конференции, Москва, 2017, стр. 91-96:
- Арутюнян А. С., Кочарян Т.Л., Мнацаканян К.П.**, Проблемы реализации сельскохозяйственной продукции и пути их преодоления // Экономико-правовые аспекты реализации стратегии модернизации России: Поиск модели эффективного социохозяйственного развития. Сборник статей международной научно-практической конференции, Москва, 2017, стр. 72-76:
- Հարությունյան Հ. Ս., Քոչարյան Տ.Լ., Խաչատրյան Հ. Հ.**, ՀՀ ագրարային ոլորտում արտադրանքի իրացման գործընթացի վերլուծությունը // «Известия», Международный научный журнал, Ереван, 2018, տպագրությունն ընթացքի մեջ է:

9. **Հարությունյան Հ. Ս., Ոսկանյան Ա.Ե., Մնացականյան Կ.Պ.,** Հայաստանի Հանրապետության անասնաբուժական մթերքների իրացման գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները // «Известия», Международный научный журнал, Ереван, 2018, տպագրությունն ընթացքի մեջ է:
10. **Հարությունյան Հ. Ս., Մնացականյան Կ.Պ., Քարտաշյան Ա.Ռ.,** Գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրները ՀՀ ագրարային ոլորտում // «Известия», Международный научный журнал, Ереван, 2018, տպագրությունն ընթացքի մեջ է:
11. **Հերզնյան Մ. Ն., Խաչիկյան Ս. Ռ.,** Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 308-318:
12. **Ղազարյան Ա. Յու., Ղուկասյան Գ. Մ.,** Երկրների քլաստերացումն ըստ էլեկտրոնային կառավարման մակարդակի արհեստական նեյրոնային ցանցի միջոցով // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 354-365:
13. **Ղազարյան Ա. Յու., Ղուկասյան Գ. Մ.,** ՀՀ բանկերի կլաստերացումը և դասակարգումը կոհոնենի նեյրոնային ցանցի միջոցով // ՀՊՏՀ «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» - 27-րդ գիտաժողովի նյութեր, 2018թ., էջ 409-416 :
14. **Ղազարյան Ա. Յու., Աբանյան Ա.Ա., Սարգսյան Վ.Ա., Արշակյան Մ.Ա., Բաղայան Կ.Ղ., Արտաշյան Ա.Հ., Տերտերյան Գ.Բ.,** Համակարգչային առաջադրանքներ և խնդիրներ «Ինֆորմատիկայի հիմունքներ» (ըստ կիրառման ոլորտների) առարկայից, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2018թ., 262 էջ:
15. **Ղազարյան Ա. Յու.,** Համակարգչային գրաֆիկա, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, ՀՊՏՀ, 2018թ., 160 էջ:
16. **Саакян А.К., Быстрянец С.Б.,** Социология, Учебное пособие для вузов, Изд-во «Юрайт», 2018г, 380 стр. :
17. **Саакян А.К., Петросян А. С.,** «Утечка мозгов» как угроза национальной безопасности Республики Армения // Журнал Социология и права, Изд-во СПб, Санкт-Петербург, 2018, стр. 6-16:
18. **Саакян А.К., Родионов О.В.,** Динамика знаний, квалификации и компетенций в структуре человеческого капитала (часть первая) // Журнал «Научная мысль», Череповец, 2018, стр. 98-107:
19. **Саакян А.К., Родионов О.В.,** Динамика знаний, квалификации и компетенций в структуре человеческого капитала (окончание) // Журнал «Научная мысль», Череповец, 2018, стр. 125-130:
20. **Саакян А. К., Мкоян Г.С.,** Социокультурные ценности по научным теориям П.Сорокина и Д. Анахта // Сборник научных статей МГУ, Москва, 2018, стр. 78-86:
21. **Саакян А. К.,** Тенденции развития практической социологии и психологии // Материалы армяно-русской международной научной конференции. – СПб: Изд-во «СПБУТУиЭ», Санкт-Петербург, 2018, стр. 64-70:
22. **Саакян А. К.,** Ценностные ориентации армянской студенческой молодёжи. Социологический анализ // Журнал «Вестник БПА», Санкт-Петербург, 2018, стр. 16-21:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուկոյան Հակոբ Մելսիկի
 Կոնսուլտացիոն ծախսերի թեկնածու,
 դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Հակոբյան Արմեն Աշոտի - տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
3. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
4. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
5. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
6. Ղազոյան Կարինե Համլետի - դասախոս
7. Բաղդասարյան Անի Սամվելի - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդաբանության և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	4	-	8	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ամիրխանյան Ս. Գ., Թովմասյան Մ. Մ.**, Մարդկային կապիտալի զարգացումը որպես ՀՀ տնտեսության զարգացման գրավական // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 301-307:
2. **Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ.**, Սահմանափակ հեռանկարում առավելագույն շահույթի ստացման ռազմավարության մշակումը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 374-377:
3. **Առաքելյան Վ. Հ., Մելքոնյան Ա. Լ.**, Որակի կառավարման արդյունավետության վրա ազդող գործոնները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 366-373:
4. **Առաքելյան Վ. Հ.**, Ապրանքախմբի շուկա առաջխաղացման արդյունավետության գնահատման ցուցանիշները // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 378-385:
5. **Առաքելյան Վ. Հ.**, Финансовый учет, Учебное пособие, Ереван, «ЭДИТ ПРИНТ», 2017 дек., 429 էջ:
6. **Առաքելյան Վ. Հ.**, Հաշվապահական հաշվառման կազմակերպումը փոքր բիզնեսում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2018, 163 էջ:
7. **Առաքելյան Վ. Հ., Ֆիդանյան Ա.**, Առևտրային բանկերի կողմից իրականացվող ներդրումային քաղաքականությունը արդի պայմաններում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2018, 98 էջ:
8. **Առաքելյան Վ. Հ., Մարկոսյան Ս.**, Տնտեսվարող սուբյեկտների գործունեության արդյունավետության գնահատումը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Զանգակ հրատարակչություն, 2018, 112 էջ:
9. **Հակոբյան Ա. Ա., Խաչատրյան Մ. Վ.**, Преимущества единого налогового пространства ЕАЭС // Перспективные исследования и разработки. Новый взгляд: сборник научных трудов. Выпуск 2/ Под общ. ред. С.С.Чернова– Новосибирск: Издательство ЦРНС, 2018.– 160с. с. 101-114:
10. **Հակոբյան Ա. Ա.**, Տրանսֆերային գնագոյացման կարգավորման և վերահսկողության ծագման ու զարգացման պատմական ընթացքը // Պատմություն և քաղաքագիտություն, Գիտական հանդես, Երևան, 2018-1, էջ 111-126:
11. **Հակոբյան Ա. Ա.**, Տրանսֆերային գնագոյացման կարգավորման հիմնախնդիրները // Հյուսիսսփայլ, Երևան, ՏԱՐԵԳԻՐՔ 2018, էջ 95-99:
12. **Մելքոնյան Ա. Լ.**, Արտադրանքի որակի կառավարման արդյունավետության բարձրացման մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), 2018թ., էջ 386-393:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ *Կուրուզյան Նելլի Ալբերգի,*
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	Մանկավարժության բակալավր
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն 041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում	Մանկավարժության բակալավր
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 042101.00.6 Իրավագիտություն	Տնտեսագիտության բակալավր
042101.01.6	Իրավագիտություն 052201.00.6 Քննապահականություն և բնօգտագործում	Իրավագիտության բակալավր
052201.01.6	Քննապահականություն և բնօգտագործում 053101.00.6 Քիմիա	Շրջակա միջավայրի բակալավր
053101.02.6	Դեղագործական քիմիա 054201.00.6 Աշխարհագրություն	Քիմիայի բակալավր
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ 061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն	Աշխարհագրության բակալավր
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն 101801.00.6 Սերվիս	Ինֆորմատիկայի բակալավր
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 697

Շրջանավարտների թիվը՝ 133

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2018թ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2019թ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2018 թվականի ուսումնական տարում կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 11 մասնագիտությունների գծով: Սահմանված կարգով կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքներով համալսարան ընդունվեցին 149 դիմորդ հանրապետության տարբեր մարզերից, Երևան քաղաքից: Երկրորդ բարձրագույն, ինչպես նաև շարունակական կրթություն ստացողների ընդունելությունը կազմակերպվեց սահմանված ժամկետներում, այդ նպատակով ձևավորված հանձնաժողովի կայացրած որոշումների համաձայն: Դիմորդների համար տարբեր ձևաչափերով կազմակերպվեցին ուսանողների՝ համալսարանում ակադեմիական ինտեգրման բազմազան միջոցառումներ՝ խորհրդատվությունների, ժողովների, ուսուցողական սեմինարների միջոցով, որոնց ընթացքում պարզաբանվեցին համալսարանի կրթական գործընթացների կանոնակարգային փաստաթղթերը, ուսուցման համակարգերը, գնահատման համակարգը, համալսարանում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի, ենթակառուցվածքների գործունեությունը, ինչպես նաև նրանց տրամադրվեց ուսուցման համակարգերի, էլեկտրոնային գրադարանի մուտքի թույլտվություններ՝ համապատասխան ձևով, պարզաբանվեցին դրանցից օգտվելու տեխնիկական պահանջները:

Տարեսկզբին հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմում էր 697 (Նախորդ ուստարվա նույն ժամանակահատվածում՝ 629): Նրանց համար ապահովված են եղել համալսարանի բոլոր ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորությունները, և կրթական ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ իրականացված անանուն հարցումների արդյունքները դրական միտում են արձանագրել:

Հաշվետու ուստարում ակադեմիական աճ է արձանագրվել նաև շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացում: 2018թ. բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 133 շրջանավարտ: Նախորդ տարիներին բուհը չավարտած 10 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը, նրանցից դրական գնահատական ստացան 10-ը (ընդհանուր թվով՝ 133 շրջանավարտ), այսինքն բուհն ավարտեց ուսանողների թվի 100%-ը (2017թ. ուստարում՝ 94.9%-ը):

Գերազանցության դիպլոմ շնորհվեց հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն, դեղագործական քիմիա, քարտեզագրություն և կադաստրային գործ, հաշվապահական հաշվառում բաժինների 6 ուսանողի: Դեղագործական քիմիա, ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժինների շրջանավարտների համար առաջին անգամ ամփոփիչ ատեստավորման պահանջներում ներառվեց ավարտական աշխատանքների ներկայացումը: Շրջանավարտները ցուցաբերեցին հետազոտական աշխատանք կատարելու լավ և բավարար ունակություններ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում արձանագրվեցին դրական կարծիքներ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի շրջանավարտներին ամփոփիչ ատեստավորման արդյունքում տրամադրվեց համաեվրոպական նմուշի դիպլոմի երկլեզու հավելվածներ: Շարունակաբար մշակվել են ուսանողների ակադեմիական տեղեկագրերը՝ ըստ կիսամյակների, ուստարիների նրանց ունեցած ակադեմիական առաջընթացի:

Հաշվետու ուսումնական տարում բարձր առաջադիմություն ունեցող թվով 5 շրջանավարտներ ընդունվեցին ԳՊՀ մագիստրատուրայի համապատասխան բաժիններ, նրանց թույլատրվեց ազատ մուտքի իրավունքով մասնակցելու առկա ուսուցման բակալավրիատի՝ իրենց ընտրած դասընթացներին:

2018թ. ուսումնական տարում դեղագործական քիմիա բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիա Իգորի Աբրահամյանը ԵՄ «ERASMUS+» շարժունության ծրագրի շրջանակում սովորեց արտերկրում՝ Իտալիայի Հանրապետության Սալեռնոյի համալսարանում /6 ամիս/:

Բուհում ընդունված ներքին կարգապահական կանոնների պահպանումը շարունակել է մնալ ֆակուլտետի կարևոր գործառույթներից, անհարգելի բացակայելու համար 387 ուսանող ստացել է նկատողություն, խիստ նկատողություն՝ 147 ուսանող: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է 50, ժամանակավոր կցագրումից՝ 2 ուսանող, բուհից ազատվել 6 ուսանող, իսկ համապատասխան հիմքով տրամադրված տարկետման ժամկետը լրանալու պատճառով 4 ուսանող:

Ֆակուլտետի կրթական գործընթացի արդյունավետության ցուցանիշ է համարվում այն հանգամանքը, որ հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ՀՀ բարձրագույն ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 19 ուսանող, իսկ ԳՊՀ-ից այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել:

Երկրորդ մասնագիտություն ստանալու համար հեռակա ուսուցման ֆակուլտետ դիմել և սահմանված կարգով ընդունվել է 6 ուսանող, քոլեջն ավարտելուց հետո շարունակական կրթության սկզբունքով՝ 15 ուսանող, ԳՊՀ առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 8 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 72 ուսանող, հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 11 ուսանող, ֆակուլտետի տարբեր բաժիններ՝ 3 ուսանող, տարկետում տրամադրվել է 22 ուսանողի:

Շարունակվել են աշխատանքները կրթական ծրագրերի բովանդակության արդիականացման, ուսումնական պլանների բեռնաթափման, ուսումնական պլաններում նախատեսված բոլոր դասընթացների առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացման, կրթական ելքային արդյունքների վերանայման, ակնկալվող արդի մասնագիտական իրազեկությունների սահմանման, աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ՝ համադրելով համալսարանի առկա ուսուցման կրթական ծրագրերի հետ:

Մշտադիտարկվել են ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի «E-learning.GSU» առարկայական տիրույթներում տեղակայված ուսումնական նյութերի առկայությունն ու բովանդակությունը, լրամշակվել են դասընթացների կրթական վերջնարդյունքները՝ յուրաքանչյուր թեմայի համար սահմանելով և առարկայական ծրագրերում ամրագրելով համապատասխան վերջնարդյունքներ:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի օբյեկտիվության ու թափանցիկության ապահովման նպատակով յուրաքանչյուր դասընթացում սահմանվել են գնահատման նկարագրիչներ հեռակա ուսուցմամբ ուսանողի կրթական ձեռքբերումների գնահատման համար, ֆակուլտետում հաճախակի անցկացվում են հանձնաժողովային ստուգումներ, ինչպես նաև կիրառվում է փոխգործընկերային գնահատումներ, որոնք օգնում են բացահայտելու գնահատման համակարգում տեղ գտած բացթողումները:

Հաշվետու ժամանակահատվածում հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողները ցուցաբերել են նաև հասարակական ակտիվություն՝ տարբեր ոլորտներում գրանցելով ձեռքբերումներ, մասնավորապես, իրավագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանող Սերյոժա Սիմոնյանը ՀՀ Գեղարքունիքի մարզի Վոլեյբոլի 2018 թվականի մարզային առաջնությունում գրավել է առաջին տեղ, «Մարտական սամբո» սպորտաձևում ՀՀ առաջնությունում երրորդ, իսկ նույն սպորտաձևում Վրաստանում կազմակերպված միջազգային առաջնության ժամանակ նա գրավեց պատվավոր առաջին հորիզոնականը:

Հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողների ջանքերով ստեղծված «Վերնատուն» ակումբի շրջանակներում շարունակվել են անցկացվել միջոցառումներ: Հաշվետու ուստարում «Վերնատուն» ակումբի շրջանակներում անցկացվեց «Մա՛րդ եղեք, մարդ» միջոցառումը:

«Սարդարապատից Արցախ» խորագրի շրջանակներում «Վերնատուն» ակումբը կազմակերպել էր նաև «Հաղթական ջահը՝ սերնդեսերունդ» խորագիրը կրող հուշ - ցերեկույթ՝ նվիրված Արցախյան ազատամարտին, որին ներկա էին Գավառի և Ճամբարակի տարածաշրջանների զինվորական կոմիսարներ, Երկրապահ կամավորական ջոկատի ներկայացուցիչներ, Արցախյան և Քառօրյա պատերազմի հերոսներ, զինվորներ:

Ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունենում նաև բուհում կազմակերպվող միջոցառումներին, «Սարդարապատից Արցախ» խորագիրը կրող էսսեների, չափածո և արձակ ստեղծագործությունների, ձեռարվեստի աշխատանքների և պաստառների մրցույթի արդյունքներում արձակ և չափածո ժանրերում ներկայացված աշխատանքների համար հաղթող ճանաչվեց հեռակա ուսուցման ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի գերազանցիկ շրջանավարտ Նելլի Բրագինյան, իսկ արձակի ժանրում հաղթեց նույն կուրսի շրջանավարտ Սիրուշ Սարգսյանը՝ «Հաղթական ջահը՝ սերնդեսերունդ» էսսեի համար: Սիրուշ Սարգսյանը և Հովհաննես Օհանյանը պարգևատրվեցին նաև Գավառի պետական համալսարանում «Վերնատուն» ակումբի հիմնադրման և գործունեության համար:

Ողջ ուսումնական տարվա ընթացքում աջակցություն է ցուցաբերվել ուսանողներին՝ ֆինանսական տարբեր ծրագրերում ընդգրկվելու համար, ինչի արդյունքում «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության միջոցներից օգտվում են 4 ուսանող, ԱՄՔՈՐ Հայաստան բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագրի» միջոցներից՝ 4 ուսանող, «Հրայր և Աննա Հովնանյաններ» բարեգործական հիմնադրամի միջոցներից՝ 8 ուսանող, ընտանիքների սոցիալական անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված 56 ուսանողների՝ ըստ անապահովության միավորների, սահմանված չափով պետական բյուջեից տրամադրվեց ֆինանսական աջակցություն, իսկ համալսարանի կողմից ուսման վարձերը զեղչվեցին 58 ուսանողի համար: 2018թ. ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված

արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 8 ուսանող:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2019թ. թվականի ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

ԳՊՀ Ռազմավարական ծրագրի նպատակներից ելնելով՝ 2019թ թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. Հեռակա ուսուցման համակարգում իրականացվող կրթական ծրագրերում ուսանողների հետազոտական աշխատանքների կարևորում, գործնական հմտությունների զարգացման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառում, անհատական, կուրսային, աշխատանքների կատարման կառուցակարգերի բարելավում, ամփոփիչ ատեստավորման պահանջներում ավարտական աշխատանքների կատարման աստիճանական ներառում:
2. Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների կրթական կարիքների հետևողական ուսումնասիրում, նոր լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում, դրանց վերաբերյալ ուսանողության շրջանում տեղեկատվության տարածում:
3. Ուսանողների հետադարձ կապի ուսումնասիրման գործում հեռակա ուսուցման համակարգում սովորողներին, հատկապես, գործատու հանդիսացող կամ մասնագիտական ոլորտում աշխատող ուսանողներին ակտիվորեն ներգրավում,;
4. Հեռակա ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայում, ուսումնական ծրագրերի բեռնաթափում, մասնագիտական կրթամասի դասընթացներին տրվող լսարանայի ժամաքանակի ավելացում:
5. Հեռակա ուսուցման համակարգում դասավանդող պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի ընտրության և մասնագիտական որակների գնահատման համակարգված, թափանցիկ գործընթացների իրականացում:
6. Հեռակա ուսուցման ուսանողական համակազմի և պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի տվյալների էլեկտրոնային բազայի կատարելագործում, դասախոսների և ուսանողների էլեկտրոնային հաղորդակցության ակտիվացում:
7. Ուսանողների լեզվական գրագիտության ապահովում, օտար լեզուներով հաղորդակցման, այլալեզու գիտական, տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հնարավորության ընձեռում:
8. Ուսանողների համակարգչային և ընդհանուր տեխնիկական գրագիտության ապահովում, «E.Learning.GSU.am» էլեկտրոնային ուսուցման համակարգից և «E.Library.GSU.am» էլեկտրոնային գրադարանից, հեռահար ուսուցման այլ ուսումնական, տեղեկատվական ռեսուրսներից արդյունավետ օգտվելու հմտությունների զարգացում:
9. Ակադեմիական շարժունության ծրագրերի, դրանց մասնակցության պայմանների ու պահանջների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում, ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցողների քանակի աճի ապահովում:

10. Իրականացվող կրթական ծրագրերի էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշտադիտարկում և համալրում, քննական առարկաների թեստերի բանկի ավելացում, թեստային համակարգով քննությունների անցկացման հնարավորությունների ընդլայնում:

**Ն. Ա. Կուրուզյան՝
ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր**

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԱՔՎ) աշխատանքները 2017-2018 ուսումնական տարում կազմակերպվել են՝ ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերում, ինչպես նաև ԳՊՀ 2017-2018թթ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանում նշված առաջնահերթություններն ու նպատակները հաշվի առնելով:

Հաշվետու տարում վերանայվել և լրամշակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում ներառված դասընթացների ուսումնական պլանները, կրթական վերջնարդյունքները: Իրականացվել է մշտադիտարկում՝ ստուգելու կրթական վերջնարդյունքների ձևակերպումները, դրանց հասանելիությունը, ինչպես նաև գնահատման չափանիշների հստակությունը: Այս առումով, կարծում ենք, մասնագիտական կրթական ծրագրերի և առարկայական պլանների մշտադիտարկումն անընդհատ գործընթաց է, որը կշարունակվի նաև 2018-2019 ուսումնական տարում:

Ուսումնական գործընթացի պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման աշխատանքների համատեքստում՝ ԱՔՎ-ում վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում իրականացվող բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլաններից ածանցված աշխատանքային պլանները, անհրաժեշտ ուշադրություն է դարձվել ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունների, դասատախտակների կազմմանը և ուսումնական գործընթացի՝ լսարանային ֆոնդով ապահովվածությանը: Կատարվել է դասապրոցեսի, միջանկյալ, ընթացիկ և ամփոփիչ քննությունների անցկացման վերահսկում, աշխատանքներ են կատարվել լուծարային շրջանը, փոխատեղման գործընթացը հստակ կազմակերպելու ուղղությամբ կատարվել է ուսումնական գործընթացի փաստաթղթային ապահովում և վերահսկում:

Ամբիոնների հետ կազմակերպվել են դասալսումներ և քննարկումներ, հնչած կարծիքներն ու առաջարկները վերլուծվել են և հաշվի առնվել ՄԿԾ-ների բարելավման նպատակով:

Բուհի տարբեր ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներգրավումով կազմակերպվել են գիտամշակութային ու կրթադաստիարակչական մի շարք միջոցառումներ:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի հետ կազմակերպել է «Թումանյանը մարդ-բանաստեղծ» միջոցառումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմամշակութային արժեքները հանրությանը ներկայացնելու նպատակով Գավառի երկրագիտական թանգարանի հետ համատեղ ԱՔՎ-ի կողմից կազմակերպվել է բաց դասախոսությունների շարք՝ «Պահպանենք ազգային արժեքները» թեմայի շրջանակներում:

Իրականացվել է և այժմ էլ ընթացքի մեջ է ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների և որակավորման բարձրացման ծրագիրը:

ԱԲՎ-ն մասնակցել է «Etag.emis» ծրագրի առցանց լրացման աշխատանքներին, աշխատակիցները մասնակցել են Եվրոպական միության «LEAGUE» ծրագրի, «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարելավրթության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի աշխատաժողովներին:

Կատարվել է ԱԲՎ աշխատակիցների գործառույթների նկարագրություն:

Շարունակական կրթության պահանջներից ելնելով՝ 2017-2018 ուսումնական տարում ԱԲՎ-ի կողմից կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու, երկրորդ մասնագիտություն ստացողների ընդունելություն, ինչպես նաև միջբուհական և ներբուհական տեղափոխությունների կազմակերպման և վերահսկման գործընթացները:

ԱԲՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ տարկետման, վերականգման, հեռացման, ազատման, տեղափոխությունների փաստաթղթային հիմքերը:

2017-2018 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը՝ 2016-2017 ուսումնական տարվա հետ համեմատությամբ.

		2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի
1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	15	21
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	0	0
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	16	6
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել/ուսուցիչներ	27/2	15
5	Ներբուհական տեղափոխություններ	59	29
	➤ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	15	8
	➤ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	30	11
	➤ Ներֆակուլտետային տեղափոխություններ	14	10
6	Տարկետում են ստացել	32	34
	➤ առողջական վիճակի պատճառով	3	2
	➤ գինձառայության մեկնելու հիմքով	29	32
7	ԳՊՀ-ից հեռացվել են	152	146
8	ԳՊՀ-ից ազատվել են	16	14
9	Վերականգնվել են ԳՊՀ	127	99
	➤ զորացրումից հետո	59	39
	➤ հեռացումից հետո	39	42
	➤ տարկետումից հետո	2	2
	➤ ազատումից հետո	-	1
	➤ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	27	15
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՃ		446	364

Նախորդ՝ 2016-2017 ուսումնական տարվա ընդհանուր շարժի 446-ի դիմաց հաշվետու տարում արձանագրվել է 364-ը:

Շարժի առումով պետք է հիշատակել նաև այն ուսանողներին, որոնք փոխանակման ծրագրերի շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում շարունակել են իրենց ուսումնառությունը: Հաշվետու ուսումնական տարում արտերկրյա տարբեր բուհերում իրենց ուսումնառությունն են շարունակել ԳՊՀ 10 ուսանողներ:

Վարչությունը իր գործառույթների շրջանակներում ապահովել է ուսումնական գործընթացին առնչվող փաստաթղթային փաթեթների կազմման, զեկուցագրերի, հաշվետվությունների, առաջարկությունների ներկայացման գործընթացները:

Այս համատեքստում՝ կատարվել են ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստման և հաշվառման աշխատանքներ. ստուգվել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների բոլոր գնահատականները, ապահովվել է դիպլոմների ստացման, բաշխման գործընթացների անսխալ իրականացումը, ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել դիպլոմների ստացման և բաշխման հաշվետվությունն ու շրջանավարտների ցուցակները՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Նաև ամփոփվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ու ավարտական քննությունների արդյունքները՝ համաձայն սահմանված կարգի:

2017-2018 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 342 դիպլոմ:

2017-2018 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը.

Ֆակուլտետ		ոչ գերազանցության	գերազանցության	ընդամենը
Բանասիրական	Բակալավր	11	11	22
	մագիստրոս	3	21	24
Բնագիտական	Բակալավր	13	12	25
	մագիստրոս	3	3	6
	դիպլ. մասն.	1	-	1
Հումանիտար մասնագիտությունների	Բակալավր	33	13	46
	մագիստրոս	16	7	23
Տնտեսագիտական	Բակալավր	23	25	48
	մագիստրոս	6	8	14
ԸՆԴԱՄԵՆԸ	Բակալավր	<i>80</i>	<i>61</i>	<i>141</i>
	մագիստրոս	<i>28</i>	<i>39</i>	<i>67</i>
	դիպլ. մասն.	<i>1</i>	<i>-</i>	<i>1</i>
Հեռակա	Բակալավր	127	6	133
ԸՆԴԱՄԵՆԸ		236	106	342

Պատրաստվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել նաև ներքուհական և միջբուհական տեղափոխությունների, երկրորդ մասնագիտություն ստացողների, քոլեջներից բարձր առաջադիմությամբ ԳՊՀ ընդունված ուսանողների վերաբերյալ հաշվետվությունները, կիսամյակային քննաշրջանների առաջադիմության արդյունքները՝ սահմանված ձևաչափերով: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «1-ԳՄ» և «3-ԳՄ» ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները: Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են ուսանողների տվյալների բազաների լրացման աշխատանքները, որոնց հիման վրա յուրաքանչյուր եռամսյակը մեկ ներկայացվել են համապատասխան հաշվետվություններ, նաև սահմանված կարգով կազմակերպվել է ուսումնական գործընթացի արդյունքում կուտակված փաստաթղթերի արխիվացումը:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել են ուսանողների պրակտիկաների անցկացման գործընթացները:

2017-2018 ուսումնական տարում պրակտիկաներին մասնակցած ուսանողների տվյալները.

Առկա բակալավրիատ	Ուսումնական	51
	Մանկավարժական	44
	Արտադրական	69
	Նախաավարտական	52
	Ուսումնամանկավարժական	13
Մագիստրատուրա	Գիտամանկավարժական	67
	Գիտահետազոտական	67
Հեռակա բակալավրիատ	Ուսումնական	26
	Արտադրական	21
	Նախաավարտական	57
	Ուսումնամանկավարժական	68
Ընդամենը		535

Շարունակելով նախորդ տարիների որդեգրած սոցիալական հասցեագրված քաղաքականությունը՝ բուհը կատարել է ուսման վարձավճարների զեղչեր սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող, ինչպես նաև մարտական հերթապահություն իրականացրած և Արցախում ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած և բանակից զորացրված ուսանողների համար:

2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ-ում կապարված ուսման վարձավճարների զեղչերի ընդհանուր չափը հետևյալն է.

Ուսուցման ձևը	Ուսանողների թիվը	Չեղչված գումարի չափը
Բակալավրիատ /առկա/	35	5.548.500
Մագիստրատուրա /առկա/	18	2.117.750
Հեռակա	58	5.333.500
ԸՆԴԱՄԵՆԸ	111	12.999.750

Նախորդ՝ 2016-2017 ուսումնական տարում համալսարանի կողմից զեղչված գումարի չափը կազմել է 10.403.500՝ 88 ուսանողի համար, հաշվետու տարում այդ գումարը կազմել է 12.999.750՝ 111 ուսանողի համար:

ԳՊՀ-ում ուսանողները նյութական աջակցություն են ստանում ոչ միայն բուհի միջոցների հաշվին, այլ նաև Գավառի պետական համալսարանի բարերարների, տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների շնորհիվ: Հաշվետու ուսումնական տարում մասնակի կամ լրիվ փոխհատուցվել են ԳՊՀ 177 ուսանողի ուսման վարձավճարները:

2017-2018 ուսումնական տարում անվանական կրթաթոշակներ ստացած ուսանողների թիվը հետևյալն է.

Հ/Հ	Հովանավոր կազմակերպություն	Ուսանողների թիվը
1.	«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ» կրթավճար ծրագիր	73
2.	«Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամ	62
3.	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	6+1
4.	«Ամբրո Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն	10
5.	«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն	20
6.	Հայ կրթական հիմնարկություն	5
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		177

Բուհ-դպրոց փոխադարձ կապերի ամրապնդման նպատակով համալսարանում 8 առարկաների (Հայոց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու, Մաթեմատիկա, Հայոց պատմություն, Աշխարհագրություն, Քիմիա, Կենսաբանություն, Ֆիզիկա) գծով 12-րդ դասարանցիների համար կազմակերպվեցին օլիմպիադաներ, որոնց մասնակցեցին մարզի 11 դպրոցների 52 աշակերտներ: Տարբեր առարկաների գծով 17 աշակերտներ վաստակեցին 16-20 միավորներ, 9-ը՝ դրականի շեմը չհաղթահարեցին:

Կազմակերպվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի 18 դպրոցների աշակերտների և ուսուցիչների ճանաչողական այցեր՝ ծանոթանալու համալսարանի բնագիտական լաբորատորիային /20 այց/, համալսարանի ամբիոններին, մասնագիտություններին, թանգարանին /14 այց/:

2017-2018 ուսումնական տարում համալսարանը նոր պայմանագրեր է կնքել ՀՀ-ում գործող 4, ինչպես նաև համագործակցության նոր հուշագրեր՝ 7 կազմակերպությունների հետ.

Պայմանագրեր		
ՔԿԱԳ Գավառի տարածքային բաժին	07.09.2017	07.09.2023
Հայաստանի Գործատուների հանրապետական միություն	15.11.2017	15.11.2022
Գեղարքունիքի մարզի Սևանի Վ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց	14.02.2018	14.02.2023
ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց	14.02.2018	14.02.2023
Համագործակցության հուշագրեր		
ՀՀ Գեղարքունիքի մարզի Դոմաշեն գյուղի միջնակարգ դպրոց	20.10.2017	20.10.2022
ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբեր գյուղի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց	20.10.2017	20.10.2022
«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ	15.11.2017	30.09.2018
Գեղարքունիքի մարզի Ակունքի միջնակարգ դպրոց	30.03.2018	30.03.2023
Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր	30.03.2018	30.03.2023
Գեղարքունիքի մարզի Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	30.03.2018	30.03.2023
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	18.05.2018	18.05.2022

ԳՊՀ ուսանողների և դասախոսների համակազմը.

2017-2018 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներով Գավառի պետական համալսարանի առկա բակալավրիատի առաջին կուրսեր են ընդունվել 47 սովորող, հեռակա բակալավրիատ՝ 148 սովորող:

2017-2018 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի մագիստրատուրա է ընդունվել 84 ուսանող:

2017-2018 ուսումնական տարվա սկզբին ԳՊՀ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 1200, տարեվերջին՝ 1161 սովորող, որոնցից՝

առկա բակալավրիատում՝ 347 սովորող,

մագիստրատուրայում՝ 140 սովորող,

հեռակա ուսուցման համակարգում՝ 674 սովորող:

2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ-ում աշխատող դասախոսների ընդհանուր թիվը 132 է, որից 17 դոկտոր, 12 պրոֆեսոր, 51 գիտությունների թեկնածու, 37 դոցենտ, 22 ասիստենտ և 42 դասախոս:

**ԳՊՀ Ակադեմիական քաղաքականության վարչության 2018-2019
ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները.**

2018-2019 ուսումնական տարում ԱԲՎ-ն իր գործունեությունը շարունակելու է մի քանի հիմնական ուղղություններով:

1. Վերանայել և արդիականացնել մասնագիտական կրթական ծրագրերը, ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը՝ դրանցում ամրագրելով յուրաքանչյուր դասընթացի կրթական վերջնարդյունքները: Դրանց հասնելու համար կիրառել՝
 - ուսուցման, ուսումնառության և գնահատման փոխկապակցված մեթոդներ,
 - գնահատման մեթոդները առավելագույնս չափելի դարձնել և ուսանողներին իրազեկել գնահատման սկզբունքների և չափանիշների մասին,
 - դասընթացների կրթական վերջնարդյունքները համապատասխանեցնել մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին,
 - կազմակերպել ամբիոններում սեմինար-քննարկումներ, դասախոսների առաջավոր փորձի փոխանակում, ուսուցման և գնահատման արդի մեթոդների, գործիքների տարածում, դասալսումների արդյունքների քննարկում, եզրահանգումների կատարում, գործընթացի բարելավում
 - կազմակերպել դասախոսների վերապատրաստումներ ամբիոնների և ԱԲՎ-ի համագործակցությամբ:
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի կրթական ոլորտում համալսարանի կարևոր դերակատարությանը համապատասխան պետք է ակտիվացնել կապերը մարզի կրթական, սոցիալ-մշակութային կառույցների, տնտեսական կազմակերպությունների հետ, այդ նպատակով տարվող աշխատանքները պետք է ունենան հետևյալ բովանդակությունը.
 - ԳՊՀ դասախոսների և ուսանողների կողմից կատարվող գիտական-հետազոտական աշխատանքների քննարկումների կազմակերպում և հանրայնացում,
 - Մարզի տարբեր ոլորտներին առնչվող գիտական ուսումնասիրությունների իրականացում և դրանց արդյունքների վերաբերյալ կլոր սեղանների, քննարկումների, աշխատաժողովների կազմակերպում առանձին կազմակերպություններում, կառույցներում, դրանց վերաբերյալ հանրությանն իրազեկում՝ օգտագործելով հեռուստատեսության և համացանցի հնարավորությունները:
 - Կազմակերպել բաց դասախոսություններ, հատկապես մարզի հանրությանը հետաքրքրող և հուզող խնդիրների շուրջ, դրանք ներկայացնել ԳՊՀ կայքէջում:
 - ԳՊՀ-ն կարող է դառնալ ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդական բառ ու բանի, ստեղծագործ մտքի հավաքման, ուսումնասիրման, համակարգման կենտրոն, որով ոչ միայն ԳՊՀ-ն իր մեծ ավանդը կբերի հայ բանագիտական մտքի զարգացմանը, այլ նաև մեծապես կնպաստի բուհ-հանրություն կապերի ամրապնդմանը,

- Ինտելեկտուալ խաղերի, մրցույթների կազմակերպում, որում ներգրավված կլինեն ԳՊՀ դասախոսներ, ուսանողներ, գործատուներ, ուսուցիչներ, քոլեջների ուսանողներ և դասախոսներ:
3. ԳՊՀ գործունեության, միջազգային կապերի, հետազոտական աշխատանքների, բուհ-գործատու ուղղություններով իրականացված և այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության առավել համակարգված և նպատակաուղղված տարածման համար կազմակերպել հետևյալ միջոցառումները.
- պատրաստել տեսահոլովակներ ԳՊՀ գործունեության տարբեր ոլորտների մասին,
 - ավարտական և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ պատրաստել նյութեր և հեռարձակել հեռուստատեսությամբ՝ ուշադրություն դարձնելով մարզի խնդիրների ուսումնասիրությանը վերաբերող աշխատանքներին,
 - ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում ներառել այն գործատուներին, որոնց ղեկավարած հաստատություններում են կազմակերպվում ԳՊՀ ուսանողների պրակտիկաները և լսել նրանց կարծիքները,
 - կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն հետազոտական աշխատանքների նկատմամբ ուսանողության և հանրության շրջանում հետաքրքրության աճին, ինչը կարելի է ապահովել այդ աշխատանքների հանրայնացմանը նպաստող տարաբնույթ միջոցառումներ կազմակերպելով:
4. Բուհ-դպրոցներ, քոլեջներ կապերի ամրապնդման համար տարբեր ուղղություններով տարվող աշխատանքները պետք է ունենան համակարգված բնույթ, մասնավորապես.
- ա) Գեղարքունիքի մարզի ավագ դպրոցների հետ աշխատանքների ակտիվացում,
 - բ) ԳՊՀ-ում օլիմպիադաների շարունակաբար կազմակերպում,
 - գ) ԳՊՀ-ում «Բաց դռների օր» միջոցառման պարբերաբար կազմակերպում,
 - դ) դպրոցներում ԳՊՀ դասախոսների ուժերով խորհրդատվությունների, բաց դասախոսությունների կազմակերպում ուսուցիչների և աշակերտներ համար,
 - ե) աշխատանքներ տանել նախապատրաստական բաժինը համալրելու ուղղությամբ,
 - զ) ըստ ամբիոնների ուղղվածությունների՝ դպրոցականների շրջանում հայտարարել մրցույթ՝ իրենց բնակավայրերի պատմամշակութային հուշարձանների, աշխարհագրական գեղեցիկ տեղավայրերի, տվյալ բնակավայրին վերաբերող հետաքրքիր պատմությունների մասին նյութեր ներկայացնելով, որոնցից լավագույնները, խմբագրվելով, կտեղադրվեն համալսարանի այն կայքէջում, որտեղ ստեղծագործում են համալսարանի ուսանողները, և դրանով համացանցում կտարածվի ԳՊՀ էլեկտրոնային թերթը,
 - է) ռեկտորատին կից ունենալ «Շահակիցների խորհուրդ», որի կազմում կլինեն ԳՊՀ-ի հետ համագործակցող բոլոր հաստատությունների և կազմակերպությունների տնօրենները կամ ներկայացուցիչները: Նրանց հետ հանդիպումները պետք է լինեն պարբերական և հնարավորություն տան բացահայտելու համալսարանի արտաքին

շահառուների կրթական կարիքները, ինչը կարող է խթանել նաև Կարիերայի կենտրոնի աշխատանքներին:

ԳՊՀ ԱԲՎ-ի գործունեության հիմնական ուղղությունն է համալսարանի ակտիվ ներգրավման ապահովումը մարզային ծրագրերին և նախաձեռնություններին, հանրությանը մատուցվող ծառայությունների բազմազանացումը՝ օգտագործելով համալսարանի գիտական, ուսումնամեթոդական, տեխնիկական ռեսուրսները:

**Ա. Ա. Ղարիբյան՝
ԳՊՀ ակադեմիական քաղաքականության
վարչության պետ**

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ
2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017-2018 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում շարունակաբար իրականացվել են ԳՊՀ որակի ներքին ապահովման գործընթացներ դրանց և բարելավմանն ուղղված աշխատանքներ, որոնք բխեցվել են ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների ծրագրից, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրից:

Վերանշակվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մասնագրերը, առարկայական պլանները, պրակտիկաների ծրագրերը՝ կրեդիտների տրամադրման, ուսուցման և ուսումնառության, գնահատման կիրառվող մեթոդների փոխկապակցվածության համատեքստում: Դասընթացների ծրագրերում սահմանվել են նաև գնահատման նկարագրիչներ:

Կրթական վերջնարդյունքների սահմանման նպատակով քննարկումներ են իրականացվել ուսանողների, գործատուների, դասախոսների, շրջանավարտների շրջանում:

Շարունակաբար իրականացվել է ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացվող հարցման հարցաթերթիկների լրամշակում, վերանայվել է գնահատման մեթոդաբանությունը: Հաշվետու ուստարում իրականացվել են պլանավորված 9 հարցումներ: Հարցումներն անցկացվել են և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակներով: 1-ին կիսամյակում գործարկվել է երկու հարցաթերթիկ, 2-րդ կիսամյակում՝ յոթ: Հարցումներ են իրականացվել առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների, 1-ին կուրսեցիների, դասախոսների, գործատուների, աշակերտ-դիմորդների շրջանում:

Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվել են հետևյալ հարցումները՝

Ուսանողների և շրջանավարտների հարցումներ /2017-2018թթ./

Հ/հ	Հարցման տեսակները	Ուսուցման համակարգ	Հարցման մասնակիցների թիվ		Մասնակցության տոկոս	
			2016/2017	2017/2018	2016/2017	2017/2018
1	Դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման	առկա	269	278	57%	59%
		հեռակա	327	316	51%	53%
2	ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման	առկա	287	306	54%	63%
		հեռակա	386	338	51%	51%

3	ԳՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման	առկա	90	117	56%	56%
		հեռակա	108	84	51%	63%

Ուսանողների և շրջանավարտների կողմից բարձրացված խնդիրների, առաջարկությունների վերաբերյալ համալսարանի գիտական խորհրդում, ռեկտորատում և ֆակուլտետների խորհուրդներում անցկացվել են քննարկումներ, պարզաբանումներ: Արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և կրթական միջավայրի բարելավմանն ուղղված գործողությունների իրականացման համար: Դասընթացներում կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված գործնական պարապմունքների ժամաքանակի ավելացմամբ /«Հարկեր և հարկային քաղաքականություն» դասընթացի գործնականի ժամաքանակը 16-ից դարձել է 32, «Ծրագրավորում C#» դասընթացինը՝ 66-ից՝ 92/, որոշ դասընթացներ վերափոխվել են /«Անգլիական գրականություն» դասընթացը վերափոխվել է «Անգլիական և ամերիկյան գրականություն» դասընթացի, «SS տնտեսական ոլորտում» դասընթացը՝ «SS համակարգեր՝ ըստ ճյուղերի», «Ռեյլսիստեմ տվյալների բազաների հարցումների SQL լեզու» դասընթացը՝ «Տվյալների բազաների նախագծման տեխնոլոգիաներ»/, ներմուծվել են նորերը /«ՀՀ ընտրական իրավունք», «Ամալային տեխնոլոգիաներ», «Հավելանյութերը սննդի արտադրությունում», «Երկրաբուսաբանություն և բուսական ռեսուրսներ»/ և այլն: Վերանայվել են «E.Learning.GSU.am» ուսուցման համակարգի տեխնիկական հնարավորությունները: Ձեռք է բերվել նոր մասնագիտական գրականություն տարբեր մասնագիտությունների գծով, իրականացվել են աշխատանքներ լսարանների բարելավմանն ուղղությամբ և այլն:

Դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում իրականացված հարցումներն են՝

Դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում իրականացված հարցման վերաբերյալ տվյալներ /2017-2018թթ./

Հ/հ	Հարցման տեսակները	Հարցման մասնակիցների թիվ		Մասնակցության տոկոս	
		2016/2017	2017/2018	2016/2017	2017/2018
1	ԳՊՀ կրթական միջավայրից դասախոսների բավարարվածության գնահատման	96	72	87%	61%
2	Դասախոսը՝ կրթական ծրագրի ղեկավարի գնահատմամբ	101	79	92%	66%
3	Դասախոսը՝ դասախոսի գնահատմամբ	23	20	23%	17%

Դասախոսների և կրթական ծրագրերի ղեկավարների շրջանում անցկացված հարցումները միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության, կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը: Հաշվետու ուստարում առաջին անգամ դասախոսների շրջանում հարցումներն անցկացվել են առցանց եղանակով:

ԳՊՀ ֆակուլտետների հետ համատեղ իրականացվել են 45 գործատուների շրջանում շարունակական ուսումնասիրություններ՝ ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական որակների ուժեղ և թույլ կողմերի գնահատման, ԳՊՀ-ի հետ համագործակցության ուղղությունների հստակեցման վերաբերյալ: Ուսումնասիրություն է իրականացվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 52 աշակերտ-դիմորդների շրջանում: Նրանցից 18-ը դիմել է ԳՊՀ, սակայն 16-ն են ընդունվել և սովորում են ԳՊՀ-ում:

Հարցումներ են իրականացվել նաև ԳՊՀ ընդունված առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերով 1-ին կուրսի հիսուն ուսանողների շրջանում: Ուսումնասիրությունները միտված են բացահայտելու նրանց նախասիրությունները, կրթական կարիքներն ու ակնկալիքները, ընտանիքի դրության վերաբերյալ որոշ տվյալներ:

Մշակվել են իրականացված հարցումների տվյալները, և վերլուծվել են ստացված արդյունքները:

ՈԱԲ-ի կողմից իրականացվել են կառուցվածքային ստորաբաժանումների պլանավորված և փաստացի կատարած արդյունավետության ցուցանիշների մշտադիտարկման կառուցակարգ ներդնելու աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ մշտադիտարկումները.

1. ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի իրականացման 2016-2017 ուսումնական տարվա գործողությունների մշտադիտարկում. համաձայն ՌԾ նպատակների իրականացման գործողությունների և փաստացի արդյունավետության ցուցիչների՝ կատարված գործողությունները նշված ժամանակահատվածի համար կազմում են 71%:

2. ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի իրականացման 2017-2018 ուսումնական տարվա գործողությունների մշտադիտարկման արդյունքում նպատակների իրականացման գործողությունների և փաստացի արդյունավետության ցուցիչների կատարողականը կազմում է 83%:

3. ԳՊՀ առկա ուսուցման ֆակուլտետների ռազմավարական ծրագրի իրականացման 2017-2018 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկում: Համաձայն մշտադիտարկման արդյունքների՝ բանասիրական ֆակուլտետի կատարողական ցուցիչը գնահատվում է 75.8%, բնագիտական ֆակուլտետինը՝ 76.47%, տնտեսագիտական ֆակուլտետինը՝ 68.18%, հումանիտար մասնագիտություններինը՝ 85.19%, ՈԱԲ-ինը՝ 77%:

4. ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման «E.Learning.GSU.am» համակարգում իրականացվել է մշտադիտարկում. 1-ին կիսամյակում դիտարկվել է 406 առարկայական տիրույթ, 2-րդ կիսամյակում՝ 420: Դիտարկման արդյունքներով էլեկտրոնային ուսուցման «E.Learning.GSU.am» համակարգում 1-ին և 2-րդ կիսամյակներում դասախոսությունների համայրում կատարվել է համապատասխանաբար 58%-ով և 61%-ով, առարկայական /դասընթացների/ ծրագրերի՝ 32%-ով և 40%-ով:

5. Իրականացվել է անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի մշտադիտարկում, որի համար հիմք են ընդունվել դասախոսների մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական որակների վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները, ուսանողների և շրջանավարտների շրջանում ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքները, գործատուների կողմից մասնագիտական կարողությունների գնահատման արդյունքների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների և

վերապատրաստման գործընթացի գնահատման արդյունքների ուսումնասիրությունները, դասալսումների անցկացման արձանագրությունների վերլուծությունները:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են.

1. «ԳՊՀ որակի ապահովման քաղաքականություն»-ը, որում ամրագրված են որակի ապահովման նպատակն ու խնդիրները, սկզբունքները, ԳՊՀ որակի ապահովման ներբուհական համակարգի կառուցվածքը և սուբյեկտները:

2. «ԳՊՀ-ում հարցումների անցկացման կարգ»-ի նոր նախագիծը, որում սահմանվում է հարցումների անցկացման ընթացակարգը, հարցումների իրականացումը՝ որպես որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման կառուցակարգ /մեխանիզմ/:

3. «Վերապատրաստման դասընթացի արդյունավետության գնահատման» և «Սեմինարի արդյունավետության գնահատման» հարցաթերթիկները:

Ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով աշխատանքներ են իրականացվել ԳՊՀ բանասիրական և տնտեսագիտական ֆակուլտետների հետ համատեղ: Բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի հետ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ հետազոտական աշխատանքներ իրականացնելու հարցի քննարկման արդյունքում հաստատվել է «Ուսումնական գործընթացի հարցումների վերլուծության համակարգի մշակում» ավարտական աշխատանքի թեման, և իրականացվել է համապատասխան հետազոտությունը, որի արդյունքում մշակվել է տվյալների վերլուծության մեթոդաբանություն և համակարգի նախատիպ:

Արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ համատեղ ԳՊՀ որակի ապահովման բաժինը կազմակերպել է ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 12-րդ դասարանների աշակերտների շրջանում աշակերտական օլիմպիադա՝ «Հայոց լեզու և գրականություն», «Անզլերեն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաների գծով:

ՈԱԲ-ի աշխատակիցները մասնակցել են հանրապետության մասշտաբով մասնագիտական կրթության որակի ապահովման ուղղությամբ տեղի ունեցող համաժողովների, քննարկումների, աշխատաժողովների, ֆորումների.

1. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամի կողմից կազմակերպված «Կեղծարարությունը բարձրագույն կրթությունում» համաժողով /09.10.2017թ./: Նպատակն էր քննարկել կրթական համակարգերում առկա կեղծարարության դրսևորումները, զարգացնել դրանց դեմ պայքարելու համար անհրաժեշտ կարողություններ:

2. ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ. ՎԵՐԻՏԱՍ-Զայցբուրգի սկզբունքների հիման վրա բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում» ծրագրի ամփոփիչ համաժողով /12.10.2017թ./: համաժողովն ամփոփում էր ծրագրի քառամյա գործունեությունը, նպատակն էր ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավումը՝ այն համադրելով որակավորումների եվրոպական շրջանակի և Զայցբուրգյան սկզբունքների հետ, այդպիսով կամուրջ ստեղծելով դեպի եվրոպական գիտահետազոտական տարածք: Ծրագրի իրականացման ընթացքում ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում ներդրվել է ասպիրանտական ծրագիր:

3. ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ. GOVERN» ծրագրի ամփոփիչ համաժողով /13.10.2017թ./ «GOVERN» ծրագիրը մեկնարկել էր 2014 թվականից՝ նպատակ ունենալով նպաստել հայաստանյան բուհերում ժամանակակից կառավարման համակարգի ներդրմանը, արդյունավետ կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը՝ Բոլոնիայի հոչակագրի սկզբունքներին համահունչ, ինչպես նաև բարելավել ՀՀ բուհերի ինքնավարության և հաշվետվողականության կառուցակարգերը:

4. «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի /ՈԱԱԿ/ կողմից կազմակերպված «Ուսուցման ներքին ապահովման գործընթացները ՄՈՒՀ-երում» թեմայով գործընկերային հանդիպում /10.04.2018թ./ նպատակն էր վերհանել ՄՈՒՀ-երում իրականացվող ուսուցման որակի բարելավմանն ուղղված գործընթացները:

5. ՈԱԱԿ-ի և Հայ-Ռուսական համալսարանի հետ համատեղ կազմակերպված «Երիտասարդ դասախոսների, ուսանողների և կարիերայի կենտրոնների պատասխանատուների» աշխատաժողով /11.04.2018թ./ նպատակն էր ուսանողներին խրախուսել առավել հետևողական լինել իրենց խնդիրների ու կրթական կարիքների վերհանման, մասնագիտական կայացման գործընթացներում:

6. ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» շահակիցների 4-րդ ֆորում /2018թ. ապրիլի 16, 17/ Նպատակն էր քննարկման առարկա դարձնել ՄՈՒՀ-երի շնորհած որակավորումների ճանաչման խնդիրն աշխատաշուկայում, խթանել երկխոսություն ՄՈՒՀ-երի և գործատուների, ուսումնական հաստատությունների, ՄՈՒՀ-երի և պետական կառավարման մարմինների միջև:

ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2018-2019 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան՝ նախատեսվում են ՈԱԲ գործունեության հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Իրականացնել ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրի իրականացման 2017-2018 ուսումնական տարվա գործողությունների պլանների մշտադիտարկում համալսարանական և ֆակուլտետային մակարդակներով՝ ըստ պատասխանատուների, պլանավորված և կատարված արդյունավետության գնահատման ցուցիչների և դրանցից շեղումների ներկայացմամբ,

2. որակի ապահովման բոլոր ուղղություններով 2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ-ում հետևողականորեն կենսագործել պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը,

3. շարունակաբար ապահովել հարցումների անցկացումը ներքին և արտաքին շահառուների շրջանում, ուսումնասիրել կարիքները, իրականացնել վերլուծություններ,

4. համադրել ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները և կարծիքները, կատարել դրանց վերլուծություն, կազմել գործողությունների ծրագիր,

5. իրականացնել ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ՝ համալսարանական և ֆակուլտետային ինքնավերլուծության աշխատանքային խմբերի հետ համագործակցությամբ,

6. մշակել նոր գործիքակազմ՝ դասախոսի աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով,

7. հստակ սահմանել ՈԱԲ-ի մասնագետների, ֆակուլտետային պատասխանատուների պարտականություններն ու գործառույթները:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Կիրառել գործուն ընթացակարգ՝ գործարկելու հակագրագողության /անտիպլագիատ/ համակարգը՝ հետազոտական գործընթացներում ակադեմիական ազնվություն ապահովելու նպատակով,

2. մշակել կառուցակարգ՝ շահակիցների գիտական և հետազոտական գործընթացներից բավարարվածության գնահատման վերաբերյալ:

ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ակտիվացնել ուսանողների մասնակցությունը որակի ապահովման ներբուհական գործընթացներում,

2. մշակել ուսումնական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատման գործիքակազմ,

3. մշակել գործնական և տեսական դասընթացներից ուսանողների մնացորդային գիտելիքների մակարդակը ստուգելու կառուցակարգեր:

Ա. Տ. Մայիլյան՝
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչ

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ
ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանում 2017-2018 ուսումնական տարին մեկնարկեց «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսով, որին համապատասխան բուհի արտաքին կապերի և լրատվության բաժինը ձեռնամուխ եղավ իր գործառույթների իրականացմանը:

Բաժինը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է տարաբնույթ տեղեկատվական, ուսուցողական, ճանաչողական ծրագրեր ու միջոցառումներ, կատարել բուհի գիտահետազոտական, կրթական, ուսումնամեթոդական, դաստիարակչական գործունեության լրաբանում՝ ապահովելով սերտ համագործակցություն գործընկեր կազմակերպությունների, ներքին ու արտաքին շահակիցների հետ:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում Արտաքին կապերի և լրատվության բաժինն իր գործառույթների իրականացման ուղղությամբ կատարել է հետևյալ աշխատանքները.

միջոցներ են ձեռնարկվել ԳՊՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրների պատշաճ իրականացման ուղղությամբ,

✓ առանձնահատուկ ուշադրության են արժանացել Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված պաստառներին և ձեռարկված աշխատանքների, ինչպես նաև «Սարդարապատից Արցախ» խորագիրը կրող էսսեների, չափածո և արձակ ստեղծագործությունների մրցույթի կազմակերպման աշխատանքները,

✓ Դպրոց-բուհ համագործակցության ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, համատեղ միջոցառումներ: Բաժնի կողմից հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ, ուսումնամեթոդական նյութեր, գրքեր,

✓ ամենօրյա աշխատանքներ են իրականացվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանքների երեխա-ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են մի շարք կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում,

✓ Բաժինը շարունակել է համագործակցել ԳՊՀ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների հետ՝ («Ժիրայր Նիշանյան», «Հրայր և Աննա Հովնանյաններ», «Հայ կրթական հիմնարկություն», «Հայաստանի երիտասարդական», հիմնադրամներ, «ԱՄՔՈՐ Հայաստան» «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություններ, անհատ բարերարներ),

✓ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում բաժինը կազմակերպել է Գավառի պետական համալսարանի ուսանողների՝ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի մանկական ճամբարներում որպես ջոկատավարներ աշխատելու գործընթացը,

✓ Բաժինը կազմակերպել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, տարբեր հասարակական կազմակերպությունների, կրթական, մշակութային, երիտասարդական, մարզական և այլ կառույցների, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների հետ ԳՊՀ փոխհամագործակցությունը, ապահովել բազմաթիվ համատեղ ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացումը,

✓ համակարգվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար կազմակերպված առարկայական օլիմպիադաների կազմակերպչական աշխատանքները,

✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր», «Ի լրումն» հաղորդաշարերով ԳՊՀ-ին վերաբերող եթեր հեռարձակված բոլոր հայտարարությունների, տեսագրությունների տեղադրում ԳՊՀ համացանցային պաշտոնական տեսահարթակում,

✓ համալրվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» ալբոմ-ժողովածուն, որում ներառված են հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը,

✓ համալրվել է «Հանրային պատասխանատվություն» ալբոմ-ժողովածուն, որում ներառված են ԳՊՀ-ում կայացած հանրային բնույթ կրող միջոցառումների վերաբերյալ նյութեր,

✓ հաշվետու ժամանակահատվածում բուհի պաշտոնական կայքի նոր տարբերակում թարմացվել ու տեղադրվել են դասախոսների տվյալները, լրասանկարները, բազմաբնույթ տեղեկատվական նյութեր,

✓ իրականացվել է ԳՊՀ-ում կայացած միջոցառումների և բազմաբնույթ իրադարձությունների լուսաբանում, լրասանկարում /նկարված լրասանկարներն արխիվացվել են/,

✓ Բաժնի կողմից պատրաստվել են համագործակցության հուշագրեր, հարցաթերթիկներ, տեղեկատվական թերթիկներ և առաքվել դպրոցներ,

✓ համակարգված աշխատանքային գործունեություն է ծավալել ԳՊՀ ֆակուլտետների, ամբիոնների, Ակադեմիական քաղաքականության վարչության, Ուսանողական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության, Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, զբոսաշրջության կենտրոնի, բուհում գործող ակումբների և այլ ստորաբաժանումների հետ,

✓ իրականացրել է ԳՊՀ պաշտոնական կայքէջի ամենօրյա թարմացման աշխատանքներ,

✓ իրականացվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն,

✓ ԳՊՀ «Դիմագիրք» (Facebook) սոցիալական ցանցում իրականացրել է ադմինիստրատիվ աշխատանքներ, կատարել թարմացումներ, պատասխանել բոլոր մեկնաբանություններին և հաղորդագրություններին,

✓ 2017-2018 ուստարվա ընթացքում բաժինը ստացել է հանրային նշանակության

միջոցառման իրազեկման շուրջ 150 հայտ.

✓ պատասխաններ են տրվել ԳՊՀ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ info@gsu.am, info@gsu@mail.ru, ուղղված բազմաթիվ նամակներին և հարցումներին,

✓ հաշվետու տարվա ընթացքում ԳՊՀ պաշտոնական կայքէջում www.gsu.am և ԳՊՀ ֆեյսբուքյան պաշտոնական (https://www.facebook.com/gavarstateuniversity/) էջում բաժնի կողմից գրվել և տեղադրվել է 346 նորություն՝ համապատասխան լուսանկարներով:

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑՕԳՏՎՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ

- «Ժիրայր Նիշանյան հիմնադրամ». կրթավճար ծրագիր՝ 76
- «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն՝ 18
- «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»՝ 7
- «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն՝ 9
- «Հայ կրթական հիմնարկություն»՝ 5
- «Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամի կրթաթոշակատուներ՝ 62

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 177

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ (ԸՍՏՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ)

Ֆակուլտետ	Ուսանողների թիվ
Տնտեսագիտական	63
Հումանիտար մասնագիտությունների	40
Բնագիտական	33
Բանասիրական	25
Հեռակա	16

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 177

**ԳՊՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԴԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ**

Գործունեության ոլորտները	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի
<i>www.gsu.am կայքի նորություններ</i>	293	346
<i>Իրազեկման հայտերի քանակը</i>	135	150
<i>infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)</i>	2093	3282
<i>Լուսանկարահանված միջոցառումներ/ Լուսանկարների քանակը</i>	316/8720	480/11026
<i>«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված</i>	11/46.55	5/38.7

2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

ԳՊՀ միջազգայնացման նպատակով օտարերկրյա բուհերի, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության խթանում:

ԳՊՀ-ում միջազգային գիտաժողովների և աշխատաժողովների կազմակերպման աշխատանքների համակարգում:

Օտարերկրյա բուհերի հետ փոխըմբռնման հուշագրերի և գիտակրթական ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքմանն ուղղված աշխատանքների իրականացում:

ՀՀ տարբեր հիմնադրամների, բարեգործական կազմակերպությունների, անհատ հովանավորների և ԳՊՀ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողների միջև փոխադարձ կապերի ապահովում, կրթաթոշակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրման, ներկայացման աշխատանքների համակարգում, սոցիալական տարբեր ծրագրերի վերաբերյալ ուսանողների շրջանում տեղեկատվության տարածում:

Զանգվածային լրատվամիջոցների, ուսումնական հաստատությունների, գործընկեր այլ կազմակերպությունների հետ համագործակցության գործընթացի պլանավորում, կազմակերպում և իրականացում:

ԳՊՀ-ում իրականացվող կարևորագույն միջոցառումների, ծրագրերի մասին տեղեկատվության տարածում:

Ֆակուլտետների, ամբիոնների, այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության ապահովում:

ԳՊՀ կրթաշնորհառու ուսանողների հետ հանդիպումների կազմակերպում, ուսանողներին մտահոգող հարցերի քննարկում և բարձրաձայնում ԳՊՀ ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում,

ԳՊՀ ուսանողների ներգրավում կամավորական աշխատանքներում,

Համալսարանի արտաքին կապերի համակարգում և զարգացում, հանրային պատասխանատվության ծրագրերի իրականացում, լրատվության օպերատիվ տրամադրում:

**Ն. Ա. Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ**

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Մշակվել և ամբողջապես համալրվել են կայքի ֆակուլտետային 5 էջերը, ամբիոնային 9 էջերը:
- ✓ Նախագծվել և հրապարակվել է կայքի ԳՊՀ տեղեկատուն, որում ներկայացված են համալսարանի ստորաբաժանումները, աշխատակիցների վերաբերյալ տվյալները:
- ✓ Մշակվել են վարչական ստորաբաժանումների էջերը, որտեղ ներկայացված են կառուցվածքի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև տեղադրված են փաստաթղթեր:
- ✓ Նոր ձևաչափով մշակվել է կայքի պատկերասրահ էջը, որը փոխգործակցում է համալսարանի ֆեյսբուքյան էջի հետ և ինքնաշխատ (ավտոմատ) կերպով ցուցադրում ֆեյսբուքյան էջում հրապարակված լուսանկարները:
- ✓ Մշակվել է կայքի տեսասրահ էջը, որը փոխգործակցում է համալսարանի «YouTube» վիդեոպորտալի հետ և ինքնաշխատ կերպով թարմացվում:
- ✓ Մշակվել և համալրվել են գիտական խորհրդի, ռեկտորատի անձնակազմի կենսագրությունների էջերը (շուրջ 50 էջ):
- ✓ Նախագծվել և նոր ձևաչափով հարպարակվել են ֆակուլտետային խորհրուրդների փաստաթղթերի էջերը:
- ✓ Ինֆորմատիկայի և ֆիզմաթ գիտությունների ամբիոնի հետ համատեղ ավարտական աշխատանքի շրջանակներում մշակվել է համալսարանի բջջային «GSU Mobile» iOS հավելվածը, որը հասանելի է եռալեզու տարբերակով և հրապարակված է «Appple App Store»-ում, ունի ժամանակակից «Flat» դիզայն և պարզ կառուցվածք, փոխգործակցում է բուհական կայքի հետ, աշխատում է ինչպես առցանց ռեժիմում, այնպես էլ համացանցի կապի բացակայության պայմաններում, ունիերդրված ծանուցումների համակարգ (notifications):
- ✓ «Luseen Mobile» ընկերության հետ համատեղ մշակվել և «Google Play Market»-ում հրապարակվել է կայքի բջջային «GSU Mobile» Android հավելվածը, որը գործում է «iOS» հավելվածի համանմանությամբ:
- ✓ Luseen Mobile ընկերության հետ համատեղ մշակվել է «GSU Notifications» ծանուցումների բջջային Android հավելվածը, որը հնարավորություն է տալիս աշխատակիցներին հղել ծանուցումներ:
- ✓ Նախագծվել և մշակվել է միջազգային համագործակցության ենթադոմենային կայքը՝ «international.gsu.am»:
- ✓ Մշակվել և ներդրվել է տպիչների սպասարկման էլեկտրոնային զեկուցագրերի կազմման ընթացակարգ:
- ✓ Մշակվել են համակարգչային լսարանների դասաբաշխման ժամանակացույցերը:

- ✓ Կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման, սերվերային կենտրոնի սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները:
- ✓ Կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ: Բոլոր համակարգչային լսարանների համակարգիչները վերազինվել են ստանդարտ և մասնագիտական ծրագրային փաթեթներով:
- ✓ Կատարվել են SS բաժնի ընթացակարգերի բարելավման և արդիականացման աշխատանքներ, ներդրվել է էլեկտրոնային հաշվետվությունների տրամադրման ընթացակարգ:
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ, տեղադրվել են դասացուցակները, պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը, «Գնումներ» էջում պարբերաբար հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, էլեկտրոնային հարցումների հղումները:
- ✓ Կազմակերպվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակումներ և թարմացումներ, ապահովվել է պաշտոնական հանդիպումների, միջոցառումների համակարգչային սպասարկում:
- ✓ Կազմակերպվել է 2017-2018 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ:
- ✓ Կազմակերպվել է 2018թ. ուսումնական տարվա հեռակա ուսուցման ֆակուլտետում «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկայական ուսուցման փաթեթներ: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները:
- ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը:
- ✓ Իրականացվել է «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում:
- ✓ Կատարվել է համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհրդատվությունների տրամադրում:
- ✓ Իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում:
- ✓ Քննարկվել և մշակվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները:

**ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2018-2019 ուստարվա
զարգացման հիմնական ուղղությունները**

- ✓ Էլեկտրոնային ուսուցման համակարգի ծրագրային ապահովման արդիականացում, նոր հնարավորությունների ինտեգրում:
- ✓ Հեռավար ուսուցման իրականացմանը ուղղված համակարգերի ուսումնասիրման և իրականացմանը ուղղված աշխատանքների կազմակերպում:
- ✓ Տեսակոնֆերանսային համակարգի ներդրում և շահագործում:
- ✓ Սերվերային կենտրոնի կատարելագործում, պահուստավորման նոր ընթացակարգի ներդրում
- ✓ Էլեկտրոնային գրադարան համակարգի կատարելագործում
- ✓ Համակարգչային թեստավորման համակարգի կատարելագործում
- ✓ ՏՏ բաժնի կայքի նախագծում
- ✓ Ներքին Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ամպային համակարգի ներդրում
- ✓ «Office 365» փաթեթի ծառայությունների շրջանակներում ներքին փաստաթղթերի ամպային տիրույթի կառուցվածքի նախագծում և մշակում:
- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների համալրում:
- ✓ Համակարգչային գույքի գույքագրման, համարակալման, կնիքման, տեխնիկական անձնագրերի կազմման, տվյալների բազայի հավաքագրման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):
- ✓ «Examination. GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում:
- ✓ ԳՊՀ սերվերային կենտրոնի սպասարկում և զարգացում:
- ✓ Համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում:
- ✓ Համակարգչային լսարանների մշտադիտարկման, պարբերաբար ծրագրային վերազինման, դասաբաշխման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում:

Վ. Կ. Ավերիսյան՝

ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ

**ԳՎԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանի գրադարանը ձևավորվել է 1993թ-ին և ընթերցասրահների հետ միասին գործում է բուհի կենտրոնական և բնագիտական մասնաշենքերում: ԳՊՀ կենտրոնական մասնաշենքում տեղակայված գրադարանը համալրված է հումանիտար ուղղվածության մասնագիտական գրականությամբ, իսկ բնագիտական ֆակուլտետի մասնաշենքի գրադարանը՝ բնագիտական մասնագիտական գրականությամբ: Երկու գրադարանները միասին սպասարկում են համալսարանի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին, այլ ընթերցողներին:

Իրականացնելով իր առաքելությունը՝ ԳՊՀ գրադարանը բարեխղճորեն կատարում է գրադարանային գործառույթներն ու պարտականությունները՝ ապահովելով սովորողներին անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, տեղեկատվական աղբյուրներով:

Գրադարանի նպատակն է նպաստել ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպելով և ընթերցողներին տրամադրելով մասնագիտական գրականություն և շտեմարաններ, սովորողների մոտ ձևավորելով տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտություններ, զարգացնելով ընթերցանության մշակույթ: Այս նպատակների իրագործման համար գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- ընթերցողների գրանցում, որն իրավունք է տալիս ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից՝ սպասարկման սահմանված ձևերով,
- ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում՝ ավանդական և էլեկտրոնային եղանակներով,
- տեղեկատվական-մատենագիտական սպասարկում, անհատական և խմբակային աշխատանքի տարբեր ձևերի և մեթոդների կիրառում,
- գրականության ցուցադրում (մատենագիտական ցանկեր, գրքերի ցուցահանդեսներ, գրապահոցի «Բաց դռների օրեր»-ի անցկացում և այլն),
- անմիջական օգնություն ընթերցողին՝ տեղեկատվություն որոնելու, ընտրելու, գրադարանի կայքից օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում:

ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով.

- գրադարանային ֆոնդի համալրում,
- մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
- համալրումների ցուցադրում և դրանց մասին տեղեկատվության ապահովում,
- գրքապաշարի մշակում,
- գրքերի շրջանառում,
- վնասված գրքերի վերանորոգում,
- մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների մշակում,
- մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,

- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի լրամշակում:

Գրադարանային ֆոնդի համալրում

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 248 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որոնք ձեռք են բերվել ԳՊՀ ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ:

Գրադարանի համալրման գործում մշտական աջակից է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը, ում կողմից ստացել ենք հայագիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում

Համալրված 248 միավոր գրքերը մուտքագրվել, նկարագրվել և դասակարգվել են: Արդյունքում համալրվել են.

- 8 ուսումնական ձեռնարկ, դասագիրք,
- 67 գիտական հանդեսներ և հոդվածների ժողովածուներ,
- 10 սեղմագիր,
- 139 գեղարվեստական գրականություն,
- 24 այլ նյութեր:

Այսպիսով, ԳՊՀ գրադարանն իր գրքային ֆոնդում ունի 44.618 գրադարանային միավոր, որից.

- հայերեն են՝ 21.106 գիրք,
- ռուսերեն են՝ 17.166 գիրք,
- այլ լեզուներով՝ 6.346 գիրք:

Գրքաֆոնդի դասավորման արդյունքում դուրս է բերվել արդիականությունը կորցրած, ֆիզիկապես և բարոյապես մաշված գրականություն, որը ենթակա է զտման:

Գրքերի շրջանառում և վնասված գրքերի վերանորոգում

Հաշվետու ուստարում ակտիվ շրջանառվել է ինչպես մասնագիտական (ուսումնական գործընթացի և հանձնարարականների պահանջներից ելնելով), այնպես էլ գեղարվեստական գրականություն: Ուսանողների շրջանում գեղարվեստական գրքերի նկատմամբ մեծ պահանջարկ է արձանագրվել ակտիվություն են ցուցաբերել ոչ միայն բանասեր ուսանողները, այլև մյուս ֆակուլտետներում սովորողները: Գրքատացքին նպաստում են համալրված գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում, համալրումների մասին տեղեկատվության տարածումը, խորհրդատվությունները: Այս ամենի արդյունքն է նաև ԳՊՀ ամբիոններում գեղարվեստական բազմաժանր գրքերի քննարկումները:

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր և փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվում են Գրադարանի «բաց դռների օրեր», որի ընթացքում ուսանողները, հատկապես՝ առաջին կուրսեցիները ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

Հետևողական աշխատանքներ են կատարվել ողջ գրքաֆոնդի ֆիզիկական պահպանման, վնասված գրքերի վերանորոգման ուղղությամբ:

Աշխատանքներ են կատարվել նաև գրքի հանձնումն ուշացնող, հեռացված կամ տարեկետման մեջ գտնվող ուսանողների հետ՝ գրքի վերադարձման ժամկետների հիշեցման, գրքային պարտքերի վերադարձման ուղղությամբ: Գրադարանում մեծ պատասխանատվությամբ են կատարվել նաև պատվիրած և պահանջ ներկայացրած ընթերցողներին գրականության առկայության մասին տեղեկատվության ապահովումը և նրանց բարեխիղճ սպասարկումը:

Մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների մշակում

Կատարվել է 44.618 գրքերից կազմված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների մշակում: Արդյունքում ստացել ենք յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան մասնագիտական գրքերի հետևյալ քանակը.

- Հայոց լեզու և գրականություն՝ 2935
- Ռուսաց լեզու և գրականություն՝ 2389
- Անգլերեն լեզու և գրականություն՝ 2240
- Պատմություն՝ 1622
- Իրավագիտություն՝ 1659
- Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1301
- Կառավարում և ֆինանսներ՝ 2307
- Հաշվապահական հաշվառում՝ 2307
- Կենսաբանություն՝ 2437
- Դեղագործական քիմիա՝ 232
- Աշխարհագրություն՝ 933
- Բնապահպանություն և բնօգտագործում՝ 101
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2514
- Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 60
- Սերվիս՝ 42:

Համալսարանի կողմից իրականացվում է մասնագիտական գրականության համալրման գործընթաց:

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում

Մասնագիտական տեղեկատվական բազան իրենից ներկայացնում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկեր: Գրադարանում համալրվում և լրամշակվում են թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որտեղ ներառված են տարբեր հանդեսների, գիտական նյութերի ժողովածուների մեջ ներառված հոդվածների վերնագրեր (պարունակում է 3950 հոդված), և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 մասնագիտական ուղղություններով (պարունակում է 1447 հոդված):

Այս ցանկերը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված են նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Գրադարան» հատվածամասում՝ պարբերաբար լրամշակումներով:

ԳՊՀ գրադարանի համագործակցությունը

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է, համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, որի շրջանակներում

ներկայացնում է ամենամյա հաշվետվություն գրադարանի հագեցվածության մասին: Գրադարանի հագեցվածության մասին ցուցանիշները հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի ու Արցախի պետական համալսարանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարաններին:

Սերտ է ԳՊՀ գրադարանի համագործակցությունը Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարանների հետ, որի արդյունքում Համալսարանի գրքերի նվիրատվություններով վերոնշյալ գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի փոխադարձ նվիրատվություն, որը շարունակական բնույթ է կրում:

2018 – 2019 ուստարում ԳՊՀ գրադարանի զարգացման հիմնական ուղղությունները

2018-2019 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է ԳՊՀ գրադարանի գործունեության ակտիվացում՝ հետևյալ ուղղություններով.

- ընդլայնել ԳՊՀ գրադարանի համագործակցության շրջանակը՝ կապեր հաստատելով ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի, ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի և Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գրադարանների հետ,
- շարունակական աշխատանքներ իրականացնել գրադարանի գրքաֆոնդի համալրման ուղղությամբ՝ ելնելով դասընթացների ծրագրերում ներկայացվող գրականության ցանկերից և գրադարանում հաճախ պատվիրվող և մերժվող գրականությունից,
- «E-Library.GSU» էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում՝ անհրաժեշտ գրականությամբ,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասում «Համալրված գրականություն» բաժնի ստեղծում, որտեղ պարբերաբար կտեղակայվեն տեղեկություններ գրքաֆոնդը համալրած գրականության մասին,
- ընթերցասրահում համակարգչային-տեղեկատվական սպասարկման ապահովմամբ ակտիվացնել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական աշխատանքները,
- դասախոսների և ուսանողների շրջանում իրականացնել հարցումներ՝ գրքաֆոնդն անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ համալրելու նպատակով,
- Ձեռք բերել ժամանակակից գրողների ստեղծագործություններ: Հետևողական աշխատանքներ իրականացնել՝ ուսանողների շրջանում ընթերցանությունը խթանելու նպատակով:

**Ա. Գ. Թորյան՝
Գրադարանավարուհի**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ
ԿԼԻՆԻԿԱՅԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 15 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով խորացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գիտելիքները, գործնական հմտությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, յուրացնում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին:

Ի թիվս այլ առարկաների՝ իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբանական գրագրություն» դասընթացը, որի ուսումնասիրման համար յուրաքանչյուր ուսանողի տրամադրվել է նաև դասընթացի դասագիրք:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վարչական և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի դասընթացների ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 10 ուսանողներ, որոնք 14 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2017 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի վեց գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ, պետական մարմիններին ուղարկել համապատասխան հարցումներ և գրություններ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանը մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի գրասենյակի կողմից կազմակերպված 2 միջոցառումների՝ սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների, կազմակերպված Երևան քաղաքում:

2017թ. հոկտեմբերի 13-ից 15-ը Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքում անցկացվեց Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագիրը կրող 7-րդ դպրոցի դասընթացը:

Դպրոցի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, միջազգային

կառույցների ներկայացուցիչներ, հանրապետության առաջատար բուհերի իրավաբանական կլինիկաների տնօրեններ, ուսանողներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակների կազմում էին բուհի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, իրավաբանական կլինիկայի վեց ուսանողներ, ովքեր ակտիվորեն մասնակցեցին դպրոցի աշխատանքներին և խրախուսվեցին:

Ա. Ապրոյանը ներկայացրեց դասախոսություններ՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները փախստականի և ապաստանի իրավունքների համատեքստում» և «Փախստականների իրավունք. կլինիկական կրթություն» թեմաներով:

Եռօրյա դասընթացի շրջանակում մասնակիցներին ներկայացվեցին փախստականների իրավունքների միջազգային և ներպետական պաշտպանության հիմնարար սկզբունքներն ու կառուցակարգերը, փախստականի կարգավիճակի սահմանման առանձնահատկությունները, ՀՀ-ում փախստականների իրավունքների դատական պաշտպանության և այլ հիմնահարցեր:

Դպրոցի կազմակերպումը նպատակ էր հետապնդում ապահովել ապագա իրավաբաններին, հետազոտողներին, պրակտիկ աշխատողներին՝ ապաստանի և փախստականների իրավունքի բնագավառում հիմնարար գիտելիքներով, խրախուսել մասնակիցներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել փախստականների իրավունքների պաշտպանության, փախստականների պաշտպանության իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների կիրառման ոլորտներում, ծանոթացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական կլինիկաների գործունեությանը՝ ապահովելով դրանց արդյունավետ համագործակցությունը և փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում կլինիկական կրթության զարգացումը:

2018 թվականի փետրվարի 15-ին մեկնարկեց Գավառի պետական համալսարանի Իրավաբանական կլինիկայի «Իրավունք բոլորի համար» ծրագրի նոր փուլը, որի շրջանակում իրավաբանական կլինիկայի 6 ուսանողներ ՀՀ Գեղարքունիքի մարզի երեխաների համար կազմակերպեցին «Փախստականների իրավունքները» թեմայով սեմինարներ և քննարկումներ: Սեմինարներին մասնակցել են ավելի քան 130 դպրոցահասակ երեխաներ:

Հատկանշական է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն՝ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Իրավաբանական կլինիկայում դասավանդում են ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և տարբեր ծրագրերով արտերկրում վերապատրաստում անցած դասախոսներ:

2018 թվականի մայիսին Իրավաբանական կլինիկան համագործակցության հուշագիր է կնքել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ՝ ի նպաստ Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի մտահոգության առարկա հանդիսացող անձանց՝ փախստականների, ապաստան հայցող և տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության: ԳՊՀ իրավաբանական կլինիկան ստանձնել է իր ուսանողներին ՄԱԿ ՓԳՀ մտահոգության առարկան հանդիսացող անձանց իրավական կարգավիճակի

վերաբերյալ գործնական գիտելիքներով և հմտություններով ապահովելու, ինչպես նաև վերջիններիս իրավաբանական աջակցություն ցուցաբերելու գործառույթ:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկան տան, հատուկ դպրոցի հետ և ակտիվորեն աջակցում է Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

**Ա. Հ. Ապրոյան՝
ԳՊՀ իրավաբանական կլինիկական
կրթության ծրագրի ղեկավար**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներին համապատասխան շարունակել է համալսարանի աշխատողների և ուսանողների աջակցության ծրագրերը:

Համալսարանի արհեստակցական կազմակերպությունն իր անդամների նյութական օգնությանն ուղղված միջոցներ է ձեռնարկում ողջ տարվա ընթացքում: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը իր միջոցներից օգնության կարգով համալսարանի աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 32 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունը տարբեր հիշարժան առիթներով ֆինանսավորել է համալսարանի աշխատակիցների և ուսանողների կազմակերպած միջոցառումները, էքսկուրսիաները:

ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական մշակութային, ինտելեկտուալ զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր: 2018թ. ընթացքում համալսարանի աշխատակիցների համար կազմակերպվել է էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր՝ Սարդարապատ, Ծաղկաձոր, Սևան, Դիլիջան, Խոր Վիրապ, Նորավանք:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը ՀՀ պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների հետ:

Արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետև ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

Լ. Գ. Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության
նախագահ

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017-2018 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդն (այսուհետ՝ նաև ՌԻԽ) ու ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ նաև ՌԻԳԸ) բուհում շարունակել են իրենց ակտիվ գործունեությունը՝ որպես սովորողների ինքնակառավարման մարմիններ: Մասնակցել են համալսարանի կառավարման գործընթացներին, ներկայացրել են ուսանողների իրավունքներն ու օրինական շահերը, տեսակետն ու դիրքորոշումները, համակարգել են սովորողների համար իրականացվող ծրագրերը:

Կազմակերպել են ուսուցողական, ճանաչողական ու դաստիարակչական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, ուսանողական ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, բանավեճեր, բաց դասեր, գրական-գեղարվեստական ցերեկույթներ, սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ՝ նպաստելով ուսանողների ընդհանուր աշխարհայացքային, ստեղծագործական և մասնագիտական զարգացմանը:

Ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը համագործակցել են ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների, երիտասարդական, կրթական, մարզական, սոցիալ-մշակութային ոլորտները ներկայացնող կազմակերպությունների հետ:

Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը կյանքի են կոչել հետևյալ նախաձեռնությունները.

2017թ.-ի սեպտեմբերի 9-ին բուհի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ համալսարանում հյուրընկալվեցին Գավառի ավագ դպրոցի աշակերտական խորհրդի անդամները: Քննարկվեցին համագործակցության հիմնական ուղղությունները, այնուհետև տարվա ընթացքում կազմակերպվեցին փոխայցելություններ, համատեղ միջոցառումներ:

2017թ.-ի հոկտեմբերի 6-ին ԳՊՀ ՌԻԳԸ ներկայացուցիչները մասնակցեցին Գորիսի պետական համալսարանում կազմակերպված հանրապետական ուսանողական գիտաժողովին՝ նվիրված բուհի հիմնադրման 50-ամյակին:

2017թ.-ի հոկտեմբերի 13-ին ԳՊՀ ՌԻԽ, ՌԻԳԸ ներկայացուցիչները մասնակցեցին Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում կայացած ուսանողական գիտաժողովին:

2017թ.-ի հոկտեմբերի 14-ին կազմակերպվել է «Բարև, մե՛նք ենք» խորագիրը կրող միջոցառում՝ ԳՊՀ առաջին կուրսեցիների մասնակցությամբ:

2017թ.-ի նոյեմբերի 2-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ մրցույթ:

2017թ նոյեմբերի 5-ին ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել է «3/Off» ձևաչափով խաղ-մրցույթ:

2017թ. -ի դեկտեմբերի 1-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կայացել է «Աշնան նոտաներ» խորագիրը կրող գրական-գեղարվեստական ցերեկույթ:

2017թ. -ի դեկտեմբերի 9-ին կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված ՀՀ տնտեսական զարգացման միտումներին:

2017թ. . -ի դեկտեմբերի 12-ին ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացել է Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկա վիճակի և զարգացման միտումների վերաբերյալ ուսանողական գիտաժողով:

2018թ. . -ի փետրվարի 25-ին ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել է սեմինար՝ «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» թեմայով:

2018թ. -ի մարտի 25-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ստեղծագործ մտքի ճանապարհին» խորագիրը կրող ցերեկույթը:

2018թ. -ի մարտին բուհի ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից հրավիրվել է ԳՊՀ ուսանողների ժողով, որտեղ ներկայացվել են հաշվետվություններ նախորդ կիսամյակում ՈՒԽ և ՈՒԳԸ կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև քննարկվել են անելիքները, հստակեցվել է գործունեության ծրագիրը:

2018թ. -ի ապրիլի 11-14-ը բուհի ՈՒԽ, ՈՒԳԸ ներկայացուցիչները մասնակցել են Արցախի պետական համալսարանում կայացած Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված համահայկական ուսանողական ֆորումին և գիտաժողովին:

2018թ. -ի ապրիլին 14-ին ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված ներառական կրթության հիմնախնդիրներին ու առանձնահատկություններին:

2018թ. -ի ապրիլի 16-20-ը բուհի ՈՒԽ, ՈՒԳԸ ներկայացուցիչները մասնակցել են Երևանի պետական համալսարանում կայացած միջազգային գիտաժողովին:

2018թ. -ի ապրիլի 20-ին ՈՒԳԸ անդամների մասնակցությամբ տեղի է ունեցել Անրի Վերնոյի «Մայրիկ» գրքի քննարկումը, ապա կազմակերպվել է «Մայրիկ» ֆիլմի դիտում:

2018-2019 ուսումնական տարում ԳՊՀ ինքնակառավարման մարմիններն իրականացնելու են գործունեություն՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. մասնակցություն ԳՊՀ կառավարման գործընթացներին, որոշումների ընդունմանը, բուհում ուսանողակենտրոն քաղաքականության իրականացմանը, սովորողների իրավունքների և օրինական շահերի ներկայացում ու պաշտպանություն,
2. ԳՊՀ 2017-2022 զարգացման ռազմավարական ծրագրի և վերջինիս հիման վրա 2018-2019 տարեկան գործունեության ծրագրի իրականացմանը մասնակցություն,
3. ԳՊՀ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների հետ կրթության որակի բարձրացման ուղիների և կառուցակարգերի քննարկում, շարունակական միջոցների ձեռնարկում, կրթության որակի ապահովման գործընթացներին մասնակցություն,
4. ԳՊՀ գիտական խորհրդին, ղեկտորատին, ղեկանատներին, ամբիոններին և դասախոսներին ուսանողների կողմից առավել ընդունելի ուսուցման մեթոդների և կրթական տեխնոլոգիաների ներկայացում,

5. ավարտական կուրսերի ուսանողների հետ կրթական վերջնարդյունքների ձեռքբերման և բուհում ստացած կրթությունից գոհունակության վերաբերյալ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն, առաջարկությունների ներկայացում բուհի ղեկավար մարմիններին,
6. ԳՊՀ որակի ապահովման բաժնի հետ համատեղ առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողների շրջանում հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և եզրակացությունների ներկայացում բուհի ղեկավար մարմիններին,
7. ԳՊՀ ուսանողների պրակտիկաների արդյունավետության բարձրացման նպատակով պրակտիկան անցկացնող կազմակերպություններում հարցումների անցկացում,
8. աշխատաշուկայի պահանջները, գործատուների կարիքներն ու ակնկալիքները բացահայտելու նպատակով գործատուների շրջանում հարցումների անցկացում, գործատուների հետ պարբերաբար հանդիպումների ու քննարկումների կազմակերպում,
9. հասցեական աշխատանքներ ակադեմիական ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ, գերազանցիկ ուսանողների կողմից խորհրդատվությունների, սեմինարների կազմակերպում,
10. ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի, ակադեմիական ազնվության հայեցակարգի և էթիկայի կանոնների վերաբերյալ ուսանողներին իրազեկում և դրանց հետևողական կիրառում.
11. Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովների, բազմաբնույթ ցերեկույթների, ուսուցողական և դաստիարակչական միջոցառումների կազմակերպում,
12. բանավեճերի, դերային խաղերի, սեմինարների, ֆիլմերի դիտում-քննարկումների, գրական ստեղծագործությունների քննարկումների անցկացում,
13. համագործակցություն ԳՊՀ տնտեսագետների, ստեղծագործողների և այլ ակումբների հետ, ուսանողական տարբեր նախաձեռնությունների խրախուսում,
14. համագործակցություն ԳՊՀ տուրիզմի կենտրոնի հետ,
15. ինտելեկտուալ խաղերի, մրցույթների կազմակերպում,
16. գիտաճանաչողական էքսկուրսիաների նախաձեռնում,
17. փոխայցելություններ դպրոցներ և քոլեջներ, համատեղ ծրագրերի իրականացում,
18. հանդիպումներ Գավառի և հարակից համայնքների դպրոցների աշակերտների, մանկատան և հատուկ դպրոցի սաների հետ,
19. ավագ դպրոցի աշակերտների համար մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,
20. համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Ա. Ս. Սինանյան՝
ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախագահ,
Կ. Կ. Սարգսյան՝
ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության
նախագահ

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2017-2018 ուսումնական տարում տնտեսատեխնիկական անձնակազմն իրականացրել է իր գործառույթներից բխող միջոցառումներ՝ Գավառի պետական համալսարանի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրով նախանշված ուղղություններին, նպատակներին և խնդիրներին համապատասխան: ԳՊՀ ղեկավարությանն առաջարկություններ է ներկայացվել Համալսարանի տնտեսական, տեխնիկական և սպասարկման ոլորտներում ԳՊՀ-ում կատարվող աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ ապահովելու ներհամալսարանական պատշաճ տնտեսվարումը, սպասարկելու և արդիականացնելու Համալսարանի համակարգչային տեխնիկական, ստորաբաժանումներում անխափան ապահովելու համացանցային կապը, ինչպես նաև բարեխղճորեն իրականացնելու իր կանոնակարգով նախատեսված այլ գործառույթներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ԳՊՀ-ի գիտական խորհրդի կողմից ընդունվել է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման կարգը:

2017թ. սեպտեմբերին հաստատվեց Համալսարանի տնտեսական գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2017-2018 ուսումնական տարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը:

Ըստ պլանի՝ կազմակերպվել է 12 աշխատանքային հանդիպում տնտեսատեխնիկական բոլոր աշխատակիցների հետ, առանձին հանդիպումներ են կազմակերպվել ԳՊՀ պարետների, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատակիցների հետ, քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, ծագած խնդիրները, հստակեցվել դրանց օպերատիվ լուծման ուղիները:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու ժամանակահատվածում ևս Համալսարանի տնտեսատեխնիկական գործունեությունն իրականացվել է հետևյալ բաժինների միջոցով.

✓ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (համակարգչային տեխնիկայի շահագործման մասնագետներ, ծրագրավորողներ, Համալսարանի կայքէջի սպասարկման և այլ մասնագետներ),

✓ տեխնիկական և անվտանգության ապահովման բաժին (ճարտարագետ, էլեկտրիկ, հյուան, հնոցապաներ, սանտեխնիկ, բուժքույր և այլ մասնագետներ),

✓ տնտեսական բաժին (պահեստապետ, գնորդ, պարետներ, տնտեսուհիներ, բանվոր),

✓ սպասարկման բաժին (հսկիչներ, վարորդներ):

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով յուրաքանչյուր աշխատակցին առաջադրվող խնդիրները պարզաբանվել են, համակարգվել է նրանց կոլեկտիվ աշխատանքը:

2017-2018 ուսումնական տարվա համար բոլոր աշխատակիցների աշխատավարձերը վճարվել են ժամանակին, կիրառվել են աշխատակիցների բարոյական և նյութական խրախուսման միջոցներ: Թույլ տրված կարգապահական խախտումների համար

սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ԳՊՀ տնտեսատեխնիկական անձնակազմի յոթ անդամներ:

Ուսումնագիտական գործընթացն անխափան ապահովելու նպատակով անհրաժեշտ նյութերով և սարքերով ապահովվել են Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները՝ համաձայն ԳՊՀ գնումների պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է Համալսարանի նյութատեխնիկական բազան՝ ԳՊՀ մասնակցությամբ Եվրոպական Միության «Էրասմուս + ԴՈԿՄԵՆ» ծրագրի հաշվին համալրվելով նոր համակարգիչներով: Սահմանված կարգով ձեռք են բերվել գրենական պիտույքներ, ԳՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով:

Գավառի պետական համալսարանի միջոցներով ձեռք են բերվել համակարգչային պահեստամասեր, տպիչներ, ուսումնաօժանդակ նյութեր: Գնվել է նաև կահույք, շինանյութ, տնտեսական ապրանքներ, սանհիգիենիկ միջոցներ, դեղորայք:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Վերացվել են բոլոր մասնաշենքերի տանիքների, շքամուտքերի՝ եղանակային վատ պայմանների հետևանքով պատճառված վնասները: Ներքին հարդարման մասնակի աշխատանքներ են կատարվել ԳՊՀ բոլոր մասնաշենքերում:

ԳՊՀ տրանսպորտային միջոցներով իրականացվել են բազմաթիվ ուղերթներ, միաժամանակ, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների, գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների, ինչպես նաև արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման նպատակով սահմանված կարգով օգտագործվել են այլ կազմակերպություններից վարձված տրանսպորտային միջոցները:

ԳՊՀ մասնաշենքերում ամենօրյա աշխատանքներ են կատարվել սանիտարական մաքրության պահպանման ուղղությամբ: Հետևողական աշխատանքների արդյունքում սանիտարական մաքրության վիճակը Համալսարանի մասնաշենքերում հասցվել է բավարար մակարդակի:

Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ, կազմակերպվել է չորս շաբաթօրյակ՝ «Մաքուր համալսարան» կարգախոսով, ինչի արդյունքում Գավառի քաղաքապետարանի և «Գեղարեգ» երիտասարդական, կրթամշակութային կազմակերպության կողմից Գավառի պետական համալսարանը ճանաչվել է որպես «Մաքուր ուսումնական հաստատություն»:

Համալսարանի տնտեսատեխնիկական ծառայությունների ուժերով իրականացվել են նաև մասնաշենքերի ջեռուցման ցանցերի և ջրագծերի մասնակի վերանորոգումներ, վերանորոգվել են բազմաթիվ հանգույցներ՝ ինչպես ջեռուցման, այնպես էլ ջրամատակարարման ցանցերում:

Համալսարանի կաթսայատան միջոցով ջեռուցվում են բոլոր մասնաշենքերը, այդ թվում՝ հանրակացարանը: Զեռուցման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ են կատարվել բոլոր մասնաշենքերում և կաթսայատանը: Վերակառուցվել և վերանորոգվել են ջրատաքացուցիչ կաթսաները, նորացվել են ինքնաաշխատ (ավտոմատ) հսկման համակարգերը:

Համալսարան էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով կատարվել են մեծ ծավալի աշխատանքներ ինչպես տրանսֆորմատորային ենթակայաններում, այնպես էլ բուհի մասնաշենքերում, ինչի արդյունքում հաջողվել է լսարաններում, լաբորատորիաներում ու միջանցքներում ապահովել նորմալ լուսավորություն և լաբորատոր դասընթացների անցկացման համար անհրաժեշտ սարքերը պահել աշխատանքային բնականոն վիճակում:

2018 թվականի ամռանն իրականացվելու են աշխատանքներ Համալսարանի տարածքի լուսավորությունը խնայողական ռեժիմով ապահովելու ուղղությամբ:

Համալսարանում ներքին և արտաքին որակյալ ու անխափան կապն ապահովելու նպատակով 2013 թվականի տարեվերջին «Ռոստելեկոմ» կազմակերպության կողմից ներդրվել է նոր, ժամանակակից թվային ավտոմատ հեռախոսակայան և հեռախոսացանց: Տարվա ընթացքում Համալսարանի հեռախոսակապն աշխատել է գրեթե անխափան:

2018-2019 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի Կոմպյուտերային տեխնոլոգիաների և հեռախոսակապի հիմնական ուղղություններն են.

1. ՄԱԿ-ի երևանյան գրասենյակի հետ համագործակցության արդյունքում Համալսարանի կենտրոնական մասնաշենքում հիմնանորոգել Գեղարքունիքի զբոսաշրջության զարգացման կենտրոնը, որը զինված կլինի տեղեկատվական նորագույն տեխնիկայով և անհրաժեշտ գույքով:

2. Հիմնանորոգել և կահավորել համալսարանի «Սմարթ» ուսանողական կենտրոնը:

3. Օգտագործել արտաքին հնարավորությունները և ներգրավել միջոցներ՝ Համալսարանի մարզական բազայի վերանորոգման համար:

4. Ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով:

5. Զարգացնել Համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար:

6. Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները բոլոր մասնաշենքերում: Ըստ այդմ՝

➤ իրականացնել մասնաշենքերի տեխնիկական փուլային փորձաքննություն, ձևավորել հիմնանորոգման և վերակառուցման տարբերակված պլան և ապահովել դրա իրականացումը,

➤ պլանավորել և իրականացնել լսարանային ֆոնդի ընթացիկ վիճակի պարբերական գնահատումներ, վերակառուցումներ և վերանորոգումներ, արդիականացում և համապատասխանեցում կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին, որակյալ կրթության ապահովման հրամայականին,

➤ ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման նոր գերակայություններին համապատասխան,

➤ շարունակել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով տեղադրել խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաներ,

7. ապահովել Համալսարանի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացումն ու արդիականացումը՝ կրթական և հետազոտական ծրագրերի արդի պահանջներին համապատասխան: Ըստ այդմ՝

✓ գնահատել Համալսարանի ուսումնական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ կրթության և հետազոտությունների որակի ապահովման չափորոշիչների, և մշակել առկա լաբորատոր բազայի արդիականացման հեռանկարային պլան՝ ըստ ֆակուլտետների,

✓ ապահովել լաբորատոր բազայի արդիականացման պլանների իրականացումն ըստ ճյուղային զարգացման հեռանկարային առաջնահերթությունների և տարիների՝ նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ Համալսարանի, միջազգային ծրագրերի և դրամաշնորհատու կազմակերպությունների ներդրումներից,

✓ զարգացնելով և ընդլայնելով արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ հաջող համագործակցության առկա փորձը՝ ստեղծել նոր համատեղ հետազոտական լաբորատորիաներ և կենտրոններ՝ դրանք առաջին հերթին նպատակաուղղելով ուսանողության կրթական պահանջների բավարարմանը և հետազոտական ծրագրերի իրականացմանը (գործնական օրինակ է ԳՊՀ Էկոլոգիայի գերազանցության կենտրոնը),

✓ նպաստել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի, ինչպես նաև առանձին գործատու կազմակերպությունների ու բարերար անհատների միջոցներով, կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան, առկա լաբորատոր բազայի վերազինման և նորերի ստեղծման նախաձեռնություններին,

8. ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմաններ Համալսարանի բոլոր ֆակուլտետներում: Համապատասխանաբար՝

✓ մշակել ԳՊՀ տարածքային պայմանների բարելավման նոր իրատեսական պլան և Համալսարանում առկա ներքին և արտաքին բոլոր հնարավորություններն ուղղել դրա իրականացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Համալսարանի, միջազգային ծրագրերի և դրամաշնորհատու կազմակերպությունների, անհատների ներդրումները,

✓ ստեղծել Համալսարանի նյութատեխնիկական բազայի հետագա զարգացման լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջների լիարժեք կատարումը,

✓ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի պահանջներին համահունչ՝ մշակել և իրականացնել ուսումնական տարածքների արդյունավետ օգտագործման հեռանկարային պլան՝ ներառելով նաև դեռևս չվերականգնված մասնաշենքի հիմնանորոգման հարցը,

✓ օգտագործել արտաքին հնարավորությունները՝ Համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար,

✓ շարունակել զարգացնել Համալսարանի նյութատեխնիկական պայմանների բարելավման գործընթացը՝ հիմնական շեշտը դնելով համագործակցային կապերի ընձեռած հնարավորությունների վրա,

9. ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումն ու որակական նոր մակարդակի ձեռքբերումը Համալսարանի կրթական և գիտական բոլոր գործընթացներում.

✓ զարգացնել Համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գործունեությունը,

✓ զարգացնել Համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար,

✓ կատարելագործել ուսուցման համացանցային հենքով էլեկտրոնային համապիտանի համակարգը (E-Learning.gsu.am, E-Library.gsu.am)՝ ապահովելով ուսումնական նյութերի շարունակական համալրում և արդիականացում,

✓ կատարելագործել ուսանողական համացանցային պորտալը (students.gsu.am)՝ կցված համացանցային-ուսուցման համակարգին՝ ապահովելով ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը Համալսարանի բոլոր ուսանողների համար: Անհատականացված պորտալը կծառայի ուսանողին նաև բուհն ավարտելուց հետո,

✓ խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը Համալսարանի հետազոտական ծրագրերում, նախագծերում և մագիստրոսական ավարտական աշխատանքներում:

Դրամաշնորհային ծրագրերի միջոցներով և գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ հնարավորություն ստեղծել լայնածավալ աշխատանքներ կատարելու համար.

1. հիմնանորոգել Համալսարանի գրադարանները և ընթերցասրահները,
2. պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով Համալսարանի բոլոր մասնաշենքերը և հարակից տարածքներն ապահովել տեսախցիկներով,
3. կազմակերպել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը,
4. բարենորոգել և արդիականացնել Համալսարանի բոլոր ֆակուլտետների լսարանները,
5. բարեկարգման և կահավորման աշխատանքներ իրականացնել Համալսարանի հանրակացարանում,
6. առողջ ապրելակերպի մշակույթի արմատավորման նպատակով Համալսարանի կենտրոնական մասնաշենքում կառուցել ժամանակակից մարզագույքով ապահովված մարզասրահ:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը Համալսարանի բոլոր ֆակուլտետներում:

**Ա. Հ. Ապրոյան՝
ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր**

**2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ**

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

01.09.2017թ.

Գիտելիքի և դպրության օրը համալսարանում տեղի ունեցավ առաջին զանգի հանդիսավոր արարողություն, կատարվեց առաջին կուրսի ուսանողների օրհնության կարգ, ապա կայացավ հայրենասիրության և արիության դաս: ԳՊՀ-ն դիմավորեց ուսանողների 25-րդ սերնդին, անցկացվեց առաջին կուրսեցու երդման արարողությունը: Համալսարանում մեկնարկեց նոր ուսումնական տարին՝ «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և նախաձեռնություններ» կարգախոսով:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

20.09.2017թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Հայ օգնության ֆոնդի Նյու Յորքի գրասենյակի փոխտնօրեն Արտո Որբերյանին, ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի փոխտնօրեններ Մարգարիտ Փիլիպոսյանին և Էդիկ Կարապետյանին, ամերիկահայ բարերարներ, Գավառի հատուկ դպրոցի Նյու-Յորքի «Բարեկամների խորհուրդ»-ի անդամներ Կրիկոր և Ֆլորինա Կրիկորյաններին, ՀՕՖ-ի Վանաձորի տարեցների տան բարերարներ Աիդա Գեդիրին և Սիլվա Մկրտչյանին, ՀՕՖ-ի Գյումրու «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կենտրոն»-ի բարերար Սեմ Միքայելյանին:

«ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ. ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ, ԵՐԿՈՒ ՍԵՐՈՒՆԴ»

22.09.2017թ.

Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կազմակերպած ցերեկույթը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 26-րդ ամյակին «Անկախություն. մեկ ճանապարհ, երկու սերունդ» խորագրով:

ԴՊՐՈՑ-ԲՈՒՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

22.09.2017թ.

Գավառի պետական համալսարանը կարևորում է համագործակցությունը Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ: ԳՊՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ այսօր համալսարանում հյուրընկալվել էին Գավառի դպրոցների աշակերտական խորհուրդների անդամները՝ համատեղ ծրագրերի նախագծեր քննարկելու և իրականացնելու նպատակով:

ԳՊՀ «ԳԵՂԱՄԱ» ԹԻՄԸ՝ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ

23.09.2017թ.

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) համատեղ կազմակերպեցին

քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված դատախազ-մրցույթ, որին մասնակցեց Գավառի պետական համալսարանի «Գեղամա» թիմը՝ արժանանալով «Ինքնատիպ թիմ» տիտղոսին, ինչպես նաև դատավորների խորհրդի սահմանած մրցանակին:

ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ԱՐՄԱԹ ԷՔՍՊՈ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

27.09.2017թ.

Գավառ քաղաքում տեղի ունեցավ «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների մարզային «Էքսպո» ցուցահանդեսը, որին մասնակցեցին նաև Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտության բաժնի ուսանողները:

ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ԴԻՋԻԹԵՔ ԷՔՍՊՈՅՈՒՄ»

29.09.2017թ.

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան Էքսպո» ցուցահանդեսային համալիրում մեկնարկեց «Դիջիթեք Էքսպո-2017» 13-րդ ամենամյա տեխնոլոգիական ցուցահանդեսը, որին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի Համակարգչային ճարտարագիտության, Ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի բաժինների տարբեր կուրսերի ուսանողներ և աշխատակիցներ:

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՌՈՒՆԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

29.09.2017թ.

Գավառի պետական համալսարանում Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում տեղի ունեցավ բաց դասախոսություն, որը վարեցին Իսպանիայի Թագավորության Կոռունա համալսարանի դասախոսներ Օանտա Ալեքսանդրա Գաբրիելան և Արտակ Մկրտիչյանը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ 300-ԱՄՅԱԿԻՆ

04.10.2017թ.

Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդարանի հանդիսությունների դահլիճում իր աշխատանքը սկսեց «Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի 300-ամյակ. պատմություն և ներկա» խորագրով միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին շուրջ 60 հայագետներ, պատմաբաններ, աստվածաբաններ, արվեստագետներ և մշակութաբաններ Հայաստանից, Ռուսաստանից և Ուկրաինայից:

Գիտաժողովին զեկույցով հանդես եկավ Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Գեորգիի Թունյանը՝ «Աստրախանի թեմի կայացումը 18-19-րդ դարի սկիզբ» և «Էջմիածին և Գանձասար. միջեր և փաստեր» թեմաներով:

**ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿՐԱԿՈՎԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

05.10.2017թ.

Եվրոպական միության «Էրազմուս+ DOCMEN» ծրագրի շրջանակում Լեհաստանի Հանրապետության Կրակովի տեխնոլոգիական համալսարանում տեղի ունեցավ «Միկրոէլեկտրոնային ճարտարագիտության ոլորտում երկաստիճան նորարարական ուսումնական ծրագրերի մշակում» թեմայով վերապատրաստում: Վերապատրաստմանը մասնակցում էին ԳՊՀ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնի աշխատակիցները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

06.10.2017թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողները մասնակցեցին Գորիսի պետական համալսարանում կազմակերպված երկօրյա հանրապետական ուսանողական գիտաժողովին՝ նվիրված բուհի հիմնադրման 50-ամյակին: Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ԳՊՀ բանասիրական, բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ներկայացուցիչ 11 ուսանողներ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

12.10.2017թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Սիրտ-անոթային հիվանդությունները և դրանց կանխարգելումը» խորագրով ուսանողական գիտաժողով: Գիտաժողովին ակտիվորեն մասնակցեցին դեղագործական քիմիայի բաժնի 4-րդ կուրսի ուսանողները:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏԱՆԸ

12.10.2017թ.

Գավառի պետական համալսարանի և Գավառի մանկատան միջև համագործակցության ծրագրի շրջանակում բուհի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը և բնագիտական ֆակուլտետի սերվիսի բաժնի 4-րդ կուրսի ուսանողները Գավառի մանկատանն անցկացրին «Աշխարհի հայտնի զբոսաշրջության վայրերը» թեմայով սեմինար-քննարկում:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

12.10.2017թ.

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի խորհրդատու Արմինե Ղաջոյանի նախաձեռնությամբ և նույն ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա /տարրական

կրթության/ բաժնի 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված Գեղարքունիքի մարզի անվանի մանկավարժներին:

ԳՊՀ ՈՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՎԱՆԱԾՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՄ

13.10.2017թ.

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ընկերության տարեկան գիտական նստաշրջանը: ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի, բուհի արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Նունե Միրիբյանի և ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ Կորյուն Սարգսյանի ուղեկցությամբ համալսարանի չորս ֆակուլտետները ներկայացնող 18 ուսանողներ հանդես եկան զեկուցումներով:

ԱՄՓՈՓՎԵՑ ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ. GOVERN» ԾՐԱԳԻՐԸ

14.10.2017թ.

Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացավ Եվրոպական միության «ՏԵՄՊՈՒՍ. GOVERN» ծրագրի ամփոփիչ համաժողովը, որին ակտիվորեն մասնակցեցին Գավառի պետական համալսարանի պատվիրակները:

ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «ՏԵՄՊՈՒՍ. ՎԵՐԻՏԱՍ» ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

15.10.2017թ.

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ Եվրոպական միության «ՏԵՄՊՈՒՍ. ՎԵՐԻՏԱՍ-Չալքբուրգի սկզբունքների հիման վրա բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում» ծրագրի ամփոփիչ համաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ ներկայացուցիչները:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

17.10.2017թ.

Դիլիջան քաղաքում անցկացվեց ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագիրը կրող 7-րդ աշնանային դպրոցի դասընթացը, որին ակտիվորեն մասնակցեցին ԳՊՀ ուսանողները՝ բուհի պրոռեկտոր, իրավաբանական կլինիկական կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանի ղեկավարությամբ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ «ԿԱՆԹԵՂ» ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

17.10.2017թ.

Օշական գյուղում անցկացվեց ՀՀ գրողների միության կազմակերպած ամենամյա «Կանթեղ» մրցանակաբաշխությունը՝ նվիրված Թարգմանչաց տոնին: «Կանթեղ» մրցանակը տրվում է Սփյուռքի և Հայաստանի լավագույն թարգմանիչներին: Ականավոր հայ թարգմանիչների շարքում էր նաև Գավառի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Արա Հրաչիկի Առաքելյանը:

**ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԵԻ ԱՆԳԵԼ
ԿԱՆԶԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

19.10.2017թ.

ԳՊՀ-ում ձևավորված ավանդույթի համաձայն տեղի ունեցավ ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերով Եվրոպայում սովորած ԳՊՀ ուսանողների հաշվետու- հանդիպումը:

Հանդիպմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, բանասիրական, բնագիտական, հումանիտար մասնագիտությունների և տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողներ, ինչպես նաև Գավառ քաղաքի թիվ 8 միջնակարգ դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

20.10.2017թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ և նույն ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ կայացավ «Առեղծվածների աշխարհում» խորագիրը կրող ինտերակտիվ միջոցառում:

ՇԱՐԱԹՕՐՅԱԿ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

21.10.2017թ.

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանը կազմակերպեց հերթական շաբաթօրյակը՝ «Մաքուր համալսարան» կարգախոսով:

**ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՆԱՐՎԵՍՏԸ՝ ԱՊԱԳԱ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ**

21.10.2017թ.

Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, ԳՊՀ շրջանավարտ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Ղռեջյանի նախաձեռնությամբ կայացավ միջոցառում նվիրված Նոր Բայազետի բնագիտական ժառանգությանը: Միջոցառման նպատակն էր ներկայացնել հայոց ազգագրական շրջաններից մեկի՝ Նոր Բայազետի բնահյուսական ու ազգագրական մշակույթը և նրա դրսևորումները նշանավոր բնագետ-բանահավաքների գրառումներում սկսած 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև մեր օրերը:

**ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ»-ՈՒՄ, ՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

22.10.2017թ.

Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոսներ՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Արմեն Սահակյանի և Արա Բաղինյանի նախաձեռնությամբ, ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ունեցան մեկօրյա ուսումնական այց «Նաիրի

Ինշուրանս» ապահովագրական ընկերություն և Ռուսական գիտության և մշակույթի կենտրոն:

ՄԻՇԵԼ ՄՈՆՏԵՆԻ ԷՍՍԵՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

22.10.2017թ.

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Առաքելյանի և փոխդեկան Ռուզաննա Սարգսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրքի քննարկում:

Քննարկման առարկան ֆրանսիացի գրող, քաղաքական գործիչ, փիլիսոփա և էսսեիզմի հիմնադիր Միշել դը Մոնտենի «Էսսեններ» գիրքն էր:

ՂՐԻՄԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԳՊՀ-ՈՒՄ

25.10.2017թ.

ԳՊՀ-ն հյուրընկալեց բարեշնորհ Գևորգ-Վահան սարկավագ Գևորգյանին, Սանկտ Պետերբուրգի պետական Էրմիտաժի առաջատար տնտեսագետ Աննա Բարանցևային, Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի «Ջրաբերդ» պաշտոնաթերթի թղթակից Գագիկ Ավետիսյանին: Բարեշնորհը Գավառի պետական համալսարանի պատմագիտական թանգարանին նվիրաբերեց արժեքավոր իրեր, ինչպես նաև հանդես եկավ բաց դասախոսությամբ՝ «Ղրիմահայերը և նրանց մշակութային, հոգևոր-լուսավորչական կյանքը 13-18-րդ դարերում» թեմայով:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

26.10.2017թ.

ԳՊՀ-ում շարունակվեց ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերով Եվրոպայում սովորած ուսանողների հաշվետու-հանդիպումների շարքը: Հաշվետվություններով հանդես եկան Իսպանիայի Ալմերիա համալսարանում սովորած տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառում բաժնի բակալավրիատի երրորդ կուրսի ուսանող Նորայր Սիրունյանը, Ռուսի Անգել Կանչևի անվան համալսարանում ուսումնառած բնագիտական ֆակուլտետի համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Գառնիկ Թոռչյանը, ինչպես նաև նույն ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բակալավրիատի չորրորդ կուրսի ուսանողուհի Գայանե Իսոյանը և երրորդ կուրսի ուսանող Վարդան Մուսոյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՎԵՆԵՏԻԿԻ ԿԱ ՖՈՍԿԱՐԻ ԵՎ ՊԱՎԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

28.10.2017թ.

ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանը հանդես եկավ հաշվետվությամբ՝ Եվրոպական միության պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության «Erasmus Mundus. Hermes» և «Erasmus+» ծրագրերի շրջանակներում Իտալիայի Հանրապետության Վենետիկի Կա Ֆոսկարի և Պավիայի

համալսարաններում իրականացրած դասախոսական և հետազոտական գործունեության վերաբերյալ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔ

01.11.2017թ.

Այսօր Գավառի պետական համալսարանի ակադեմիական քաղաքականության վարչության պետ, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ալինա Ղարիբյանի և փոխդեկան Ռուզաննա Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ «Հովհաննես Թումանյան. մարդ-բանաստեղծը» խորագիրը կրող ցերեկոյթը:

«ԻՆՉ, ՈՐՏԵՂ, ԵՐՔ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄՐՑՈՒՅԹ ԳՊՀ-ՈՒՄ

02.11.2017թ.

ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության և ուսանողական խորհրդի անդամների նախաձեռնությամբ կայացավ «Ի՛նչ, որտե՛ղ, ե՛րբ» ինտելեկտուալ մրցույթը:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

02.11.2017թ.

Հաշվետվություններով հանդես եկան Իսպանիայի Ալմերիա համալսարանում սովորած տնտեսագիտական ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի բակալավրիատի երրորդ կուրսի ուսանող Կորյուն Սարգսյանը, Իսպանիայի Լա Կորունյա համալսարանում սովորած նույն ֆակուլտետի հաշվապահական հաշվառում բաժնի բակալավրիատի երրորդ կուրսի ուսանող Գևորգ Հերգնյանը, ինչպես նաև նույն համալսարանում սովորած Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Սուրեն Ամիրխանյանը:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

03.11.2017թ.

Կարևորելով Արցախի պետական համալսարանի հետ գործակցությունը՝ Գավառի պետական համալսարանը համագործակցության հուշագիր է կնքել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայր բուհի հետ:

ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի անդամները, բուհերի դասախոսներն Արցախի տարբեր զորամասերում հանդես եկան դասախոսություններով, ոգևորիչ ելույթներով:

Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյանը ներկայացրեց դասախոսություն՝ «Հայոց միասնության հաղթանակը» թեմայով:

ՍԻՄՎՈԼԻԶՄԸ ՌՈՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

04.11.2017թ.

ԳՊՀ դասախոս Ալլա Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս՝ «Սիմվոլիզմի տեսությունն ու պրակտիկան ռուսական պոեզիայում» թեմայով, որին

մասնակցում էին ռուսաց լեզվի և գրականության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

**ԿԱՐՄԻՐԳՅՈՂԻ ԹԻՎ 2-ՐԴ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ՝
ԳՊՀ-ՈՒՄ**

09.11.2017թ.

ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալեց ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի թիվ 2-րդ միջնակարգ դպրոցի 9, 11 և 12-րդ դասարանների աշակերտներին՝ ֆիզիկայի և քիմիայի ուսուցիչների ղեկավարությամբ:

Այցելության նպատակը ֆիզիկա և քիմիա առարկաների գործնական աշխատանքների կազմակերպումն էր ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում:

**ԿԱՅԱՑԱՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

09.11.2017թ.

Հաշվետվություններ ներկայացրին Իտալիայի Հանրապետության Հռոմի Սապիենզա համալսարանում սովորած՝ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող, ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը, ինչպես նաև Իսպանիայի Թագավորության Լա Կորունյա համալսարանում ուսանած՝ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտություն բաժնի բակալավրիատի երրորդ կուրսի ուսանողներ Արա Գրիգորյանն ու Հրաչիկ Ապրոյանը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՐԿՐԱԳՆԴԻ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՎԱՅՐԵՐԸ

10.11.2017թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողների մասնակցությամբ կայացավ «Երկրագնդի առեղծվածային վայրերը» խորագիրը կրող միջոցառումը:

Ուսանողները ներկայացրին Ատլանտիդան, Եգիպտական բուրգերը, Անկտարկտիդան, Բերմունդյան եռանկյունին և այլ վայրեր:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻՆ

10.11.2017թ.

ԳՊՀ-ում կայացավ ցերեկույթ՝ նվիրված Էրեբունի Երևանի 2799-ամյակին: Ցերեկույթի նպատակն էր ներկայացնել Էրեբունի Երևանի հիմնադրման պատմությունը, կարևորել նրա դերն ու նշանակությունը համայն հայության միավորման գործում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՕՐԵՐ «ԷՐԱՋՄՈՒՄ+» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

11.11.2017թ.

Երևանի Վ. Բոյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում անցկացվեցին Եվրոպական Միության Էրազմուս+ ծրագրի ամենամյա տեղեկատվական օրերը, որոնց ընթացքում ներկայացվեցին «Էրազմուս+» բարձրագույն կրթության միջազգային ծրագրերի (Կարողությունների զարգացումը բարձրագույն կրթության ոլորտում, Կրեդիտային շարժունություն, «Էրազմուս Մունդուս» համատեղ մագիստրոսական

ծրագրեր և ժան Մոնե գործողություններ) վերաբերյալ մանրամասներ: Տեղեկատվական օրերին մասնակցեց ԳՊՀ պատվիրակությունը:

ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

11.11.2017թ.

ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի թիվ մեկ և Գավառի թիվ երկրորդ միջնակարգ դպրոցի 9, 10, 11 և 12-րդ դասարանների աշակերտներին:

Ճանաչողական այցը «ԳՊՀ-դպրոց» համագործակցության ծրագրի շրջանակում էր:

Բնագիտության լաբորատորիայի վարիչ Թեհմինե Խաչիկյանի ուղեկցությամբ աշակերտները շրջեցին լաբորատորիայում, ծանոթացան ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, քարտեզագրություն առարկաներին առնչվող սարքավորումներին, կատարեցին հետաքրքիր և ուսուցողական փորձեր:

«ԿՅԱՆՔՆ ԱՌԱՆՑ ԾԵՐՈՒԹՅԱՆ»

11.11.2017թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի առողջ ապրելակերպի ամբիոնի ակադեմիական խորհրդատու Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կայացավ ուսանողական գիտաժողով՝ «Կյանքն առանց ծերության» խորագրով:

Գիտաժողովը նվիրված էր ԳՊՀ պատվավոր պրոֆեսոր, կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի հիմնադիր վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացի Արմեն Արշալույսի Սիմոնյանի ծննդյան 85-րդ ամյակին և գիտական ու մանկավարժական գործունեության 60-ամյակին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

12.11.2017թ.

ԳՊՀ-ում տեղի ունեցան ավանդական հանդիպումներ 2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետ ընդունված առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ:

Հանգամանալից ներկայացվեցին կրեդիտային համակարգում կրթության սկզբունքները, ուսանողների կարգապահական կանոնները, սովորողներին առաջադրվող պահանջները:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՆԴՐՈ ԱՌԱՐԿԱ

16.11.2017թ.

ԳՊՀ-ն «We Share» ծրագրի շրջանակում հյուրընկալեց «Education.U.S.A Հայաստան» կրթական խորհրդատու Շուշաննա Աբովյանին և համալսարանների կառավարման աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանավարտ Արմենուհի Ավագյանին, ով վարեց բաց դասախոսություն՝ «Ներառական կրթություն» թեմայով:

ԳՊՀ Ուսանողների ԱՅՑԸ ՀՀ ԳԱԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

17.11.2017թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեղագործական քիմիա բաժնի ուսանողները կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, դոցենտ Կարինե Ավետիսյանի ղեկավարությամբ այցելեցին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ և անցկացրին մեկօրյա հետաքրքիր պրակտիկա:

ԳՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ԵՐԴՈՒՄԸ

19.11.2017թ.

Ավանդույթի համաձայն Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի կիսանդրու մոտ բուռի տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսեցիներին հանձնվեցին ստուգման գրքույկներ և ուսանողական տոմսեր:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ «ERASMUS+REFINE» ԾՐԱԳԻՐԸ

24.11.2017թ.

Ավստրիայի Հանրապետության Վիեննայի կիրառական գիտությունների համալսարանում կայացավ Եվրոպական միության «ERASMUS+REFINE-Հայաստանում և Մոլդովայում «Ֆինանսներ» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի բարեփոխում» ծրագրի մեկնարկային աշխատաժողովը: Ծրագրին անդամակցում է Գավառի պետական համալսարանը:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

24.11.2017թ.

Գավառի պետական համալսարանի և Գավառի երկրագիտական թանգարանի միջև համագործակցության ծրագրի շրջանակում թանգարանում կայացավ «Ճանաչե՛նք ազգային արժեքները» խորագրով գիտաժողով:

ԳՊՀ Ուսանողը՝ ՀՌՈՄԻ ՍԱՊԻԵՆՋԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

29.11.2017թ.

ԳՊՀ-ում տեղի ունեցավ ակադեմիական շարժունության միջազգային ծրագրով Իտալիայի Հանրապետության Հռոմ քաղաքի Սապիենզա համալսարանում սովորած ԳՊՀ ուսանողների հերթական հաշվետվությունը:

ԱՇՆԱՆ ՆՈՏԱՆԵՐ

01.12.2017թ.

Բուռի տնտեսագիտական ֆակուլտետի նախաձեռնությամբ կայացավ «Աշնան նոտաներ» խորագիրը կրող քնարական ցերեկույթը: Ստեղծվել էր գեղեցիկ աշնանային մթնոլորտ, որտեղ ներկաներն իրենց զգում էին աշնանային խորհրդավոր անտառում՝ թռչունների սքանչելի դայլայի, գետակի քչքչոցի, տերևաթափի, ծառերի սոսափյունի, խարույկի ջերմության և հոգեպարար աշնանային տրամադրության ուղեկցությամբ:

«ԲԵՈՎՈՒՆՖ» ԱՆԳԼՈՒՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԷՊԻԿԱԿԱՆ ՊՈԵՄԸ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

02.12.2017թ.

ԳՊՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս Լիլիթ Թոռչյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս՝ «Բեովուֆ» անգլո-սաքսոնական էպիկական պոեմի և Անգլիայի հին ավանդույթների շուրջ» թեմայով, որն անցկացվեց անգլերեն լեզվով:

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇՑԵՐԵԿՈՒՅԹ

02.12.2017թ.

ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանի նախաձեռնությամբ կայացավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Հայաստանի և Արցախի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի ծննդյան 60-ամյակին:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

03.12.2017թ.

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացման համալիր ծրագրի շրջանակներում բուհում անցկացվեց գիտական սեմինար՝ «Հայոց լեզվի արդի հիմնախնդիրները» թեմայով, որը վարում էր Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր պարոն Վիկտոր Կատվայանը: Նա անդրադարձավ հայոց լեզվի պատմության մեջ առկա որոշ վիճակահարույց հարցերի, որոնք այսօր էլ գտնվում են լեզվաբանների ուշադրության կենտրոնում:

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ 29 ՏԱՐԻ ԱՆՑ

07.12.2017թ.

Սպիտակի երկրաշարժի 29-րդ տարելիցի օրը Գավառի պետական համալսարանում դասերը մեկնարկեցին մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ երկրաշարժի զոհերի: Համալսարանը հյուրընկալեց ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության սեյսմիկ պաշտպանության ծառայության աշխատակիցներին, ովքեր ուսանողների համար դասախոսություններ կարդացին սեյսմիկ վտանգի բացահայտման եղանակների և երկրաշարժի ծանր հետևանքներից պաշտպանվելու կանոնների վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

07.12.2017թ.

ԳՊՀ-ում կայացավ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը:

Քննարկմանը ներկա էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բադայանը, Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանների դպրոցների տնօրեններ,

փոխտնօրեններ, ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ:

ՀԱՅ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ...

08.12.2017թ.

Համալսարանի դասախոս, ԳՊՀ շրջանավարտ բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Ղեջյանի և նույն ֆակուլտետի փոխդեկան Ռուզաննա Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ միջոցառում՝ նվիրված հայ հնագույն առասպելներին:

Միջոցառման նպատակն էր ներկայացնել հայկական ազգային ավանդության մեջ ձևավորված առասպելաբանական հարուստ ժառանգությունը, հայ ժողովրդի առասպելների սյուժեները, կերպարների տիպերն ու տիպաբանական խմբերը և դրանց վաղնջական նախահիմքերը:

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ՝ ԵՄ «ԷՐԱՉՄՈՒՍ+ DOCMEN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

09.12.2017թ.

Եվրոպական միության «Էրազմոս+ DOCMEN» (<http://www.docmen-project.pl/>) ծրագրի շրջանակում անցկացվեցին վարպետության դասեր Իսրայելի Հոլոնի տեխնոլոգիական կենտրոնի ներկայացուցիչ Մոթի Հարիդիմի և Գերմանիայի Հանրապետության Բեռլինի տեխնիկական համալսարանի դասախոս Յուրի Պլոտկինի կողմից:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

09.12.2017թ.

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Ռուզաննա Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս՝ «Եվրոպական լեզվական թղթապանակը՝ որպես գնահատման այլընտրանքային գործիք» թեմայով:

«ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ»

09.12.2017թ.

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Աննա Բալագոզյանի նախաձեռնությամբ կայացավ ցերեկույթ՝ նվիրված 19-21-րդ դարերի ընթացքում հայ և անգլիացի կանանց սոցիալական կարգավիճակի փոփոխություններին: Ուսանողները վարժ անգլերենով և հայերենով ներկայացրին 19-21-րդ դարերի սոցիալական ձեռքբերումները՝ համեմատելով հայ և անգլիացի կանանց աշխարհայացքը, մտածելակերպը, վարքուբարքը, ընտանեկան կարգավիճակը, կրթության և աշխատանքի հնարավորությունները, նիստուկացը:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

09.12.2017թ.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ակադեմիական խորհրդատու Աստղիկ Ավետիսյանի և բուհի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացավ Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկա վիճակի և զարգացման միտումների վերաբերյալ ուսանողական գիտաժողով:

ԹԱՆԿ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ՝ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱՅԻՑ

10.12.2017թ.

Գավառի պետական համալսարանի՝ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական, հնագիտական թանգարանը ստացավ թանկ մատուցներ՝ 2016 թվականի ապրիլյան քառօրյայից: Նվիրատվությունը կատարեց «Գեղամա աշխարհ» թերթի նվիրյալ խմբագիր, իսկական մտավորական պարոն Խոսրով Խլղաթյանը, ով ապրիլյան հոգեցունց պատերազմից հետո մեկնել է Արցախի Հանրապետություն, եղել առաջնագծում և մեկիկ-մեկիկ հավաքել հայ քաջարի զինվորների կրակած պարկուճներն ու թշնամու հրետանու արկի բեկորները այն մարտական դիրքերից, որտեղ ոսոխի դեմ անձնագրհաբար մարտնչել ու նահատակվել են Արմենակ Ուրֆանյանը, Ռոբերտ Աբաջյանը, Քյարամ Սլոյանը, Անդրանիկ Զոհրաբյանը:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

10.12.2017թ.

Կոմիտաս վարդապետին նվիրված հուշ-ցերեկոյթի ընթացքում ուսանողները հանդես եկան զեկուցումներով՝ Կոմիտասի անձի, գործունեության, անձնական կյանքի հոգեցունց դրվագների և հայ ժողովրդին ու հայ երաժշտությանը մատուցած անգնահատելի ծառայությունների մասին:

«ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»՝ ԶԱՆԻ ՌՈՂԱՐԻ

13.12.2017թ.

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործավար, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Օլգա Ղազարյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս-քննարկում՝ նվիրված իտալացի մանկագիր, մանկավարժ Զանի Ռոդարիի մանկավարժական հայացքների ուսումնասիրմանը, մասնավորապես, «Ստեղծագործական երևակայության քերականություն» աշխատության վերլուծությանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳՊՀ-ԿԱՐՈՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

13.12.2017թ.

Եվրոպական միության «Էրազմուս +» միջազգային ակադեմիական շարժումության ծրագրի շրջանակում համագործակցում են Գավառի պետական համալսարանը և Հունգարիայի Հանրապետության Կարոլի Էսթերհազի անվան կիրառական գիտությունների համալսարանը:

ԳՊՀ-ում կայացավ հանդիպում Կարոլի կիրառական գիտությունների համալսարանի պրոռեկտոր Զոլթան Բուջդոսոյի հետ:

ՄՈՒԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԶԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՁ

15.12.2017թ.

Համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի և կենսաբանություն բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի

ուսանողների նախաձեռնությամբ կայացավ «Մոլեկուլային գենետիկայի ձեռքբերումները և ներդրումը բժշկության մեջ» խորագիրը կրող գիտաժողով:

ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ 20-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲՈՒՇԻ ՀԻՄՆԱԴԻՐ-ՌԵԿՏՈՐ ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

16.12.2017թ.

ԳՊՀ-ում կայացավ բուհի ամենամյա 20-րդ գիտաժողովը՝ նվիրված ԳՊՀ հիմնադիր-ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 90-ամյակին:

Գիտաժողովը բացեց ՀՀ Սփյուռքի նախարար, ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Հրանուշ Հակոբյանը: Տիկին Հակոբյանը կարևորեց քսանհինգամյա բուհում քսան տարի շարունակ անխախտ պարբերականությամբ գիտաժողովների կազմակերպումը, դասախոսների կողմից գիտահետազոտական գործունեության ծավալումը, քանզի համալսարանի առաքելությունն է ոչ միայն երիտասարդ սերնդին գիտելիքի, կարողությունների, արժեքների և օգտակար սոցիալական փորձի փոխանցումը, այլև նոր գիտելիքի ստեղծումը:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

20.12.2017թ.

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի նախաձեռնությամբ կայացավ սեմինար-քննարկում 2018թ.-ին ուժի մեջ մտնող ՀՀ հարկային օրենսգրքի հիմնական դրույթների վերաբերյալ:

ԱՌԹՍՈՐՍԻՆԳՐ ԲԻԶՆԵՍՈՒՄ

22.12.2017թ.

Համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Սոնա Բագոյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս-քննարկում «Առօրսուսինգը բիզնեսում» թեմայով:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ԽՆԴՐՈ ԱՌԱՐԿԱ

22.12.2017թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալել էր Հայաստանում Խաղաղության կորպուսի գլխավոր տնօրեն Սոնի Լյունին, ով նաև Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչներից է, ԳՊՀ խաղաղության կորպուսի նախկին կամավոր Փոլ Ուիթենին և գործարար առաջնորդ, անգլերեն լեզվի մասնագետ Ռուզան Մկրտչյանին: Այցելության նպատակը ուսանողների հետ հետբուհական զբաղվածության հիմնահարցերի վերաբերյալ սեմինար-քննարկում անցկացնելն էր: Բանախոսներն անդրադարձան այն հմտություններին, որոնք անհրաժեշտ են ընտրած մասնագիտությամբ աշխատելու համար, ընդգծեցին որակյալ բարձրագույն մասնագիտական կրթության դերը մարդու կյանքում՝ կարևորելով աշխատասիրությունն ու նպատակասլացությունը ապագայի կերտման և անձի ինքնահաստատման գործում:

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

22.12.2017թ.

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Վարսիկ Ներսիսյանի նախաձեռնությամբ կայացավ բաց-դաս՝ «Հայ լեզվաբանության պատմությունից» խորագրով: Բաց դասի նպատակն էր ներկայացնել հայ լեզվաբանական մտքի պատմությունը 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի վերջ:

ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻՎՎՈՐՈՒՄ

23.12.2017թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) նախագահ Գագիկ Մակարյանին և ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի ու Ճամբարակի տարածաշրջանների տարբեր ոլորտներ ներկայացնող 45 գործատուների: Կայացած մեկնարկային աշխատաժողովի նպատակը ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի գործատուների հանրապետական միության տարածքային միավորման ստեղծումն էր:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

24.12.2017թ.

Համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի խորհրդատու Նարինե Նալբանդյանի նախաձեռնությամբ կայացավ «Սուրբ ծննդյան տոները Անգլիայում և Գերմանիայում» խորագիրը կրող ցերեկոյթը:

ՆՈՐ ՏԱՐԻ, ԳԱԼՈՒՍԴ ԲԱՐԻ

29.12.2017թ.

2018 թվականը բարձր տրամադրությամբ դիմավորելու համար ԳՊՀ-ում կազմակերպվեց գեղեցիկ անակնկալներով լի ամանորյա ցերեկոյթ, որի մասնակիցներն հենց իրենք՝ համալսարանականներն էին:

ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԵՑ ՀՐԱՆՏ ՀԱԿՈՐՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ, ԵՎ ՆՐԱ ՊԱՏՎԻՆ ԼՍԱՐԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԵՑ

29.01.2018թ.

Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում տեղի ունեցավ հուզիչ և խորհրդանշական արարողություն՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի պատվին իր հարազատ ֆակուլտետում լսարան անվանակոչվեց, և տեղադրվեց կիսանդրին:

Լսարանի բացումը կատարեցին Երևանի պետական համալսարանի ռեկտոր պարոն Արամ Սիմոնյանը, Գավառի պետական համալսարանի ռեկտոր տիկին Ռուզաննա Հակոբյանը և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տեր Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանը:

«ՈՒՄ ԷՐ ՓՆՏՐՈՒՄ ԴԻՈԳԵՆԵՍԸ...»

10.02.2018թ.

Գավառի պետական համալսարանի «Վերնատուն» ակումբի շրջանակներում կայացավ ցերեկոյթ՝ «Ու՛մ էր փնտրում Դիոգենեսը...» խորագրով, նվիրված Մարդուն և Ուսուցչին:

Ցերեկոյթի նպատակն էր կարծիքների փոխանակման և քննարկումների միջոցով բացահայտել մարդու էության խորքային շերտերը, հոգևոր, բարոյական արժեքները, ձգտումներն ու աշխարհայացքը, ինչպես նաև կարևորել ուսուցչի դերը անհատի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ «ERASMUS+ AbioNet» ԾՐԱԳԻՐԸ

13.02.2018թ.

Հունաստանի Սալոնիկ քաղաքում Եվրոպական միության «ERASMUS+ — AbioNet, «Կենսարդյունաբերության գիտության և տեխնոլոգիաների գերազանցության հայկական ցանցի ձևավորում» ծրագրի շրջանակներում կայացավ ծրագրի մեկնարկային աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ Անահիտ Մարգարյանն ու Մարինե Հովհաննիսյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

13.02.2018թ.

ՀՀ կառավարության որոշմամբ արդեն հինգ տարի անցկացվում է «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթը: Այն կազմակերպվում է երկու փուլով՝ ներբուհական և հանրապետական (միջբուհական)՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ըստ հետևյալ ոլորտների. բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ՝ ՏՀՏ), բժշկություն, հումանիտար գիտություններ, հասարակագիտություն, ճարտարագիտություն, հայագիտություն, մշակույթ-սպորտ:

Գավառի պետական համալսարանի «Լավագույն ուսանող» ներբուհական մրցույթի հաղթող ուսանողները մասնակցեցին հանրապետական մրցույթին, և հինգ ուսանող հաղթող ճանաչվեց:

ԳՊՀ-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՋՈՂԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՎ ԿԱՅԱՑԱՎ «ԷՄՓԻՐԵՅ» ԽՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ

17.02.2018թ.

Գեղարքունիքի մարզում տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի բացմանն ընդառաջ՝ Գավառի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ «TED talks» միջոցառումը: «Tedx» հարթակի նպատակն է տարածել առաջատար գաղափարներ՝ ներկայացնելով կայացած անձանց հաջողության պատմություններ: Կայացավ նաև «Էմփիրեյ» խմբի համերգը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԵՄ «ԷՐԱՋՄՈՒՍ+SMART» ԾՐԱԳԻՐԸ

20.02.2018թ.

Հունաստանի Սալոնիկ քաղաքում Եվրոպական Միության «SMART-Ուսանող-ձեռնարկություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացում՝ «խելացի սրճարանների» (smart cafes) միջոցով» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ ծրագրի մեկնարկային աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանն ու Արտաքին կապերի և լրատվության բաժնի ավագ մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՐԿԱ

21.02.2018թ.

ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կայացան Խորհրդարանական լսումներ՝ «Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն ու հիմնախնդիրները» թեմայով: Խորհրդարանական լսումների ընթացքում ելույթով հանդես եկավ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ով խոսեց օրինագծի նորմատիվ բովանդակության, կարգավորման առարկայի և նպատակների, հետազոտական գործունեության իրավական հիմքերի, գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգի՝ մասնագիտության դոկտորի (գիտությունների թեկնածուի) և գիտության դոկտորի աստիճանների, բուհերի կառավարման համակարգի և այլ հիմնախնդիրների մասին՝ ներկայացնելով համապատասխան օրենսդրական առաջարկություններ՝ միտված օրինագծում նախատեսված իրավակարգավորումների հստակեցմանը:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ ԳՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25.02.2018թ.

Այսօր ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ Կորյուն Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ սեմինար-քննարկում՝ նվիրված գիտական հոդված գրելու կարևորությանը, բովանդակային և տեխնիկական չափանիշներին:

ՄԵՐ ՍՐՏԻ ԵՎ ՀՈԳՈՒ ԼԵՂՈՒՆ ՀԱՅԵՐԵՆՆ Է

25.02.2018թ.

Այսօր ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի փոխդեկան Ռուզաննա Սարգսյանի նախաձեռնությամբ կայացավ «Մեր սրտի լեզուն հայերենն է» խորագիրը կրող ցերեկույթը, որին մասնակցում էին հայոց լեզու բաժնի ուսանողները: Ուսանողները ներկայացրին մաշտոցյան այբուբենի խորհուրդը, հայոց լեզվի զարգացման փուլերը՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով:

«ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ»

28.02.2018թ.

Գավառի պետական համալսարանի և «Ֆրիդրիխ Էբերտ» հայ-գերմանական հիմնադրամի միջև համագործակցության ծրագրի շրջանակում բուհում կայացավ սեմինար-քննարկում՝ «Տեղական ժողովրդավարությունը ՀՀ Գեղարքունիքի մարզում» թեմայով: Սեմինարին մասնակցեցին Գավառ քաղաքի համայնքի ավագանու անդամներ, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, տարբեր համայնքներ ներկայացնող ԳՊՀ ուսանողներ և դասախոսներ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԱԿԻՐ

02.03.2018թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի սերվիս ամբիոնի պրոֆեսոր Արամայիս Ռուստամի Ավագյանը պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով՝ երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության գործում ներդրած ավանդի ու ազգանպաստ գիտամանկավարժական գործունեության համար:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

03.03.2018թ.

ԳՊՀ-ում կայացավ վերապատրաստման դասընթաց՝ «Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման իրավական հիմքերը և կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով, որը վարում էր Գավառի պետական համալսարանի դասախոս, Կրթության ազգային ինստիտուտի աշխատակից Սաթենիկ Հայթյանը:

ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ

10.03.2018թ.

Գավառի պետական համալսարանում մեկնարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 12-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված առարկայական օլիմպիադաների շարքը:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

22.03.2018թ.

Համալսարանում կայացավ սեմինար-քննարկում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի արդի հիմնախնդիրներին, կրթության նորմատիվ իրավական հիմքերին, որակյալ կրթության ապահովման գործում երիտասարդների դերակատարությանը:

Սեմինար-քննարկումը վարեց ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Հակոբյանը, ով բովանդակալից շնորհանդեսի տեսքով ներկայացրեց

կրթության առաքելությունը, կրթության ազդեցությունը անհատի կայացման, գիտելիքների, կարողությունների և արժեքային կողմնորոշիչների ձևավորման, կյանքի որակի ապահովման, հասարակության և պետության զարգացման ու առաջընթացի գործում:

ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ԿՈՇԻՑԵԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

25.03.2018թ.

Գավառի պետական համալսարանն անդամակցում է Եվրոպական միության «Էրազմուս+Ռիֆայն» ծրագրին, որի շրջանակում Սլովակիայի Կոշիցեի տեխնիկական համալսարանում կայացավ առաջին աշխատաժողովը, որին մասնակցեցին բուհի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հակոբ Ղուլոյանն ու կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Աստղիկ Հովեյանը:

«ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆ»-Ը՝ ԳՊՀ-ՈՒՄ

28.03.2018թ.

Համալսարանը հյուրընկալեց «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի տիկնիկային խմբի սաներին: Նրանք հանդես են եկել «Տիկնիկային թատերամիս» նախաձեռնությամբ, որի նպատակն է ներկայացնել կենտրոնի տիկնիկագործության խմբակի աշխատանքը ինտերակտիվ ներկայացման միջոցով:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

28.03.2018թ.

Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակում Գավառի պետական համալսարանում կայացավ ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության սահմանադրական շինարարության համեմատա-իրավական վերլուծությանը:

ՄԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

29.03.2018թ.

Հայաստանի Հանրապետությունում Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումների շրջանակում ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում կայացավ «Մի աշտարակի պատմություն» խորագիրը կրող ցերեկույթը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ

01.04.2018թ.

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Աննա Բալագոզյանի նախաձեռնությամբ, անգլերեն լեզվի և գրականության բաժնի 1-ին կուրսի ուսանողների մասնակցությամբ կայացավ ցերեկույթ՝ նվիրված Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին: Միջոցառման ընթացքում ուսանողները հայերեն և անգլերեն լեզուներով ներկայացրին Սուրբ Զատիկի տոնակատարության ավանդույթը, բնութագրական առանձնահատկությունները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները Հայաստանում, Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում:

Յուրաքանչյուր երկրի ավանդույթները ներկայացնելուց հետո միջոցառման մասնակից-ուսանողները ներկաներին ուղղեցին հարցեր Ձատկի տոնի վերաբերյալ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

05.04.2018թ.

Համալսարանում կայացավ ուսանողական գիտաժողով նվիրված Արցախյան շարժման 30-ամյակին: Գիտաժողովին մասնակցեցին բուհի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության բաժնի բակալավիրատի և մագիստրատուրայի ուսանողները:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

05.04.2018թ.

«Միասին՝ հանուն Հայաստանի — Together 4 Armenia» հարթակի շրջանակներում Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց «SPACE TRAVEL» կազմակերպության գործադիր տնօրեն Արթուր Մուրադյանին, «Առաքելություն՝ Արևելք» կազմակերպության ծրագրի ղեկավար Նոնա Գալստյանին, «UNICEF»-ի հայաստանյան ներկայացուցիչ Մերի Դագեսյանին: Քննարկվեցին ՀՀ-ում և, մասնավորապես, Գեղարքունիքի մարզում գրոսաշրջության զարգացման հեռանկարները:

ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ «ՀԱՂԹԱԿԱՆ ԶԱՀԸ՝ ՍԵՐՆԴԵՍԵՐՈՒՆԴ» ԽՈՐԱԳՐՈՎ

06.04.2018թ.

«ԳՊՀ Վերնատուն» ակումբի հիմնադիրներ Սիրուշ Սարգսյանն ու Հովհաննես Օհանյանը ազդարարեցին «Հաղթական ջախը՝ սերնդեսերունդ» խորագիրը կրող ցերեկույթի մեկնարկը:

Ցերեկույթը նվիրված էր Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին և ապրիլյան քառօրյա պատերազմի երկրորդ տարելիցին:

ԳՊՀ ՊՐՈՌԵԿՏՈՐԸ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՈՐՐՈՎԱ ԳՈՒՐԶԻՆԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

11.04.2018թ.

2018թ. ապրիլի 3-ից 8-ը Լեհաստանի Հանրապետության Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրային գրասենյակի նախաձեռնությամբ Լեհաստանի Դոբրովա Գուրչինա համալսարանում կայացավ աշխատաժողով, որին մասնակցեց պրոռեկտոր Արսեն Ապրոյանը:

ՋՐԻՄՈՒՌՆԵՐԻ ԱՆՍՊԱՌ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ

12.04.2018թ.

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ «Ջրիմուռների անսպառ բազմազանությունը» խորագիրը կրող ուսանողական գիտաժողով՝ նվիրված ավտոտրոֆ,

ստորակարգ թալումային օրգանիզմների՝ ջրիմուռների տեսակային բազմազանության, կառուցվածքա-ֆունկցիոնալ առանձնահատկությունների, հետազոտման մեթոդների, բնության մեջ և մարդու կյանքում ունեցած դերի և նշանակության բացահայտմանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

15.04.2018թ.

Արցախի պետական համալսարանում կայացավ Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված համահայկական ուսանողական ֆորում և գիտաժողով, որին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ավելի քան 100 ուսանողներ: ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող Կորյուն Սարգսյանը մասնակցեց ուսանողական ֆորումին, նույն ֆակուլտետի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող Վահե Հակոբյանը, ֆինանսներ բաժնի 4-րդ կուրսի ուսանող Ռաֆիկ Մարտիրոսյանը, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի 2-րդ կուրսի ուսանող Վահե Գոզեյանը մասնակցեցին գիտաժողովին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ

17.04.2018թ.

Մեսրոպ Մաշտոցի անվան «Մատենադարան» հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում կայացավ որակի ապահովման 4-րդ ֆորումը, որը կրում է «Կրթություն և մասնագետ . մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» խորագիրը: Երկօրյա համաժողովի կազմակերպիչն է մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը:

Ֆորումին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի վարիչ Անուշ Մայիլյանը, բաժնի մասնագետներ Մարիամ Նախրատյանը և Հեղինե Դանոյանը, բուհի ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը, պատմության ամբիոնի դասախոս Քանաքարա Հայրապետյանը:

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

22.04.2018թ.

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված 5-րդ միջազգային գիտաժողովին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Գավառի պետական համալսարանի ուսանողները:

Միջազգային գիտաժողովը նվիրված էր Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրման 100-ամյակին:

**ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՌՈՒՆԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

03.05.2018թ.

ԳՊՀ-ում Եվրոպական միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում տեղի ունեցավ բաց դասախոսություն, որը վարեցին Իսպանիայի Թագավորության Կոռունա համալսարանի դասախոսներ Օանտա Ալեքսանդրա Գարրիելան և Արտակ Մկրտիչյանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԿԵՆՍԱՐԺՇԿՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

10.05.2018թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու Լյուդմիլա Առաքելյանի նախաձեռնությամբ կայացավ բաց դաս՝ նվիրված Ժամանակակից կենսաբժշկությանը վերաբերող որոշ հարցերի:

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

12.05.2018թ.

Գավառի պետական համալսարանի ուսանողների նախաձեռնությամբ ընթերցասրահում կայացավ գերմանալեզու գրող Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխություն», Ֆրանսիացի նշանավոր արձակագիր Ալբեր Բամյուի «Ժանտախտը», ամերիկացի գրողներ Ջերոմ Դեյվիդ Սելինջերի «Տարեկանի արտում, անդունդի եզրին» և Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործությունների ներկայացում-վերլուծություն՝ «Գրքերի աշխարհում» խորագրով:

**ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻՆ**

17.05.2018թ.

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի ակադեմիական խորհրդատու Լալա Մկրտչյանի նախաձեռնությամբ կայացավ խաղ-մրցույթ՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության մեկդարյա տարեդարձին և Սարդարապատի հերոսամարտերին:

ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱԿՈՐՅԱՆ. ԳՈՐԾՆ Է ԱՆՄԱՀ

17.05.2018թ.

Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 91-ամյակի կապակցությամբ Սարովան գյուղի մշակույթի պալատում բացվեց Հրանտ Հակոբյանի հիշատակն հավերժացնող հուշաքար:

Հուշաքարի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին նաև Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

18.05.2018թ.

Եվրոպական միության «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հարություն Հարությունյանը, նույն ամբիոնի դասախոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու Արմեն Սահակյանը դասախոսություններով են հանդես եկել Հունգարիայի Հանրապետության Կարոլի Էսթերիազի անվան կիրառական գիտությունների համալսարանում:

ԿԱՅԱՑԱՎ «ԼԻՆԵՈՒՍ-ՊԱԼՄԱ» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ

19.05.2018թ.

Գավառի պետական համալսարանի և Շվեդիայի Թագավորության Կառլ Լինեուսի անվան համալսարանի համագործակցության արդյունքում մշակվեց և հաստատվեց «Լինեուս-Պալմա» գործընկերության ծրագիրը, որի մեկնարկային աշխատաժողովը կայացավ ս. թ. մայիսի 14-ից 17-ը, Լինեուսի համալսարանում: Աշխատաժողովին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԼ ԼԻՆԵՈՒՍԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

06.06.2018թ.

Գավառի պետական համալսարանի և Շվեդիայի Թագավորության Կառլ Լինեուսի անվան համալսարանի միջև 2014 թվականից ծայր առած համագործակցության արդյունքում այսօր ԳՊՀ-ում մեկնարկեց նոր՝ «Լինեուս-Պալմա» ծրագրի եռօրյա աշխատաժողովը:

«Լինեուս Պալմա»-ն երկկողմանի գործընկերության ծրագիր է, որը ֆինանսավորվում է Շվեդիայի Թագավորության կառավարության կողմից: Ծրագրի նպատակն է խթանել շվեդական համալսարանների և այլ պետությունների բուհերի միջև համագործակցությունը, նպաստել դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունությանը, բուհերի վարչական աշխատակազմի կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ապահովել ուսումնական ծրագրերի բարելավում և կրթական համակարգերի զարգացում՝ առաջավոր փորձի ուսումնասիրության և կիրառման հիման վրա:

ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է «GSU MOBILE» ԲՈՒՀԱԿԱՆ ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ

08.06.2018թ.

Գավառի պետական համալսարանը գործարկել է «GSU Mobile» բուհական կրթական բջջային հավելվածը: Եռալեզու բջջային հավելվածը փոխգործակցում է ԳՊՀ պաշտոնական կայքի հետ և հնարավորություն է տալիս մոբայլ հարթակի միջոցով ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն Գավառի պետական համալսարանի մասին: Հավելվածի միջոցով կարելի է հետևել համալսարանական անցուդարձին, ծանոթանալ դասացուցակներին, քննաշրջանի

և լուծարային շրջանի ժամանակացույցերին, օգտվել համալսարանի կողմից տրամադրվող ծառայություններից, ինչպես նաև ստանալ տարբեր ծանուցումներ անմիջապես հեռախոսի միջավայրում: Հավելվածում հասանելի է նաև ԳՊՀ հեռախոսահամարների տեղակատում, ինչը թույլ է տալիս անմիջապես հեռախոսով զանգ կատարել: Հավելվածը մշակվել է «Luseen Mobile» ընկերության հետ համագործակցության շրջանակներում՝ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի մասնակցությամբ:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

10.06.2018թ.

Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ նախագահի մրցանակների հանձնման արարողություն: Մրցանակները շնորհվեցին գիտության, արվեստի և գրականության ոլորտներ ներկայացնող այն գործիչներին, որոնք կարևոր ներդրում են ունեցել նշված ոլորտների զարգացման ու առաջընթացի մեջ:

«Թարգմանական գրականություն» անվանակարգում ակնառու նվաճումների համար ՀՀ նախագահի մրցանակին արժանացավ Գավառի պետական համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Հրաչիկի Առաքելյանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

24.06.2018թ.

Գավառի պետական համալսարանը հյուրընկալեց «Զինիշյան» հիշատակի հիմնադրամի «Ակտիվ երիտասարդները հանուն փոփոխության. 2016-2018 թթ.» ծրագրի շրջանակում իրականացվող «Երիտասարդ առաջնորդների ճամբար» նախաձեռնության մասնակիցներին:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը փոխներգործուն մեթոդների կիրառմամբ վարեց դաս՝ նվիրված մարդու իրավունքների հասկացությանն ու էությանը, իրավունքների դասակարգմանը, մարդու իրավունքների պաշտպանության ազգային (ներպետական) և միջազգային-իրավական երաշխիքներին և կառուցակարգերին:

ԲԱՐԻ՝ ԵՐԹ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ

21-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ

05.07.2018թ.

Ավանդույթի համաձայն հուլիսի 5-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը, Գավառի պետական համալսարանում շնորհվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմները: 25-ամյա բուիը կյանք ճանապարհեց շրջանավարտների 21-րդ սերնդին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ

ՀԵՏ

26.08.2018թ.

Ավելի քան քառորդդարյա պատմություն ունեցող Գավառի պետական համալսարանն ունի ձևավորված ավանդույթներ, որոնց շարքում է յուրաքանչյուր ուսումնական տարվա

մեկնարկից առաջ բուհի առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ հանդիպման կազմակերպումը: Համալսարանում կայացավ 2018-2019 ուսումնական տարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքներով ԳՊՀ առաջին կուրսեր ընդունված ուսանողների և նրանց ծնողների հետ հանդիպումը:

**Ն. Ա. Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	Ծառայողական	Էլեկտրոնային փոստի հասցե
ԳՊՀ-ի Խորհրդի նախագահ Հակոբյան Հրանտի Հրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	hranush.hranti@gmail.com
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կոտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	a.gharibyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Սինանյան Արեգ Սամվելի	0-60-46-12-60	a.sinanyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	0-60-46-12-40	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	m.gareyan@gsu.am
Որակի ապահովման բաժնի վարիչ Մայիլյան Անուշ Տոիկի	0-60-46-12-43	a.mayilyan@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Ավետիսյան Վարազդատ Կորյունի	0-60-46-12-56	v.avetisyan@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	g.muradyan@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	l.sirunyan@gsu.am
Ավագ պարեն Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	16
Միջազգային համագործակցություն.....	49
Դասախոսների գործուղումներ.....	92
Ուսումնագիտական աշխատանքներ.....	98
Ֆինանսական վերլուծություն.....	115
Բանասիրական ֆակուլտետ.....	130
Բնագիտական ֆակուլտետ.....	147
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	164
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	182
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	211
Ակադեմիական քաղաքականության վարչություն.....	217
Որակի ապահովման բաժին.....	226
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին	232
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.....	237
ԳՊՀ գրադարան	240
ԳՊՀ իրավաբանական կլինիկա.....	244
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	247
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն.....	248
Տնտեսատեխնիկական գործունեություն.....	251
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	256
Տեղեկատու.....	281

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation	3
General Information about the University.....	16
International Cooperation.....	49
Business Trips of the Academic Staff.....	92
Educational and Scientific Activities.....	98
Financial analysis.....	115
Faculty of Philology.....	130
Faculty of Natural Sciences.....	147
Faculty of Humanities.....	164
Faculty of Economics.....	182
Faculty of Part-Time Education.....	211
Academic Policy Department.....	217
Quality Assurance Department.....	226
GSU Foreign Relations and Information Department.....	232
Information Technology Department.....	237
GSU Library.....	240
GSU Legal Clinic.....	244
GSU Trade Union.....	247
Student’s Council and Student Scientific Society.....	248
Economic and Technological activity.....	251
Memorable events of GSU.....	256
Information leaflet.....	281

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

**2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,**

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT
OF THE 2017-2018 ACADEMIC YEAR,
SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ

Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU

Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am